




831

L II-5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Բ

№ 1 1891

ՅՈՒՆԻՑԻ

1891 № 1

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿՐԻՏԻ

1 ԽՄԲ.	3 «Մուրճ» ի բովանդակութիւնը 1890 թ.
2 ԱՐԱՄԽՈՅՆԵԱՆՑ, Ա.ԻԵՏԻՓ.	6 Յառաջզիմութեան պայմաններ:
3 ՄԱՆՈՒԵԼԵՎՈՆՑ, Լ.ԵԽՈՆ	16 Սեր նոր բանաստեղծներին (բան):
4 ՄԱՐԴԻՍԵԱՆ, Մ.	17 Հեղինէ (վէպ, երկրոր մասն):
5 ՀԵՅՆԵՐց ԲԱԼՈՒԴՎԵԱՆ,	46 Երեք բանաստ.
6 ՆԱՄՄՈՒԵՅՈՆ, Ա.	48 Մինասի կղը:
7 ԱԱԴՐԵԼԵՅՈՆ, Յ.	57 Անաստագահութիւնը կոմիտասում:
8 ՏՈՒՖՆ, ՄԱՐԿ	63 Խմ առաջն զրական փորձր:
9 "	67 Խմ ժամացոցի արկածքները:
10 ԱԹԱԶԵՅՈՆՑ, ՍՈՒՐԵՆ	72 *** (բանաստեղծութիւն):
11 ԳՈՍԻԵՐԿց ԲԱՐԵՒԵԱՆ	73 Ռորելոս կոխի զիւտի մասին:
12 ԹՎԹԱԿԻՑ,	83 Վելնելմ Ա ի ճառը:
13 "	91 Գալրոցական թեփորմը Պրուսիակամ:
14 ՄԱՆՈՒԵԼԵՎՈՆՑ, Լ.	93 Յ. Թումանեանցի բանաստեղծութ:
15 ՄՈՐԴՈԵԱՆՑ ԱՍՐԳԻՒ	101 «Փարզելու ժամանակազրութիւնը»:
16 ՔԸ.	106 Ո. Խոհեցի բանաստեղծութ:
17 Լ. Ս., Ա. Ա.	112 «Ժիւցեանց տոհմը», «Ա.մուս. Խընդ»:
18 ԼՈՒՄԵՆԻ.	120 Ամուսնիկ:
19 ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍԵԱՆ, Տ.	127 Նամակներ Ոտասասանից, III:
20 ԽՄԲ.	139 Խմբագրութեան կողմից:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՈՒՍԻՇԵԱՆՑԻՑ ՏՊԱՐԱՆ

Տիպոգրիա Մ. Դ. Ռոտինանց, և Գօլ. պրոց. ս. № 41.

1891



# ՄՈՒԲՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 1 1891

ՅՈՒՆԻՎ

1891 № 1

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ԱԽՏԻՆԵԱՆ  
1891

# ՀԱՅՈՒԹ

ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ ՀԱՅՈՒԹ

ԳՐԱԴԱՎՈՅ

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Декабря 1890 г.

Типографія М. Д. Ротніанца, на Голов. просп. соб. д. № 41.

Անցեալ 1890 թ.-ին „ՄՈՒՐՃ“ ամսագիրը տւեց  
հետեւեալ յօդւածները և գրւածքները:

1) Հասարակական և ընդհանուր խնդիրներ:—Գործերի զրութիւնը (№ 1, յօդւած Ա. Սրասխաննեանցի), Թիւ և Այժ (№ 5, նոյնը), Պանդխառութեան խնդիրը (յօդւած երկրորդ, № 6, նոյն հեղինակ), Հողացին խնդիրը Անդրկովկասում (յօդւած 2-րդ և երրորդ, № 7 և 9, նոյն հեղ.), Ժողովուրդը որպէս քաղաքակրթական ոյժ (№ 11, նոյն հեղ.), Ազքառների խնամատարութիւնը (երկու յօդւած, Գր. Վարդանեանցի, № 4 և 10), Էժանագին գրադարանի առաջին փորձը մեջանում (Լ. Սարգսեանցի, № 12):

2) Հետազօտական:—Համայնական հողատիրութիւնը Երեանի նահանգում (Յ. Սաղաթելեանցի, №№ 5, 7 և 10):—Կարսի բանուորների զրութիւնը (Եր. Վազարեանցի, № 1):—Պանդխառութիւնը մեջանում (Անոշ. Քալանթարի, № 11 և 12):

3) Վեպեր և կետնքի պատկերներ:—Բղդէ (մեծ վէպ Պ. Պոչեանի, №№ 1—6 և № 8):—Հայ զիւղացու Սե օրը (վէպ Ա. Մելիք-Շահնազարեանցի, №№ 3—5):—Հեղինէ (մեծ վէպ Տիկին Մ. Մարիսեանի, առաջին մասն, №№ 6, 7, 9, 10 և 11):—Խաթ-Սարս (Հայ բոշաների կեանքից, Վ. Փափազեանի, № 9 և 10):—Ապագայ Ազան (№ 1), Օրիորդ Նւարի (№ 2), Արանեանի մօտ (№ 3), Զրադաց (№ 4), Հարեաններ (№ 11)—Ալ. Նամալեանի:—Նկարիներ (Վ. Դարշինի № 8):—Աւիլեամս ամուսինների վրդովմոնքը (Մարկ Տուէնի, № 11), Աւիլեամս ամուսինները և կայծակը (Մ. Տուէնի, № 12):

4) Նկարագրական:—Վանայ լիճը (Տ. Փիրումիանցի, № 3):

5) Հայկական կեանքից:—Հայ ընտանիքը (Լ. Հոփ, №№ 1, 2, 3, 7):

6) Բանաստեղծութիւն:—Լ. Մանուկեանցի (№№ 1, 2, 7, 10):—Արշալոյս Միսիթարեանի (№ 2, 4, 5, 6, 7, 8, 11, 12), Արծիւեանի (№№ 1, 2, 3, 5, 9, 10), Զ. Բալուղեանի (№ 1, 11), Կրասինիկեանի (№ 6), Հայնէ, Լոնգֆելօ, Պոտ, Էլիոտ, Մուր, Լէօվարդի, Պուշկին, Անդրէև՝ թարգմանութեամբ Արծիւեանի, Բալուղեանի և Կրտսելիկեանի (№№ 4, 6, 8, 9):

7) Ճանապարհորդական:—Այց Թիւրքաց Հայաստանին (Լ.

Սարգսեանցի, № 1 և 2): — Ճանապարհորդի յեշատակարանից՝ Ալիշանի  
մօս (Մ. Սիրունի, № 8): — Զմիւռնիալից-Ալեքսանդրապոլ (Յ. Տէր-  
միրաբեանի, № 12):

8) Քաղաքական: — Եւրոպան 1890 թ.-ի շեմքում (№ 1),  
Վիլհելմ Ա-ի հրովարտակները բանոր զատկարդի մասին (№ 2),  
Բիսմարկի հրաժարականը (№ 3), Համառակերպիկական միութեան  
գործը (№ 4), Գերմանիայի զինորական օրինադիմք, Ֆրանժիայի  
ներքին գործերը (№ 5), Եւրոպան և Աֆրիկայի բաժանումը (№ 7),  
Աֆրիկայի բաժանումը և ընդհանուր քաղաքականութիւնը (№ 9),  
Առևտրական դաշնաքների խնդիրը Եւրոպայում (№ 11) Պարլամենտ,  
ընտրութիւնները Խաղացում. և Հիւա Ամերիկայում, կարգինալ  
Լաւիժըրի, Պարնել և Գլազուն (№ 12):

9) Տնտեսական: — Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում (Ա.  
Տարատինով, № 6), Անտառները Անդրկովկասում (Ա. Արամի, № 11):

10) Ժողովրդական: — Բոշաները ըստ Ա. Կոլուի (Ա. Արամ-  
իաննեանցի № 10): Աև Լեռնցիք (Յ. Պարագեօգեանի, № 12):

11) Գիտնական: — Հոսանքներ բնագիտական ֆիլոսոփացութեան  
մէջ (Ա. Բարելեանի, № 10), Արեգակի ազդեցութիւնը բուսականու-  
թեան վերայ Անդրկովկասում (Ալեք. Քալանթարի, № 11), Կոսիի  
գիւտը տուբերկուլոզի դէմ (դր. Գր. Տէր-Գրիգորեանցի Դ. զլարցու),  
Կոլուի հրատարակութիւնը (Ա. Բարելեանի № 12):

12) Թատրոն և Գեղարվեստ: — Թիվլիսի Պատկերահանդէսը  
(ապօն), Ա. Արամի, № 2), Նկարչի նամակները (Գ. Բաշինջաղեանի,  
№ 11), «Ամուսիններ» (Լուսինի, № 4) և արժուհի (Լուսինի, № 4):

13) Կենսագրական: — Վիլիամ Գլազուն (№ 1), Լոռենց  
ֆոն Շտայն, (№ 6, Ա. Արամի,), Տորերս Կոլս (№ 12, Ա. Բարելեանի):

14) Գլուխական: — Գերմանական գալրոցների դրութիւնը (Արշ.  
Տէր-Միքելեանի, №№ 5, 6, 8), Գերմանական համալսարանների ողին  
(Յ. Բարիուդարեանցի, № 5), Կարինի գալրոցական խնդիրները (Ա.  
Ասքանազեանի, №№ 3, 5):

15) Լեզագիտական: — Սուրբ Լեզու (Ղ. Աղաջեանցի, № 11  
և 12):

16) Քննագատական: — Ամուսիններ, կոմ. Գ. Առնդուկեանցի  
(Լուսինի, № 2), Վարժուհի, կոմ. Զմշկեանի (Լուսինի, № 5): —  
Ծանկական ընթերցանութիւն և Գ. Աղաջեանց (Եր. Դաղարեանի,

№ 3), Գաստիարակչական մոլորութիւններ (Ե. Վազարեանի, № 9):  
Ազգացին վէպ (Մ. Աբեղեանի, № 1 և 2):

17) Բնդգիմախառական: — Քննադատներին (№ 4, Եղ.  
Մադաթ.), «Արձագանք»-ը և ուսանողութիւնը (Տ. Յովհաննիս., №  
5), Դրական, աչքակապութիւն (Ե. Մարտաթ., № 6), «Արձագանք»-ի  
ճշմարտախոսութիւնը (Ե. Մարտաթ., № 8), Բանաստեղծութիւնը  
և «Մուրճ»-ը (Էնթերցոզ, № 12):

18) Արտասահման եան թղթակցութիւններ: — Գլազո-  
տոնի յորելեանը (№ 1), Անդիխացի ժողովրդական դպրոցները (№ 3),  
Մանկարժական — բուժական վարժարան (№ 5), Բանւորները Անդ-  
լիայում (№ 5), Ստենլէյ և Էմին փաշա (№ 8), Ֆրանսիացի պետական  
ծախքերը 1870 թւականից դէս (№ 11): Կոխի գիւտի մասին վկա-  
յութիւններ (№ 12):

19) Ներքին Տեսութիւն: — Ամսւայքրոնիկ (Լուսինի)  
— Ամսւայններին ներկայացումը (№ 2), Արծրունու գործունէութիւնը  
տօնելու խնդիրը, Պատկերազարդ թերթեր, Ներսիսեան դպրոցի տարեկան  
ակտը, Հայոց լնկերութիւնների լնդհանուր ժողովները (№ 3),  
«Վարժուհու» ներկայացումը (№ 4), Արծրունու 25-ամեաց գործուն.  
յորելեանը, ժողովրդական լնթերցանութեան գործը (№ 5), Թոսպին  
Թիֆլիսում (№ 6), Ուսուցչական սոճիկներ (№ 7), Հայոց ներքին  
կեանքի զարգացման պայմանները, Խորէն Նար-Ռէյ արքեպ. մեզ  
մօտ, Պատրիարքական լնտրութիւններ և Պոլտում; թեմական տես-  
չութիւնների վերականգումը (№ 10). Խրիմեան և Նար-Ռէյ որպէս  
պատրիարքացուներ, Թիֆլիսի առաջին կարգի տնտեսէրերը, Ռատու  
Կոչալսկի և Նորա կոնցերտները (№ 1). Թիֆլիսի քաղաքացին  
ինքնավարութեան լնարութիւնները: Հայոց թատերասէրների ներ-  
կայացումները (№ 12):

Բաքուի Մարդաս. Ինկ. Էնդչ. ժողովը (Զելիցեանի, № 2), Ներ-  
սիսեան դպրոցի տնտես. դրութիւնը (№ 3), Կոնդակ ուսուցչական  
կուսարների մասին (№ 6):

20) (Գրախօսութիւն: — Տարւայ լնթացքում՝ զրախօսուած  
են նոր լոյս տեսած 40-ից առելի հրատարակութւններ, զլլաւ որ  
աշխատակցութեամբ Ա. Արամիանեանցի, Ալ. Քալանթարի, Ա. Առն  
Մարգսկանցի, որպէս նաև մասնակցութեամբ՝ այլ զրական ոչմերի:

## ՅԱՌԱԶԴԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ

Աէս գարից անց է ինչ Կովկասեան Հայերը սկսել են իրանց մտա-  
ւոր զարդացման Համար գիմել եւրոպական ուսման, ոռւսաց թէ  
արտասահմանի միջնակարգ թէ բարձրագոյն զպրոցների միջոցով.  
երեսուն տարուց աւելի է որ Կովկասեան Հայերը հիմնել են եւրո-  
պական նախատիպարօվ պարբերական մամուլը. մօտ երեսուն տարի  
է, որ արծարծւել է ու ապա մի յայտնի բայց զգալի չափով իրա-  
զործւել է տղայոց տարբական ուսումնարանների խնդիրը. քառորդ  
դար է ինչ պատուաստել է մեզանում զիս զերի թէ քաղաքների ամ-  
բովի աղջկերանց կրթութեան զործը օրիորդաց տարբական ուսում-  
նարանների միջոցով. քառորդ գարուց անց է ինչ թատրոնական զործն  
սկսել է մեզանում և միայն մօտ ժամանակների զործ է, որ սկս-  
ւել է գրականութեան, մանաւանդ թարգմանական և անշափահաս-  
ների համար նշանակւած գրականութեան փոքրիկ բայց և աշնալէս  
նկատելի ծաղկումը և ժողովրդական գրադարանների հիմնարկութիւնը:

Ահա՝ բոլորը, ինչ Հայերը Կովկասում կարողացել են ձեռ-  
նարկել մտաւոր և քաղաքակրթական ասպարիզի վերայ, տարբեր  
յաջողութեամբ հետեանքների կողմից: Բարձրագոյն ուսումը Կովկա-  
սեան Հայերին տուել է ամենամեծ մասամբ եկամուտի միջոցներ այն-  
պիսի զբաղմունքներից, որոնք կապւած են զիսլոմի հետ՝ փառա-  
պեաններ, բժիշկներ, ինժեներներ, տեխնիկուններ, պետական վար-  
քաններ, բժիշկներ, ինժեներներ, տեխնիկուններ, պետական վար-  
քաններ, ժուրնալիստներ, ուսուցիչներ ու այլ և այլ հոգեորական  
ներ. զիւղական ուսումնարանները մի փոքր զբաղխութիւն են տա-  
ներ. գիւղական ուսումնարանները մի փոքր զբաղխութիւն են տա-  
ներ. գիւղական ամբոխի մէջ: Պարբերական մամուլը ընթերցող հա-  
սարակութեան շրջանն է ընդլացնացրել և կեանքի է կոչել մի քանի  
թւով հրասպարակախօսական և վիսպասանական ոյժեր: Աղջկերանց  
ուսումնարանները տեղանեղ ընթերցողներ են պատրաստել կանանց  
շրջաններում, որոնք թույլ կերպով հետեւում են մեր մամուլն և  
մանաւանդ վիսպական գրականութեան. թատրոնական զործը տուեղ-

ծել է մի քանի ինքնուրոյն բեմական չաջող գրւածքներ և ոչ բազմաթիւ թատրոնական թարգմանութիւններ, նա ծանօթացրել է ամբոխին թատրոնական ներկայացումների հետ և կեանքի կոչել մի քանի բեմական գործիչներ և գերասաններ: Ինչ վերաբերում է գրականութեան՝ նա առ այժմ զրեթէ միայն կազմած է, ինքնուրոյն և թարգմանական վէպիրից և պատմածքներից, քիչ թւովնակ կասինների հեղինակութիւնների փոխադրութիւններից, մանկավարժական և ժողովրդացրած գիտական գրւածներից:

Այս է, կարծում ենք, հաշւեկշխար Կովկասեան հայերի զարգացման պատմութեան ներկայ գարում: Անշուշտ գործ կատարւած է: Բայց ակներեւ է որ մեր յիշած զործքերից և ոչ մէկը չի հասելիւր բարձր զարգացման: Բարձրագոյն ուսումը զլիաւորապէս կարիերիատներ և եկամուտների աղահ մարդիկ պատրաստեց, բայց շատ և շատ քիչ մարդիկ լնծայեց հասարակութեան: Ազացոյցների կարու չէ այդ, դա արդէն փաստ է: Չափազանց քիչ մարդիկ գտնւեցան նոցամիջից, որոնք իրանց մասնագիտութիւնների հետ կապէին ժողովրդին և կամ զիտութեան ծառայելու ձգումը: Այդ պատճառով այդ գործնական մասնագիտութիւնների տէր մարդկանց դասակարգ գլ չը կարողացաւ նւաճել լնդհանուր ժողովրդական համակրութիւնը և բարոյական բարձր հեղինակութիւնն ձեռք բերել ժողովրդի վերաց ժողովրդական շահերին ծառայող հասարակական այլ և այլ հիմնարկութիւններ ևս շահ չունեցան այդ գասակարգի նոյն խոկ նիւթական համեմատապէս առատ միջոցներից. ներկայումն այդ դիպումատոր դասակարգն է որ ամենից գծուծն է հանդիսանում ամեն տեղ ուր հասարակական որ և է գործին նիրաբերութիւն է հարկաւորւմ: Այն ուսումը որ ստացել են Կովկասեան հայերը այն տեսակիցը չէ, որ բարոյապէս ազդէր ողու վերաց, նրան նաև ողեկան լաւ ուղղութիւն տար. այդ ուսումը նաև այն տեսակիցը չէ որ ոգի ներշնչէր անհոգի գրամին: Առ այժմ ուրեմն հաստատ է որ դիպումը բարեբարութիւն չը բերաւ ժողովրդին: Եւ եթէ պարզ է որ այդ գրութիւնը այդպէս շարունակել կարող չէ—ահա՝ մի խնդիր, որը հասարակութեան ուշադրութեանն ենք առաջարկում:

Մեր ներքին և հասարակական գործերի յառաջդիմութիւնը սական կախւած չէ միայն բարձր ինտելիգենս դասակարգից, թէև նորանից անկախ չէ նաև մեր գործերի յառաջդիմութեան մեծ դանդաղկոտութիւնը:

Մի թեթևակնարկով տեսնենք ուրեմն թէ ինչպէս է ազգել դարտւ ողին այլ դասակարգերի վերայ և թէ ինչ ուշադրութեան արժանի կերպարանավոխութիւններ են ենթարկել նոքան Գիւղական դասակարգի համար չափազանց քիչ բան է արւած։ միակ նորմուծութիւնը նորա համար՝ տարրական կանոնաւոր ուսումնարանն է, որ այն էլ գեռ ևս հեռաւորապէս անգամ ամեն տեղ չը կայ։ Այդ պատճառով նրան զեռ ևս զրեթէ անմատչելի է գրականութիւնը՝ ինչ ձեռվ էլ նա ներկայացնի նրան։ Նազորդակցութեան ճանապարհներ թէև կան շինւած մեր երկրում; բայց շատ հեռու չի տարւած գործը։ Գիւղական բժշկութիւնը գեռ ևս լուծելու ինդիր է մնում։ գաւառական բժիշկները աւելի դատաստանական աղենանների զեր են կատարում, քան հիւանդութիւններ բժշկողների զեր, իսկ զիւղական բժիշկներ և զեղատուններ մեր բաւականի լնդարձակ երկրի միայն փոքրաթիւ տեղերում են հաստատւած։ Խսկ հին, տեղական հիւանդութիւնների վերայ ժամանակը բերել է նոր հիւանդութիւններ, որոնց դէմ մարտնչելը ժողովուրդը միանգամայն անզօր է։

Վեներական հիւանդութիւնները զարհուրելի չափսերով վարակել են և շարունակում են վարակել մեր գաւառները, այլասեռելով և հիւանդու զարձնելով ներկայիս մատուղ սերունդները։ Եւ տեսէք թէ որքան քիչ է զբաղեցնում մի ապակիսի ինդիր մեր հասարակութեանը, որ ոչ միայն զորա դէմ զօրեղ միջոցների չեն զիմում, այլ նոյն իսկ մեր սպարբերական մամուլի մէջ չը կայ մի հատիկ հետազոտական յօդւած այդ ինդրին վերաբերեալ։ Զի գտնւել մասնագէտ բժիշկներից մէկը, որ խելքի եկած լիներ՝ մեր գաւառական այլ և այլ բժիշկների պաշտօնական տեղեկութիւնների հիման վերաց մի ընդհանուր տեսութիւն տալու մեր գաւառների ժողովուրդը կոտորող այլ և այլ հիւանդութիւնների մասին և կամ գոնէ իւր սեպհական պրակտիկայից տեղեկութիւններ հասցնելու ընթերցող հասարակութեան զիտութեանը։ Այդպիսի մի գործ նոքա համարում

են գրականութիւն, որից նոքա խորշում են որպէս թուրքը խոզի մսից, բայց համարւում են համալսարանների ծնունդներ...

Գիւղական ազգաբնակութեան նիւթական բարեկեցութեան և յառաջդիմութեան համար մինչ այժմ ամենաշոշափելի գործը թերեւ պէտք է համարի՝ հաղորդակցութեան միջոցների զարգացումը մեր երկրում՝ շրահները երկրիս մեծ տրականների վերայ և Բաթում-Յաքուեան երկաթուղին։ Բայց ահա ինչ հանգամանքներ կան։ Կոլկասի արեմուեան մասը զրւած է աննպաստ զրութեան մէջ համեմատած արեւելեան Կովկասի հետ, որովհետեւ առաջինը զրկւած է, այն բարիքներից, որ տալիս է երկրորդին արդէն տասը տարի գոյութիւն ունեցող երկաթուղին։ Երեանեան մեծ նահանգը, Կարսի շրջանը և երկաթուղուց հեռու գտնւող Վարաբաղի մանաւանդ լիունացին գտաւաները ացգլախով զրւած են աննպաստ զրութեան մէջ։ Դա մի հանգամանք է, որ շատ լնդհանուր շահեր է շոշափում, որպէս զի խելացի լինի աւելի ևս յետաձգել Երեանեան երկաթուղու շինելու ինդիբը։

Բայց նոյն իսկ երկաթուղին բարիք է միայն երբ արդիւնաբերութիւնը գորանից օգտուում է։ Արդ՝ գիւղական դասակարգի երկրագործ մասը, հողի զգալի սակաւութեան պատճառով, չի օգտուում այդ բարիքից որպէս պէտքն է։ Այդետէրերն էլ, դրյութիւն ունեցող բարդ և մեր երկրի հանգամանքներին անհամապատասխան ակցիզային սիստեմի պատճառով, փոխանակ հարստանալու, շատ և շատ տեղ ուղղակի աղքատանում են։

Մենք յոյս ունենք այս տարւայ լնթացքում «Մուրձուի մէջ սպարզել այդ խոնդիրները աւելի քան կարողացած ենք մինչ այժմ։ Բայց միայն այս առ այժմ հաստատ է, որ զիւղական երկրագործ ազգաբնակութիւնը դեռ ևս շարունակում է մնալ առանց զորաւոր օրգանների իւր անսմիջական շահերը պաշտպանելու համար։ Այդպիսի մի զօրեղ օրգան առեղծելու անհրաժեշտութիւնը մեզ համար միանգամայն ակներեւ է, և մենք կարծում ենք միևնոյն ժամանակ, որ մի այլպիսի զօրեղ օրգան մեր երկրում, որպէս նաև կայսերութեան շատ ուրիշ նահանգներում, չի կարող լինել ոչ մի ուրիշ բան, քան զեմստուօների հաստատութիւնը մեր երկրում, Ուռսաստանի նահանգներից երեսն ու չորսում գործող զեմստուօների ձևով։ Խոչպէս որ մեր

քաղաքները ուրիշ կերպ բարեկարգել անհնարին է քան քաղաքային ինքնավարութիւնով, որ արդէն մացրւած է Կովկասի քաղաքներից կարևորագոյններում, նմանապէս գիւղական համայնքները իրանց ընդհանուր շահերը հազիւ թէ կարողանան այնպէս պաշտպանել, որպէս այդ կարող էին անել գաւառական գեմսովները: Խուսաստանի օրինակը այդ կողմից՝ միանգամայն խրախուսիչ է. ՕՄուրճա-ի ընթերցողները գորանում կարող են համոզի ել կարգալով Շնամակներ Խուսաստանից վերնազրով յօդւածները: Զեմստացին հաստատութիւնը կը ներշնչէ գիւղական ազգաբնակութեանը մի քաղաքացիական ոգի, որ ուստիկանական կառավարչութիւնը երբէք չի կարող անել ամենահեռաւոր շափովն անգամ, որպէս այդ ամենալաւ կերպով ապացուցում է թէ Խուսաստանի օրինակը և թէ նաև մեզանում գործող քաղաքային ինքնավարութիւնը: Խսկ քաղաքացիական ոգին իւր հետ կը բերէ անթիւ-անհամար ուրիշ բարիքներ երկրիս համար: Երկրիս գիւղական ազգաբնակութեան շահերը շատ հանգամանքներում պահանջում են, որ ոչ թէ ամեն մի գիւղ ու համայնք իւր համար գործէ, այլ որ շատ համայնքներ միասին գործեն և ընդհանուր ոյժերով, ընդհանուր օժանդակութեամբ գործին նպաստեն. խսկ պորա համար հարկաւոր է նոցա մէջ մի ընդհանուր կապ, որ չը կայ այսօր, բայց որը կը լինի՝ եթէ զեմստածների նման հաստատութիւն լինի: Այդ կը լինի մի ահազին բարիք երկրիս գիւղական ազգաբնակութեան համար, բայց հարկաւոր է որ ազգաբնակութիւնը ինքը արժանի կացուցանէ իրան մի այլպիսի բարերարութեան բարձր կառավարութեան կողմից՝ կառավարութեան, որը բարերարել է այս երկիրը մի քանի շատ կարևոր բեֆորմներով, որոնց մէջ ցիշենք միայն նահանգական և գաւառական հաստատութիւնները, գիւղացիներին ազտոնելլ թէ ճորտութիւնից, ուր սա կար և թէ կալւածառերերի իրաւասութիւնից, ուր ճորտութիւն չը կար, ներմուծումը դատաստանական նոր կարգ ու կանոնների և քաղաքային ինքնավարութեան երկրիս կարեռազոյն քաղաքներում:

Զեմստացին հիմնարկութիւնների ներմուծումը մեր երկրում շատ նշանաւոր չափով կը լուծէ նաև տեղական ինտելիգենցիայի ոյժերը արդիւնաւէտ կերպով գործադրելու և ժողովրդին ծառայեց-

Նելու խնդիրը, որը մեզ զբաղեցրել է արդին մի անգամ «Ժողովուրդը» որպէս քաղաքակրթական ոյժ» յօդւածում («Մուրճ» 1890 № 11):

Իսկ առաջմ մեզ մնում է միայն վկացել, որ մեր զիւղական ազգաբնակութիւնը դեռ ևս իւր կաշին չի փոխել և որ թէ մաս- ւորականի և թէ անտեսականի նկատմամբ զեռ ևս գրեթէ ամեն ինչ մնում է անել:

Մեր ժողովրդական միւս խաւերից մնում են արհեստաւոր և վաճառական զասակարգերը: Դոքա այն զասակարգերն են, որ ամե- նից շատ պէտք է ազգաէին այն շփումից եւրոպակիրթ ազգերի հետ, որ նորագոյն դարը անհրաժեշտաբար յառաջացրել է մեր ժողովրդի համար: Դիւղական կեանքը չազգւեց մեր երկիրը զաղթած ոչ գերմանացի և ոչ ուսու դազթական շինականներից: բայց արհեստ- ները և վաճառականներում կենդրանացած լինելով, ուր կեանքը աւելի շարժուն է և յարաբերութիւնները իրար հետ սերս կպած, չէին կարող չը կրել մեր երկրում հաստատած եւրո- պական արհեստաւորների, վաճառականների և գործարաննատէ- րերի ազգեցութիւնը: Քաղաքացին բնակիչների եւրոպական նիստու- կացը, մոդացի ներմուծումը մեր երկրում, քաղաքացին շինութիւն- ների արխիտեքտուրացի փոփոխութիւնը և մի քանի արդիւնաբե- րութիւնների մեջ կապիտալով շահացնելը, — այս բոլորը տեղ տևեց եւրոպական արհեստաւորների հաստատելուն մեր երկրի զլիսա որ քաղաքներում, զլիսաւորապէս Ֆինլինում և Յաքւում: Տեղական արհեստաւոր զասակարգը ժամանակով ազգ փոփոխութիւն- ներից, բայց ոչ ընդհանուր կերպով, որովհետեւ և կեանքը ամենու- րէք հաւասարապէս չը կերպարանափոխւեց, այլ միայն մասամբ և միայն տեղատեղ: Արհեստաւոր զասակարգը ացապիտով բաժանեց երկուովի մի մասը և մեծադադայնը շարունակեց իւր հին արհեստը հին ձեռով, միւս մասը և փոքրագոյնը հետեւեց եւրոպական արհես- տին: Ապագան վերջինին պատկաննելով՝ այդ զասակարգը քանի գնում այնքան աճում է:

Բայց ահա և մի հանդամանք: Արհեստաւորների հին ձեռով շարունակողները իրանց արհեստի բոլոր աղրիւրը համարում են

աւ անդութիւնը, ուրեմն և աւանդական աշխերտութիւնը: Ոչ մի շփումն ուրեմն գոլրոցի և զրականութեան հետ: Նորագոյն արհեստաւորների սերունդը կրթւել է և կրթւում է զլիաւորապէս եւրոպացիների արհեստանոցներում՝ մեր երկրում թէ արտասահմանում կամ Առւարձում: Կրկին ոչ մի շփումն գոլրոցի և զրականութեան հետ:

Ինչ է ներկացացնում՝ վաճառական դասակարգը և ինչ ուղղութեամբ ազդեց մեր գարը այդ դասակարգի վերաց: Մինք պատմութիւն չենք անում, այլ ուղում ենք նկատելի զրութիւնը և յանքները վկացել և որոշել այն կէտերը, որոնք ըստ մեզ յառաջադիմութեան նշաններ կարելի է համարել և դէպի որս մեր ընթերցողների ուշադրութիւնը պէտք է լարւած մնայ:

Վաճառական դասակարգը մանաւանդ վերջին դարերում՝ և մասմբ զեռ մինչ մեր օրերը բոնած էր ազգի մէջ այն գիրքը, որ շատ տրիշ երկրներում՝ բոնած էր կալւածատէր դասակարգը: Եւր նիւթական կարողութիւնով նա ձեւք էր բերել մի նշանակութիւն հասարակաց գործերի մէջ, որի շնորհիւնրան մի տեսակ պատւառոր տեղն էր յատկացրւած: Հասարակական կեանքի մէջ այսպէս ասած՝ տոն տևողը այդ դասակարգն էր. և ամեն հասարակական գործում՝ հարուստների, որ ասել է վաճառականների խելք կտրելու շափար վճռողական էր:

Պէտք է սակայն ասած, որ վաճառականուկան դասակարգը այսու ամենայնիւ չէր կարողացել տիրապէս իշխել ոչ թէ հասարակական, այլ ազգային բարձր խնդիրների դէպքերում: այդ դասակարգից վեր եղած են պետական բարձր պաշտօնեաններ, ազնւական և ոչ ազնւական բայց մեծ տոհմեր, որոնք աւելի անմիջական են կատարել ացգվիսի դէպքերում: Բայց սովորական հասարակաց կեանքի մէջ, հասարակական խնդիրներում, հասարակական հիմնարկութիւններում՝ վաճառականական դասակարգին պատկանում էր զլիաւոր գերը: Այդ դասակարգը մինչ օրս էլ իւր այդ նշանակութիւնը չի կորցրել, թէև այդ կողմից նա ստիպւած է եղել զիջել իւր գիրքի մի մեծ մասը եւրոպակիրթ սերունդին՝ ու սումնական ինտելիգենցիային: Բայց և այսօր, որպէս երեկ՝ նա մեծ ակա-

ունի գրաւած հասարակաց գործակատարութեան մէջ։ զպրոց, ընկերութիւններ, մամուլ, թատրոն և այլ հասարակաց գործեր, ամեն տեղ նոքա գեր են խաղացել և գեր ունին կատարելու և այն՝ շատ շոշափելի չափով։ Եւ արդէն այդ տեսակէալ բաւական է, որ այդ դասակարգը արժանանայ մեր խորին ուշադրութեան։

Ժամանակը այդ դասակարգի վերաց ազգեց նախ այն մաքով, որ նորա որդիքն էին զլիսաւորապէս, որ աւելի ապահով քան միւս դասակարգերը, ուսումնարանական և բարձրագոյն կրթութեան ճանապարհը բունելու կարելիութիւնը ստացան։ Ներկայիս հայ ինսելիկենցիան սերում է զլիսաւորապէս վաճառական դասակարգից։ Առաջինը ժառանգել է երկրորդի բարեմանութիւններից և պակասութիւններից շատերը։ Բնական է որ այսպէս ասած՝ ազգակցական կազ ունենալով քաղաքակիրթ սերունդների հետ՝ նա պէտք է կը եր նաև նոր սերնդի ազդեցութիւնը շատ անսիջական կերպով։ Այդ հանգամանքը ընականապէս երկու հետեւանք ունեցաւ։ մէկը այն էր, որ վաճառական դասակարգը որպէս թիւ, որպէս բազմութիւն՝ նւազեց յօդուտ ուսումնական դասակարգի, իսկ միւսը այն էր, որ նոյն իսկ վաճառականութիւնը ինքը սկսեց ընդունել իւր շարքերի մէջ ուսում ստացած մարդիկ։ Բայց այդ գործում առաջինը շատ աւելի արագութեամբ առաջ գնաց քան երկրորդը։ և դորա շնորհիւն է որ վաճառական դասակարգը, որպէս դասակարգ, նոյն իսկ մեր գարում իւր կրթական ցենզով մնաց գրեթէ նոյնը, ինչ էր առաջ։ Նա իւր կաշին զգալի կերպով չը փոխից։ Կորա հետեւանքներից մէկը այն էր, որ վաճառականութեան մի քանի ճիւղերը, զլիսաւորապէս խանութային վաճառականութիւնը երկր՛ս ամենազլխառ որ քաղաքներում՝ մասամբ ընկաւ օտարների ճիւղը, բոլորովին այնպէս, ինչ պէս այդ աւելի ևս զգալի կերպով պատահեց արհետաների մէջ։ Դոքա այն ճիւղերն են, որոնց ստեղծողը հէնց եւրոպական կեանքն էր և որոնք ներմուծեցին Եւրոպայից՝ մեքենացավաճառութիւն, ծաղկագաճառութիւն, օճանելիների, եւրոպական մողացի առարկաների, պատրաստի շորեղէնների վաճառականութիւն և այն, առեւտրական ճիւղեր, որոնց մէջ տեղացիք գեռ մինչ այսօր աշակերտում են օտարների մօտ։

Բայց զեր ևս վաճառականութիւնը բոլոր այն առարկաների,

որոնք ամբոխի համար են նշանակւած և կամ որոնց մատակարարողը Կովկասեան ազգերի և ժողովրդական մեծ խաւերի արդիւնաբերութիւնն է դեռ ևս մեծ մասամբ տեղացիների ձեռքումն է և շարունակւում է հին ձեռվ:

Մեր վաճառական դասակարգը, ենթարկւելով դարուս լնթացքում այն կերպարանափոխութիւններին, որ մենք յիշատակեցինք վերև, դրւեց նաև ժամանակի այլ պահանջների առաջ. դա՝ տեղական մեծ արդիւնաբերութեան պահանջներն են, որոնք մեծ կապիտալ են պահանջում: Դարօւս ողին այդ նկատմամբ անողոք էր, թէև մեր հին վաճառական դասակարգը իւր օգտին գրաւելու համար՝ շատ ժամանակ պահանջեց և դեռ երկար տարիներ կը պահանջւի, մինչև որ այդ, ողին լայն ծաւալով սփուրի երկրիս վերաց: Համար մանքը այս է, որ մեր երկրի բնական հարատութիւնները շահացնելու համար, շնորհիւ երկրիս մէջ մոցրած աւելի կանոնաւոր վարչութեան, ստեղծւեցին ձեռնուու պայմաններ, որոնցից օգտագուշ համար հարկաւոր էր և գիտութիւն և կապիտալ: Արդ, կապիտալը մեր երկրում միմիայն վաճառականների մօտ էր, վաճառականներ, որոնք առնել և ծախելու մէջ էին տեսնում իրանց միակ կոչումը:

Արդիւնաբերական ասպարէզը այն ասպարէզն էր, ուր կարող էին միանալ հնաւանդ վաճառականները իրանց որդիկրանց հիմ, որոնք բարձրագոյն տեխնիքական ուսումն էին ստացել՝ մէկը տալով իւր կապիտալը, միւսը՝ գիտութիւնը: Բայց այդ համերաշխութիւնը չը կատարւեց շուտով, որովհետև առաջնները շատ էին ամուր իրանց հայեցքների մէջ, իսկ երկրորդները՝ շատ էին անփորձ: Այդ իսկ պատճառով մեծ ասպարէզը բացեցին և շարունակեցին եկորները՝ եկոր կապիտալիս և եկոր տեխնիկոս մարդիկ: Բայց ժամանակը, մանաւանդ շահաւետութեան ակներեւ լինելը մասամբ յաջողեցին կոտրել հնաւանդների կամակորութիւնը և ահա հայ վաճառական կապիտալիստը մասամբ համոզւեց դառնալ արդիւնաբերող կապիտալիստ կամ վաճառական-արդիւնաբերող: Ներկայ բոսէիս մէնք ականատես ենք այդ կերպարանափոխութեան՝ այսինքն վաճառականական կապիտալի հոսանքին առեւտրականնութիւնից զէպի արդիւնաբերութիւնը: Դա ցանկալի հոսանք է և մէնք յոյս ունինք թէ ներկայ թւականին ռմուրձուը կարող կը լինի յօդւածներ տալ այդ

խնդրի վերաբերմամբ, ներկացացնելով երկրիս գործարանական արդիւնաբերութեան փաստացին կողմը Յամենայն դէպս կարելի է ասել որ նաև այդ գործում յառաջդիմութեան պայմաններ ստեղծւած են, թէև հոսանքը գեռ ևս թոյլ է:

Մենք կ'ուզէինք այս լնդհանուր տեսութեան մէջ մեր յառաջդիմական պայմանների մասին մի պահ ևս կանգ առնել կանանց սեռի վերաց որին շատ կարեոր զեր է վերապահւած մեր յառաջդիմութեան գործում. բայց մեր այս յօդւածի տեղը չափւած է և սուխպւած բաց ենք թողնում այդ կարեոր առարկան:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻՍՆԵԱՆՑ:

## ՄԵՐ ՆՈՐ ԲԱՆԱՏԵՂՆԵՐԻՆ

Լ. Ե. Ա. Խ. Մ. Ա. Յ. Ա. Յ. Ա.

Անվլհատ հոգով և միաբերան  
Բարձը հընչեցրէք ձեր տղնիւ տաղեր,  
Ինչպէս անտառում նորագարձ գալնան  
Երգում են աշխոյժ նորեկ թըռչուններ:  
Ծառերի վերայ սև ագռաւները  
Միասին խըմբւած՝ թող անվերջ կըռաան.  
Մի՞թէ հընչական ձեր նըւագները  
Խըռապոտ ձայներում պիտի խըլանան:

Երգեցէք իրրոխտ... վոլժ չէ. թըշնամին  
Թո՞ղ մաղձով լըցւած՝ ձեզ ծողըր անէ,  
Հաւաստի եղէք գոլիք սերունդին  
Նոցա ծաղրանքը չը սիտի հասնէ:  
Բայց ձեր երգերի լայն ալիքները  
Երկար կը զարնւեն մարդկանց սըբաերին,  
Ինչպէս բարկութեամբ լի կոհակները  
Զարնւում են ժէռոտ-քարոտ տփերին:

# ՀԵՂԻՆԵ

Ա. Է. Պ.

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

### I

Ապատարինեկի մահից յետով անցաւ մէկ-երկու ամիս։ Սահառունու սիրով քիշ-քիշ հանգստանում էր և նա ընտելանում էր իւր նոր պրութեանը։ Նա նկատում էր, որ միայնակութեան մէջ նորա սրտում հետզհետէ նսեմանում, ջնջում էր հանգուցեալ կետջ պատկերը, իսկ նորա փոխարէն աւելի ու աւելի որոշ պատկերանում մի ուրիշ էակ, որին վաղուց նա սիրում էր։

«Զէ», որքան հեռու լինեմ նորանից՝ այնքան լաւ է, իմ սէրս նորան բախտուորութիւն չի տար»։

«Դուռը թըրլսկթխացրեցին. Նա սթափւեց իւր մոտախոհութիւնից։ Նամակաբերն էր։ Նա շտապելով ճղեց ծրարը և սկսեց կարդալ։

Մայրը զրում էր, որ իրան շատ վատ է զգում. առողջութիւնը օրէցօր վատանում է. կալւածը, որ ինքը կառավարել չի կարողանում հիւանդութեան պատճառով, անտէր մնալով փչանում է. «արի, աչքիս լոյսը, մի թող հօրդ օջախը քարուքանդ լինի, արի մէկ էլ

քո երեսը տեսնեմ, սրաիս կարօնն առնեմ. քանի ձմեռ, քանի գարունք անց կացաւ, որ քեզ չեմ տեսել, էլ չեմ կարողանում դիմանալ:

«Թե՛ղճ մալրիկ», ասաց Սահառունին կարգալով նամակը: Այդ առաջին անգամն էր որ նա խղճատանջւում էր մտածելով իւր որդիական պարտականութիւնների մասին: Նա ինքն էլ վաղուց ուղղում էր գնալ տեսնել մօրը, ինքն էլ կարօտ էր զգում, բայց իւր սէրը մօր սէրի նման չէր, թէ չէ նա մինչև այժմ գնացած կը լինէր նորան տեսնելու. մօր աշքերը ջուր էր կտրել նորա ճանապարհը պահելով, իսկ նա այսօր էղուց գցելով ացսքան տարի չէր կարողացել մի քանի օրով գնալ մօր մօր...

Հէսց միւս օրը նա խնդիրք տուեց ու պաշտօնից երկու ամսւաց արձակուրդ ստացաւ:

--Երկու-երեք օրից յետոյ սէտք է ճանապարհ լինէնել, վճռեց նոս և ուզում էր գնալ Ամիրանովների մօտ, բայց յանկարծ ճանապարհին միտքը փոխեց ու ճանապարհը ծուեց զէպի ուրիշ կազմ: Մի հինգ րոպէ չ'անցած նա սկասահեց Ամիրանովին, որ դռւրս եկաւ մի նալարտաճառի խանութից ուտելեղէնի ու խմիչքի ահագին պաշարով: Լաւ է, որ չը գնացի նրանց տունը, երևի այսօր խնջոջք ունի ու մեծամեծների է հրաւիրել, մտածեց Սահառունին ու քայլերն ուղղեց զէպի նւրոպա հիւրանոցը, յուսալով որ այնտեղ կը պատահի ընկերներին:

Առաւօտեան ժամի ինն էր: Աշունքւայ արեգակը ուրախ խաղում էր Ամիրանովների՝ գեղեցիկ հիւրասենեակում, ծիրանի գոյնով ներկելով բոլոր առարկաները. յօղազարդ ծառերը փայլվիում էին ծիածանի բոլոր գոյներով. հեռւում Կովկաս սարերի ձիւնապատ գագաթները՝ շողշողելով արևի ճառադայթներից՝ հրաշալի տեսարան էին ներկայացնում: Հեղինէն նստած պատուհանի մօտ՝ սուրճի բաժան առաջին՝ զմայլած դիտում էր բնութեան գեղեցկութիւնները:

—Հեղիկ, ի հարկէ չես մոռացել, որ այսօր մեզ մօտ կը ճաշեն իմ մեծաւորը և նորա բարեկամներից մի քանիսը. տես որ ամեն բան աեղին լինի, ասաց Ամիրանովը մանելով սենեակը ու ինքնադոհ, ուրախուրախ շվելով ձեռները:

— Գիտեմ, մի քանի անգամ արդէն ասել ես ինձ, սառը-սառը պատասխանեց կինը:

— Որքան շնորհք ունես, հոգիս, գործ զիր. պէտք է որքան կարելի է լաւ հիւրասիրել նորան, առաջին անգամն է որ նա ինձ այդպիսի պատւի է արժանացնում:

Այդ բոպէին սենեակը մտաւ իւր սովորական հանդարտ, աննկատելի քայլածքով նփեմիան:

— Բարեւ, նփեմիա, ինչ լաւ ժամանակ եկար, քեզ հետ բան ունեմ, ուրախ-ուրախ դիմաւորեց նորան Ամիրանովը: Թամարի համար փեսացու եմ գտել. մի քիչ ծեր է, բայց ամեն կողմից ձեւնուու է: Խնդրեմ իրան ոչինչ չասես, պէտք է յանկարծ աչքալուսենք տանք ու...

— Ժամանակ չը տալ, որ մտածի, շարունակեց նորա տեղակ Հեղինէն:

Պէտք է, շարունակեց Ամիրանովը ուշք չը դարձնելով Հեղինէի նկատողութեան վրայ, ձեւաց գործը սկսել ու գլուխ բերել:

Այդին ընկաւ մտածմունքների մէջ և լուռ նայում էր մեկ եղբօրը՝ մէկ հարսին:

— Ձեմ հասկանում, թէ ինչու չես ուզում Թամարին ժամանակ տալ այդպիսի մի նշանաւոր հարց վճռելու համար. ինչ կարեւորութիւն կայ այդպէս շտապելու...

— Զարմանալի մարդ ես, Հեղինէ, ամենքին քո չափովն ես չափում: Ինչու ես մոռանում, որ քոյք ոչ սիրուն է, ոչ ջահէլ, ոչ էլ հարուստ, որ փեսացուները զլսապատառ վազ տան պսակելու: Հազիւ է մի փեսացու ընկել ճանկներս, ուզում ես որ նա էլ փախչի: Դատ խելօք են ասել՝ «Երկաթը տաք-տաք կը ծեծեն»:

— Ինքդ էլ չես հասկանում, թէ ինչ ես ասում...

— Յետոյ, յետոյ կը խօսենք դորա մասին, այժմ վիճելու ժամանակ չի, անհամբերութեամբ կորեց նորա խօսքը մարդը: Դու պէտք է դեռ ուրախանաս, որ էլ իմ վրայ չեն խօսի, թէ քրոջս չեմ աշխատում մարդու տալ:

Հեղինէին դուրս կանչեց աղախինը:

Նփեմիան եղբօր հետ մենակ մնալով պինդ փակեց դուռն ու սկսեցին քչփչալ:

—Գիտե՞ս, մի շաբաթ կը լինի ինչ քեռին արտասահմանից վերադարձել է: Զարմանալի բան է, այսօր առաւօտը ինքը մարդ էր ուղարկել որ Թամարը գնայ իւր մօտ:

—Առողջութիւնն ի՞նչպէս է:

—Նատ վատ: Անկողնիցը չի՞ կարողանում վեր կենալ: Իժիշիներն ասում են, որ շատ չի ապրի:

—Ելի ացն կիսակոցը ազգական կինն է նորան պահում:

—Հա:

—Ելի առաջւայ պէս ոչ ոք չի լինում նորա մօտ:

—Ոչ ոք բացի Ելիզաւետա Բոգդանովացից:

—Այդ գիտեմ:

—Մէկ-երկու անգամ էլ նորա մօտ Պետրոսեանցին եմ տեսել, որին ինչպէս երեւում է նա շատ յարգում է:

—Հըմ... իսկ կտակի մասին բան չե՞ս իմացել, կա՞յ թէ չէ:

—Նատ աշխատեցի, բայց չը կարողացայ բան իմանալ: Թամարը ացդ աւելի հեշտ կարող է իմանալ: Քեռին ասում է, որ Թամարը իւր քրոջն է զցել, իսկ մենք երկուսս մեր հօրն ենք նման: Իմ կարծիքով, գժւար թէ նա կուակ կազմած լինի. նորա նման մարդիկ վախենում են կուակ կազմելուց՝ կարծելով որ այդ կետնքները կը կարծացնի: Բայց ով է իմանում կարելի է կազմած էլ լինի: Թէ իմանայ ացդ՝ էլի Թամարը կիմանայ: Իմ կարծիքով սխալ բան կանես որ նորան հիմայ պսակես. այսքան սպասել է, աշխարհքը չի քանդւի որ մի քիչ էլ սպասի. հիմո նա մեզ պէտք է. հասկանում ես:

Եփեմիան լաւ գիտէր, որ Թամարը այժմ նորա խօսքիցը չեր անց կենում ու՝ ինչ որ հրամացում էր՝ կատարում էր, որովհետեւ կախումն ունիէր նորանցից: Նա ու եղբայրը կարող էին Թամարին իրանց ձեռքում գործիք շինել իրանց նպատակին հասնելու համար յոյս տալով որ նորան կը վարձատին, նորա համար լաւ փեսացու կը գտնին ու կը պսակին: Մարդու գնալուց յետոյ Թամարը էլ չէր ուղենալ նրանց ձեռքում գործիք լինել:

—Ճիշտ ես ասում, ձեռնտու չի Թամարին այժմ պսակելը, մի քիչ մոտածելուց յետոյ ասաց Ամիրանովն ու ուղում էր ինչ-որ աւելացնել, բայց այդ ժամանակ կողքի սենեակից, լսեց Հեղինէի տունաձայնը և նրանք լոեցին:

— Ես պէտք է մի ժամով տանից դուրս գամ, զիմեց նա Հեղինէն երբ որ նա մտաւ սենեակը, աշխատիր լաւ ընդունել հիւթին, քաղցրութեամբ աւելցրեց նառ, համբուրելով կնոջ ճակատը, դուրս եկաւ սենեակից: Եփեմիա, մնայ մեզ մօտ, օգնիր Հեղինէն, ձայն տւեց նա սրահից:

— Ես հէնց դորա համար եմ եկել, պատասխանեց Եփեմիան ու գնաց խոհանոց տեսնելու թէ խոհարարը ինչպէս է պատրաստում կերակուրները:

Հեղինէն մարդուն ճանապարհ զրեց հեղնական ժաղիսով և ընկաւ մտածմունքների մէջ: Մտածում էր Հեղինէն իւր սերախտի մասին և երկար կը մնար նա այդպէս տխուր մտածմունքների մէջ, եթէ նորան չը սթափեցնէր մի քանի անդամ կրկնող ուժդին զանգահարութիւնը:

— Ահ, դու ես, Աննա ջան, այս ինչ է այսքան ժամանակ է սկի չես երեւում: Ներողութիւն, Դաւիթ Աբրամիչ, ձեզ չը նկատեցի: Ինչ տեսակ մարդ ես, Աննա, էլի լաց ես եղել, հերիք է, հոգիս, մինչև երբ պէտք է լաց լինեա: Ողորմած հոգի մացրդ աջնքան տանջւեց, որ...

— Սիս, Հեղինէ ջան, թող թէկուզ մինչև իմ կեանքիս վերջը այդպէս պարկէր, ես նորան կը պահէի... Այսօր ուղիղ երկու ամիս է նորա մեսնելու օրից և ինձ թւում է...

Արտասուքը խեղդեց Աննային, էլ չը կարողացաւ շարունակել: Հեղինէն զրկեց նորան: Թոմակելը ցուզւած նայում էր քնքշութեամբ օրիորդի վերաց: Նորա լիքը ու կարմիր երեսը մի քիչ փոխւել էր մօր մահից յետոց, բայց այդպէս նա աւելի էլ սիրուն էր երեւում: Նա ոչ մի ժամանակ այնքան գրաւիչ չէր թւել Թոմակին ինչպէս այդ սգաւորի անպաճոյն զգեստում:

— Մենք նոր գերեզմանատանն էինք, ես ու մօրաքոյս. Դաւիթ Աբրամիչը այնքան բարի եղաւ, որ մեզ ուղեկցեց:

— Հանգստացէք, օրիորդ, աւելի լաւ է ձեր զործի մասին խօսէք, ասաց Թոմակելը մօտենալով նրանց:

— Ասա տեսնենք, Աննա, յաղթեցիր աղջականներիկ թէ թողեցիր վարժուհի գառնալու մասդրս թիւնդ:

— Զէ, օրէցօր աւելի սասարիկ եմ զգում՝ վարժուհու թեամբ ողա-

բապելու պահանջը։ Այժմեան դրութիւնս, մանաւանդ այն օրից երբ  
որ եղբացներիս Առւաստան ու զարկեցին, հետզհետէ աւելի ու աւելի  
անսանելի է գաւոնում ինձ համար։ Ես չեմ ուզում ըեռը լինել մօ-  
րաքոյներիս համար, մանաւանդ որ նրանք իրանք էլ հարուստ չեն։

—Ի հարկ է, ճիշդ ես ասում։

—Դուք հեշտութեամբ կ'ընտելանաք ձեր նոր դրութեանը.  
դուք սովոր էք աշխատանքի, քաջալերում էր Թոմանելը.

—Ո՞վ, ես աշխատանքից չեմ վախենում, այլ...

—Զանազան ասէկոսէներից. ինչ ասեմ այդ մօրաքոյքերին ու  
քեռիներին։ Եհ, Աննա Արտեմիենա ինչ էք նրանց խօսքերը բանի  
տեղ զնում։

—Ինձ էլ երբեմն թւում է թէ պէտք չէ ուշք դարձնել,  
բայց էլի...

—Դու այն ասու, Աննա, զլուխ գալիս է ուզածդ թէ չէ, կորեց  
նորա խօսքը Հեղինէն։

—Հա, Դաւիթ Արրամին ու Պետրոսեանցը ինձ համար վար-  
ժուհու տեղ են ճարել. չեմ կարող ասել որքան շնորհակալ եմ նրա-  
նից, զգացւած ասաց օրիորդը քնքշութեամբ նայեց Թոմանելին։

—Ինձ զուր էք շնորհակալութիւն յացնում, Աննա Արտեմիե-  
նա. ինչպէս երեւում է ինձ դեռ լաւ չէք ճանաչում։ Ես նորա հա-  
մար էի աշխատում ձեզ համար վարժուհու տեղ գանել, որովհետե-  
այդ ինձ գւարճութիւն էր պատճառում, ուրեմն իսկապէս ես ինքս  
ինձ և ոչ թէ ձեր համար էի աշխատում, ասաց Թոմանելը մի քիչ  
յօնքերը կիտելով։

—Մուացե՞լ ես, Աննա, որ Դաւիթ Արրամիչը չի սիրում, որ  
իրան շնորհակալութիւն յացնեն։

—Ճիշդ որ չեմ սիրում, տիկին Հեղինէ, և կարծում եմ որ  
հիմք էլ չը կաց շնորհակալութիւն անելու։ Յիշո՞ւմ էք, քանի քանի  
անգամ մենք վիճել ենք և ես աշխատել եմ ապացուցանել, որ  
մարդկանց բոլոր դործերի, վարմունքի միակ դրդիչը եսականու-  
թիւնն է։

—Ի՞նչպէս թէ բոլոր դործերի։ Միթէ դու ք ոչ մի բացառու-  
թիւն չէք լնդունում. միթէ ձեռղներն էլ ձեր կարծիքով եսակա-  
նութիւնից զրդած են ինամում իրանց զաւակներին։

— Ի հարկէ: Եթէ ծնողները գւարձութիւն չըզգացին իրանց գաւակներին խնամելուց, նրանք իրանց՝ ինչպէս ասում են՝ ծնողական պարտականութիւնների կէսի-կէսն էլ չէին կատարել: Կը նշանակի մարդիկ մի լու բան անելիս ամենից առաջ իրանց իրանց են գւարձութիւն պատճառում, հետևաբար և աւելորդ է շնորհակալութիւն յայտնել նրանց դորա համար. այնպէս չէ, Աննա Արտեմիեւնա:

Օրիորդը զգացմունքով ու շնորհակալութեամբ լի աչքերով նայեց Թոմանեւին: Նա նկատեց այդ հայեացքը և սաստիկ ուրախացաւ: — Ցանկանք այժմ օրիորդին՝ կատարեալ յաջողութիւն իւր նոր գործի մէջ և մնաք բարե ասենք ձեզ. մօրաքոյրը մեզ սպասում է կառքում:

— Այս, ես բոլորովին այդ մոռացել էի:

— Մնայ ինձ մօս, Աննա ջան:

— Զեմ կարող, պէտք է պատրաստեմ նոր պարտականութիւններս կատարելու համար, ժապավով պատասխանեց օրիորդը:

Նրանց գնալուց մէկ-երկու րոպէ չ'անցած ներս մտաւ Սահառունին:

— Ճանապարհին մի հրաշալի զոյգի պատահեցի, տիկին Հեղինէ:

— Գիտեմ, նոր այսաեղ էին: Ով կը կարծէր որ այդ անշնորհք ու սառը Թոմանեւը կարող է այդ աստիճան զրաւել:

— Գիտէք, ամբողջ ամիս է ինչ Դաւիթը գիշեր-ցերեկ հանգիստ չ'ունէր, զժի նման այս կողմ այն կողմն էր ընկնում, մինչեւ որ վերջապէս տեղ գտաւ իւր Աննայի համար:

— Ասում են՝ այնպէս զրադւած է եղել դրանով, որ ձեռքից բաց է թողել մի գործարանի կառավարչի պաշտօն, որ նա շատ հեշտ կարող էր ստանալ:

— Այսինքն բաց կը թողնէր եթէ Պետրոսեանցն ու ուրիշ լիներները չաշխատեին նորա համար:

— Ճիշտ են ասել՝ չէ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, մարմանդ ջուրը շատ խոր կը լինի:

— Ճիշտ է, մոռախոչ կերպով պատասխանեց Սահառունին:

Հեղինէին դուրս կանչեցին. ծառաներն իրար անցան: Նա՝ ինչ որ պէտք էր՝ պատրիեց, կարգադրեց ու վերադառնաւ հիւրասենեակը:

— Եթէ չեմ սխալում, այսօր հիւրերի էք սպասում, դիմեց նորան Սահառունին:

— Էլ մի ասէք, մեծամեծ հիւրերի:

— Ինձ թւում էր թէ երե՛կ պէտք է ձեզ մօտ հիւրեր լինէին:

— Ապա թէ ոչ ի հարկէ չէիք գալ մեզ մօտ այսօր։ Լաւ է որ սխալւել էք։ Զէք կարող երևակացիլ, թէ որքան ձանձրալի է ինձ համար նորանց հետ նստել—խօսելլ...

Նա ուզում էր շարունակել։ բայց վախճանալով որ բերնից էլի յանկարծ մի բան կը թուցնի, ցոյց կը տայ իւր միջ կատարւող ներքին կուիւր, լսեց։ Սակայն զուր էր այդ զգուշութիւնը. Սահառունին շատ լաւ էր համարանում այն գաղտնիքը, որ աշխատում էին պահել նորա սեղմած ած շրթունքները, ոչ մի լեզու այնպիսի ճարտարախօս կերպով չէր կարող արտայայտել նորա սրտի յուզմունքները ինչպէս նորա մարած, մոտահոգ աշքերը։

Հեղինէն աշխատում էր ցրւել իրան պաշարող մաքերը, հանգստացնել սրտի ալէկոծութիւնը զբաղւելով հիւրերի լնդունելութեան համար անհրաժեշտ պատրաստութիւններով. մեքենայաբար կարգի էր բերում սենեակը, սարքում էք։ Սահառունին ցաւատանց հայեցքով նայում էր նորան։ Նա վերցրեց մի գիրք և սկսեց թերթել. նայում էր տպած էջերին, բայց ուշը մտածմունքների հետ էր. — չէ, երբէք չի դոհացնիլ նորան այն կեանքը, այն մթնոլորտը, ուր քաշում ձգում է, նորան մարդը...

Ճաշի ժամանակը մօտենում էր։ Սահառունին վերցրեց գլխարկը։

— Ո՞ւր:

— Խաչը, չեմ կարող։

— Միթէ մի չնչին զօհողութիւն չէք կարող անել իմ խաթեր։

— Ինչ զօհողութիւն է այդ որ, ծիծաղեց Սահառունին։

— Ի՞նչ էք աշխատում ինձ խարել, ես գիտեմ որ մեր այսօրւայ հիւրերի հետ ժամանակ անցնելլ ձեզ ահաճութիւն կը պատճառի, բայց այնու ամենայնիւ ես չեմ թողնի որ գնաք, որովհետեւ եթէ դուք այսուեղ լինէք այսօրւայ ճաշը ինձ այնքան անտանելի չի թւի։

Հեղինէի ժամանակ այդ ասելիս և այն մտերմական հայեցքը, սրով նա նայում էր նորան գլխարկը ձեռիցը առնելիս, բոլորովին

զինաթափ արեցին Սահառունուն. նա ոչինչ չը կարողացաւ պատասխանել և մնաց:

Յանկարծ նորա յետելին լուեց իշխան ։ Նակունու ձայնը: Նա Ամիրանովի հետ ներս մտաւ:

— Օհօ՛, սիրելի Գէօրգի Ալեքսանդրովիչ, գնո՞ւմ էք: Զէ, ուր էք զնում, կացէք միասին ճաշենք:

Հեղինէն ուրախ—ուրախ փաթմաթւեց քեռու վզովը:

— Սկի չէի սպասում, ե՞րբ էք եկել:

— Սսա տեսնենք, սիրունս, ինչպէս է քէֆդ, հալդ, ասաց Նակունին ու գրկեց Հեղինէին: Լոյսին մօտեցիր, մի լաւ նայեմ քեզ, ինչքան ժամանակ է չեմ տեսել, շարունակում էր նա շուռ և շուռ տալով քրոջ աղջկանը:

Սահառունին նորից սկսեց մնաս բարեւ անել, բայց Նակունին բանեց կուտը ու զօռով նստացրեց:

Ես քրոջս աղջկայ տան տէրն եմ, այնպէս չի՞, Միխայիլ Պետրովիչ: Խնչ ես սուս կենում, ինչո՞ւ չես լնկօրդ համոզում որ մնաց:

Ամիրանովը թթւած դէմքով կիսաբերան ասաց, — ճաշին մնամեզ:

— Զը գիտէ՞ք, Գէօրգի Ալեքսանդրովիչ, որ քեռին սասաիկ վիրաւորանք է համարում՝ իւր համար եթէ իւր խաթրը կոտրում էն, չը կատարելով այդպիսի մի չնչին խնդիրք, կամաց ասաց Հեղինէն Սահառունուն:

— Գիտեմ և այդ պատճառով կը մնամ, ժպտաց նա և շարունակեց լնկհատած խօսակցութիւնը Նակունու հետ:

Մինչ այդ՝ հիւրերը քիչ քիչ հաւաքւեցին, վերջապէս եկաւ և նա, որի խաթեր սարքւած էր աց խնջոյքը: Ամիրանովը դէմքին պատշաճաւոր արտայայտութիւն տւեց և խոնարհաբար խնդրեց նորան նստել ճաշին ժամանակ գեներալ Կ-ի ուշադրութիւնը ուղղւած էր զլխաւորապէս տանտիկնոջ վերաց, որ նորա կողքին էր նստած: Խսկ նա անդադար երեսը շուռ էր տալիս և ականջ զնում սեղանի միւս ծայրում նստողների խօսակցութեանը:

— Այդ ինչի մասին էք, պարզներ, այդքան տաք—տաք խօսում, որ մինչեւ անդամ գեղեցիկ սեռն էլ գրավել է ձեր խօսակցութեամբ.

—Մենք, ձերդ գերազանցութիւն, վիճում ենք, թէ արդեօք լաւ կը լինէր որ Թ-սում համալսարան հիմնւէր թէ չէ, պատասխաննեց հիւրերից մէկը:

—Հա, ես էլ լսել եմ, որ քաղաքացիք ուզում են յարմար առիթ պատահելիս խնդրել, որ այսուղ համալսարան հիմնեն, բայց սիալում են, դրանից բացի վնասից ոչինչ չի ստանայ քաղաքը, ինքնավատահ կերպով ասաց գեներալը գինի լցնելով Հեղինէի բաժակը:

—Ինչո՞ւ որ, թոյլ տւէք հարցնել, զարմացած հարցրեց Սահառունին:

—Որովհետև առանց այն էլ ձեր երիտասարդները տաք — զլուխ են, համալսարանական կեանքը աւելի կը բորբոքի նրանց և նրանք՝ փոխանակ իրանց գործով պարապելու՝ կ'սկսեն զանազան երեակայական գաղափարների ու ցնորքների յետևից ընկնել...

Վէճը դարձաւ ընդհանուր: Սահառունին սկսեց խօսել գեներալի դէմ. Խշիան Շակունին իւր բարձրածայն բացականչութիւններով և Հեղինէն երբեմն — երբեմն մի քանի կցկտուր կիսածայն արտասանւած խօսքերով քաջալերում էին նորան. գտնեցին և գեներալի յայտնած գաղափարի պաշտոպաններ: Ամիրանովը իրան շատ վաս էր զգում, կարծես փշի վերայ նստած լինէր...

—Օրհնած է բերանդ, օրհնած, Գէօրգի Ալէքսանդրովիչ: Հանգուցեալ հայրն էլ շատ ճարտարախոս էր, բացականչեց Շակունին: Խմէք, պարոններ, մեր անմահական կախիթու գինին, աւելցրեց նա ուրախ — ուրախ բաժակ բաժակի խփելով հարեանների հետ: Թողծադրկի Կովկասը:

Այն երկիրը, որ այդպիսի կենսատու խմիչք է արտադրում, չի կարող չը ծնել և լաւ ու խելօք զաւակներ:

— Ճիշտ է, ճիշտ, հաստատեցին մի քանի քէֆովցած ձայներ:

— Եւ գեղեցկուհի կանայք, այնպէս չի՝ վրայ բերեց գեներալ Կ-ն աչքով անելով Հեղինէին: Պարոններ, կեցցէ գեղեցիկ տանտիկինը:

Վերջաւսէս խօսակցութեան նիւթը փոխեց, ազատ շունչ քաշեց Ամիրանովը:

Ճաշից յետոյ տղամտրդիկ շարունակում էին խմել: Հեղինէն քաշւեց իւր սենեակը:

Հիւրերի կատարները հետզհետէ աւելի տաքանում՝ էին, աղմուկը սասառկանում՝ էր: Իշխան նակունին իւր սովորութեան համեմատ սկսեց պատուել զանազան արկածներ իւր պատերազմական կեանքից: Ամանք ուշադրութեամբ լսում էին, շատերը յօնքերի տակից ծուռ—ծուռ նայում էին պատերի մօտ շարւած սեղաններին, մտածելով որ զուր են կորցնում ոսկի ժամանակը: Ժամի տասնը մէկին հիւրերը ցրւեցին:

## II

—Պէտք է շատապել, գնամ՝ մնաս բարեւ անեմ՝ նորան, վաղը լուսադէմին պէտք է ճանապարհ ընկնել, ասում՝ էր ինքն իրան Սահառունին: Ամիրանովների խնջոքից երկու օր յետոյ:

Նատ ծանր էր նորա համար անջատւել Հեղինէից, բայց այդ նա շատ պատճառներով անհրաժեշտ էր համարում: Մօտ հինգ րոպէ նա մնաց կանգնած Ամիրանովների դրան մօտ, կարծես աշխատելով սրտափնդւել, յուզմունքը զսպել, բայց խոռովութիւնը քանի գնում՝ սասականում էր, վերջապէս նա վճռական կերպով քաշեց զանգը և քայլերն ուղղեց դէսլի այն սենեակը, ուր առհասարակ նստած էր լինում Հեղինէն ճաշից առաջ:

Նա կարգում էր և մատիտով նշաններ էր անում՝ լուսանցք ներում:

—Ներեցէք, տիկին Հեղինէ, որ խանգարեցի ձեր ընթերցանութիւնը, դուք այսպիսի ժամերին հիւրեր ընդունել չեք սիրում:

—Ձեր ացցելութիւնը ինձ ամեն ժամանակ զւարճութիւն է պատճառում, զգացւած ձայնով ասաց Հեղինէն ձեռք տալով նորան: Խնչպէս տիտուր էք այսօր, ինչ է պատահել, Գէօրգի Ալքանովովիչ, աւելցրեց նա ջերմ կարեկցական եղանակով, հրաւիրելով որ նստի իւր կողքին:

—Ոչինչ... մի քիչ քէֆ չունեմ:

—Խնչու չեք զիմում բժշկի, երեւում է որ տկար էք:

—Հայրենիքի օղը հազար զեղից լաւ կը բժշկի: Կա վաղը գնում եմ և., եկաց ձեզ մնաք բարեւ ասելու:

Հեղինէն սպառնեց:

—Մայրս կանչում է, մօտ չորս տարի է որ իրար չենք տեսել.

ես վաղուց էի ուզում մօրս տեսութեան գնալ, բայց չէր յաջողում:  
—Ե՞րբ կը վերադառնաք:

—Մէկ—երկու ամսից յետոյ, չեմ կարծում որ աւելի մնամ:

—Այստեղ տիսուր կը լինի առանց ձեզ, տիսուր ձայնով ասաց  
Հեղինէն և մեկնեց նորան ձեռքը, որ նա անդիտակցաբար մօտեցրեց  
իւր շրթունքներին:

Հեղինէն կամաց յետ քաշեց ձեռքը, որ նա պինդ սեղմում էր,  
և ծիծաղեց:

—Հերիք է, հո յաւիրուեան չենք բաժանւում իրարից, ասաց  
նա կարմրելով:

—Ես այնպէս սովորել եմ ձեզ, որ ինձ համար զգալի է և  
կարճատու անջատումը: Զեր մէջ մի տեսակ ոց կայ, մի տեսակ բա-  
րիք, որ դուք բաշխում էք բոլորին առանց այդ զգալու, ասաց Սա-  
հառունին այնպիսի յուզմունքով, որ Հեղինէն տուած նորա մէջ չէր  
նկատել: Յանկանում եմ ձեզ կատարեալ բախտաւորութիւն, մանա-  
ւանդ հոգու անդորրութիւն. իմ խորին համոզմունքով ոչ մի կին  
այնքան արժանի չի դորան որքան դուք:

Նորա ձայնը դողաց, երեսը կարմրեց:

—Տեսէք, Գէօրգի Ալէքսանդրովիչ, մէկ-մէկ նամակ գրէք, ու  
մոռանաք մեզ, սիրով արտասանեց Հեղինէն:

—Ել ում պէտք է յիշեմ որ:

Սահառունին զղջաց, որ չը կարողացաւ իրան զսպել և բերնից  
թռցրեց այդ խօսքերը:

Հեղինէն սովորականից աւելի քնքոց ու քաղցր հայեացքով նա-  
յեց նորան:

—Կացէք մեզ մօտ ճաշի:

—Խօսք եմ աւել Ասունուն. Ընկերներս նորա մօտ ինձ սպա-  
ռում են:

—Ճիշտ որ, ես մոռացել էի որ Սիխայիլ Պետրովիչն էլ այնտեղ  
է ճաշելու:

Մի քանի բռպէից յետոյ նրանք տւեցին իրար վերջին ողջոյնը  
ամենաջերմ և անիեղծ բարեմաղթութիւններով:

Երկար ժամանակ Ասհառունին կանգնած մնաց դրան մօտ, —  
շատ ծանր էր նորա համար հեռանալ սիրած էակի տանից: Բայց

ահա մի ոտնաձայն լսեցր Թամարն էր։ Սահառունին մի ակնթարթում դուրս եկաւ փողոցը և առանց չետ նայելու արագ քայլերով դիմեց զէպի Ասունու տունը։'

Հեղինէն այն աստիճան շւարել էր վերջին դէպքից, որ չը նկատեց տալի ներս մտնելը. նա ձեռքը դրեց ուսին, բայց այդ էլ չսթափեցրեց նորան։

— Ինչ է պատահել քեզ, Հեղինէ, քնած ես, ինչ է։

— Ախ, դու ես, Թամար, ներիր, չը նկատեցի քեզ, ցնցւեց Հեղինէն։ Եփեմեան էլ քեզ հետ է։

— Զէ, չէ... ես միայն այն ժամանակն եմ ազատ շունչ քաշում երբոր նա հետա չի լինում, համարեա շնչելով արտասանեց Թամարը և վախվինելով նայեց չորս կողմը։

Հարսը կարեկցաբար նայեց նորա վերայ ու ընկաւ մտածմոնքների մէջ։ Նորա զիխիցը դուրս չէր գալիս Թամարին մարդու տալու մասին եղած խօսակցութիւնը և, չը նայելով որ մարդը ինորել էր Թամարին բան չասել դորա մասին, նա վճռեց գոնէ ակնարկութեամբ հասկացնել նորան այդ։

— Է՛հ, մեր օրն էլ օր է էլի, ուրիշներն էլ են տառում թէ աղրում են, ես էլ եմ ասում, խեղճ—խեղճ ասաց Թամարը։

— Սխալմում ես, աւելի վատն էլ կայ։

— Օրինա՞կ։

— Անբախտ և անզգոյշ ամուսնութիւն։

Տալլ զարմացած նայեց հարսին, կարծես ուզելիս լինէր ասել՝ ես միակ փրկութիւնը ամուսնութեան մէջն եմ տեսնում, իսկ սա ինչերիցն է խաբար տալիս։

Հեղինէն հասկացաւ թէ ինչ է անցնում նորա մոքովը և՝ բոնելով նորա երկու ձեռքը՝ ասաց. — Կարելի է շուտով քեզ մարդու գնալու դէպք պատահի. իսկոյն հաւանութիւն չը տաս առաջ մի լաւ տնտղի սիրտ. տես ինչ կասի քեզ նա։ Մենակ Միքայէլի ու Եփեմիացի խորհուրդներով չը բաւականանաս, ուրիշներից էլ խորհուրդ հարցրու, մի խօսքով լաւ չափիր կշռիր։ Ներիր որ քեզ խորհուրդ եմ տալիս, գուցէ քեզ դուր չի գալիս այդ, բայց դու յետոյ կիմանաս... թէ ինչու... ես հարկաւոր համարեցի...»

Թամարը մէկ կարմրում, մէկ զեղնում էր և թէև լուս եր, բայց

նորա աչքերը պարզ ասում էին. — թող մի գեպք պատահից ազատւելու, երկար ու բարակ չեմ մտածել, շուտ կը վճռեմ.

Այդ ազատութեան յոյսը պայծառացրեց մի բոպէ Թամարի սովորաբար տիտոր գէմքը:

— Ինչպէս ճնշուած է խեղճը, մտածեց կարեկցելով Հեղինէն նորա գնալուց յետոց Այնպէս է ման գալիս, այնպէս է խօսում որ ձայնը չի լսում, ամէն բանից աչքը վախեցած է:

Հեղինէն շատ անգամ խզնահարում էր մտածելով Թամարի մասին, ուզում էր առաջարկել որ փախւի իւր մօտ, իւր տանը կենաց, բայց մարդը ասում էր որ չի կարելի քոյքերին իրարից բաժանել, իսկ երկուսին էլ տուն բերել և ազդպիսով Եփեմիայի հետ ապրել — այդպիսի անձնազոհութիւն Հեղինէն իւր ոյժից վեր էր համարում:

Մինչ Հեղինէն ազդպէս մտածմունքների մէջ էր, Սահառունին նոյնպէս մուայցը մօտենում էր Սառնու տանը:

— Ահա Գէորգը դալիս է վերջապէս, բացականչեց Թոմանելը նայելով պատուհանից, ասա ճաշը տան, Ալէքսանդր:

— Լաւ ուշացար, բարեկամ: սոված մեռանք, մի քիչ մուայլ գէմքով ողջունեց նորան Ամիրանովը:

— Զուր էիք ինձ սպասում, պարոններ:

— Եթէ քեզ չը սպասէինք, ապա էլ ում պէտք է սպասէինք, վրայ բերաւ. Ասունին:

— Ինչ որ քէֆդ տեղը չի երևում, Գէորգ, հօ բան չէ սպասահել, սրտացաւութեամբ հարցրեց Պետրոսեանցը:

— Հա, Գէորգ, ասում են, որ այս օրերս դու մի քանի բարձրաստիճան անձնաւորութիւնների հետ շատ տաք վիճաբանել ես՝ պաշտպանելով տեղացի բնակիչներին:

— Ինչ կայ որ, անհոգ կերպով հարցրեց Սահառունին և աչքերը դարձրեց գէպի Ամիրանովը:

— Այս էլ հարիւրերորդ անգամնէ որ, քեզ ասում եմ, դու շատ անզգոյց մինչեւ անգամ յանդուգն կերպով ես վարում, տհաճութեամբ նկատեց Ամիրանովը:

— Իոր բան հօ չի, հաստատեց Ասունին:

— Որ չես իմանում, ինչու ես խօսում, Ալէքսանդր, անհամբե-

րութեամբ կտրեց նորա խօսքը Սահառունին ու սկսեց պատմել վէճը  
— Խնչ մի առանձին յանդգնութիւն է այդ որ, բացականչցին  
մի քանիսը:

— Ես ազգասէրներիցը չեմ, բայց գուցէ ես էլ նոյնը ասէի,  
հանդարու աւելցրեց թօմակը:

— Եսկ ես որ լինէի, ազգակս չէ, մի լաւ կը ներկէի նրանց, որ  
էլ չը համարձակւէին բերանները ցրւել:

Պետրոսեանցը այդ արտասանեց զայրացած ձայնով: Նորա աշ-  
քերից կրակ էր թափւում: Միւսներից աւելի տաք արիւն լինելով  
նա աւելի էր վրդովլում:

— Խնչ ասել կուղի, ով չը գիտի որ դու հերոս ես, ծիծաղեց  
երիտասարդներից մէկը:

— Զէ, լաշաք քցենք զլիսներիս, նատենք ու ով որ թքի երես-  
ներիս, ասենք անձրև է գալիս, մոաց դէմքով վնվինթացրեց Պետ-  
րոսեանցը: Քանի ծառայութեան ես մոել, սկսել ես շւաքիցդ էլ  
վախենալ:

— Ես կուղի իմանալ թէ ինչի համար և ում գէմ էք ազգակս  
առաջանում, պարոններ, կարձ կարեց Ամիրանովը, որի երեսից այդ վէճի  
ժամանակ սիի չէր հեռանում արհամարհական—հեղնական ժպիոլ:

— Չուր է, զուր պարոններ, ինչ էք գլուխ ցաւացնում, վրայ  
բերեց Թօմակը, կորած բան է, ձեր ցնորքները վաղ թէ ուշ կը  
ցնդին, նրանց ասածը ճիշտ է և որքան շուտ կառարւի այդ, իմ  
կարծիքով, անքան օգտակար է մեզ համար:

— Ճիշտ որ, անհոգ կերպով հաստատեց Ասունին առանց կշռ-  
լու իւր խօսքերը:

Պետրոսեանցը իրան ուզում՝ էր կտրատել. բոլորը, բոլորը նորա  
գէմ էին: Ամիրանովի համար գաղափարները գրօշ չարժէին, հաս-  
կանալի էր թէ ինչու էր նա հակառակ Պետրոսեանցի ասածներին:  
Թօմակը անկեղծ, ազնիւ մարդ էր. նա համոզւած կօս մօ պօլիտ  
էր, իսկ միւսները, միւսները, նրանք ինչու էին ձայն պահում Թօ-  
մակին: Նորա յոցը Սահառունու վրայ էր և ճիշտ Սահառունին  
ամենքից աւելի կարող էր նորա գաղափարակից համարւել, բայց  
խօսակցութիւնից երևեց որ նա էլ յուսահատւել էր և չէր հաւա-  
տում որ ապագան կարդարացնի Պետրոսեանցի խօսքերը...

Դեռ երկար ժամանակ վիճում էին ընկերները և ոչ մէկը միւսին չէր կարողանում համոզել։ Վերջապէս կէս գիշերին մօտ նոքացրւեցին։

## III

**Միւս օրը** լուսաբացին Սահառունին ճանապարհ ընկաւ դէպի Ե. Քանի կսռթը ուլանալով նորան աւելի ու աւելի էր հեռացնում Հեղինէից, այնքան աւելի սաստիկ էր զգում՝ նա նորա կարօտք Որ օրը որ չէի տեսնում նորան՝ ինձ համար սե օր էր լինում, այժմ ես ինչ պէտք է անեմ առանց նորան. գոնէ իմանալի որ նա բախտաւոր է, այն ժամանակ ոչինչ, ես նորա համար ամեն բանի կը զիմանալի, ամեն բան կը տանէի, բայց կոյք չեմ, տեսնում եմ, որ խեղճը օրէցօր դարդից հալւում մաշւում է, մօտածում էր ինքն իրան Սահառունին կուչ եկած կառքի մի անկիւնում։

Յետոյ ցիշեց նա Կատարինէին, ցաւեց որ այդ սիրուն, անհոգ երեխայի կեանքը այնքան կարճատե եղաւ, մոքի անցրեց նորա հետ միասին անցրած կեանքի բոլոր տարիները և շատ քիչ քաղցր բողէներ զարթնեցին նորա ցիշողութեան մէջ։ Յետոյ նա ցիշեց Հեղինէին ու դարձեալ Հեղինէին... ինչ անում էր չէր անում Սահառունին որ զլիսիցը հանի Հեղինէին ու մի ուրիշ մոքի հետ ընկնի չէր լինում, նորա պատկերը չէր հեռանում նորա աչքի առաջից, կարծես հալածում էր նորան։

Նատ անտանելի եղանակ էր. ցրտից ու խոնաւութիւնից մարմինը սառել էր, ձիւնի փաթիլները ծեծում էին աչք ու երեսը, քամու վզզոցը ծակում էր ականջները, խորդ ու բորդ ճանապարհն էլ լրացնում էր պակասը, բայց քանի մօտենում էր նա իւր ծննդավացին քիչ քիչ աւելի անզգայ էր դառնում դէսլի ցուրտն առ բուքը և ճանապարհի անցարմարութիւնները, և աւելի գեղեցիկ էին թւում նորան սարերն ու ձորերը, դաշտերն ու գետերը։ Վերջացան նորա համար օտոր, անծանօթ աեղերը, սկսւեցին նորա ծննդավացի մօտակայ դաշտերն ու գիւղերը, որոնք ճանապարհի երկու կողմից կարծես ողջունում էին նորա գալուստը։ Նրանք օտար չէին, նրանց ամեն քարը, ամեն մի այգին ցիշեցնում էին նորան մանկութեան մի դէպք և մանկութեան վառ ցիշողութիւնները կայծակի արագու-

թեամբ սկսեցին անյնել նորա մոռքով՝ լցնելով նորա սիրտը քաղցր զգացմունքով...

Անցաւ մի քիչ էլ և ահա նա տանն է իւր մօր, իւր սիրելի մօր գրիում...

Այս անդամ Սահառունին աւելի հանդիսո, աւելի սառնասիրտ էր վերաբերւում իւր հայրենակիցներին. նրանք էլ մոռացել էին իրանց թշնամութիւնը և աւելի սիրալիր կերպով էին ընդունում նորան: Առաջին անդամ որ վերադարձաւ Ե. նա պաշտօն չունէր և աջ ու ձախ ամենքին կրիտիկացի էր ենթարկում, իսկ այժմ նա իրան ծանր է պահում և վերջապէս՝ որ ամենազլիսաւորն է՝ նա աստիճանաւոր է ու բաւական բարձրաստիճան, էլ ի՞նչպէս կարող է Ե-ի հասարակութիւնը առաջւայ պէս վերաբերել նորան:

—Ես գիտեի ախր, ես միշտ ասում էի, որ ձեր նման խելօք ու կրթւած մարդը շուտով կը գտնի ուղիղ ճանապարհը, ասում էր նորան մէկը պատուհելիա:

—Նատ լաւ էք արել, Գէօրգի Ալեքսանդրովիչ, որ ծառայութեան էք մտել, բարեկամաբար նկատում էր մի ուրիշը:

—Յայտնի բան է, որ աւելի լաւ է գործով պարապել, քան թէ ջուր ծեծել: Տեսար՝ մարդ դարձար, բարեկամ, ասում էին աւելի մօտ ծանօթները:

—Գէօրգ ջան, էլ Ասոծուց ոչինչ չեմ՝ ուզում, քո պէս թագաւոր որդի ունեմ, արար աշխարհքը քեզ գովում ու յարգում է, վաղքշում էր նորան մայրը:

—Նրանց գովասանքն ինձ համար զրօշ չարժի, մասածում էր այդ ժամանակ Սահառունին, բայց մօրը ոչինչ չէր ասում:

Նորա ծիծաղն ու խեղճն էր գալիս այդ մարդկանց վերայ, որ մարդու արժանաւորութիւնը պաշտօնի աստիճանովն էին չափում ու բացի իրանց չնչին անձնական շահերից ոչինչ վերայ չէին մտածում, բայց այնահետ չէր վրդովւում, չէր տաքանում ինչպէս վեց տարի առաջ, երբ որ նորա երիտասարդ ու անփորձ սիրով զեռ չէր պլնդացել կեանքի դառն հարւածներից, երբ որ նա զեռ վասւում էր ովերութեամբ ու գործունէութեան փափազով:

Ե. գալուց մի քանի օր յետոյ Սահառունին սկսեց եռանդով պարապել տնտեսութեամբ. տնային գործերը կարգի բերեց ու սկսեց

ծանօթանալ իրանց կալւածի հետ, որ քաղաքից 10 վերսու հեռու էր:

Միայն սեպհական կալւածը չէր, որ գրաւում էր Սահառունու ուշազրութիւնը. անդադար նա պատում էր շրջակայ գիւղերն ու կալւածները, ուսու մնասիրում էր կալւածատէրերի ու գիւղացիների տնտեսավարութիւնը: Այդ ուսու մնասիրութիւնից նա այն եզրակացութեանն եկաւ, որ անտեսական կողմից ոչ ժողովուրդը ոչ էլ կալւածատէրերը առաջ չեն գնում: Նոյն նահապետական տնտեսութիւնը, նոյն անդրջնեղեղեան գործիքները: Վիճակագրական տեղեկութիւններ հաւաքելով, նա համոզւեց որ՝ չը նայելով բարեխաջող կլիմայական սացմաններին ու հողի բարեբերութեանը՝ հողատէրերի ու հողագործների եկամուռները համեմատաբար չնշին են և որ անհրաժեշտ է փոխել տնտեսութեան եղանակը: Թէև արտասահմանում եղած ժամանակ Սահառունին մասնագետորէն չէր սպարապել գիւղանտեսութեամբ, այլ ուսու մնասիրել էր տեխնիքական գիտութիւնները, բացց էլի նա շատ հեշտ կարող էր հասկանալ այդ անմիտիթար գրութեան պատճառուները: Նա տեսնում էր, որ ձգտումն չը կայ փոփոխութիւններ մոցնել տնտեսութեան մէջ, թողնել հինը և ընդունել նորը, կատարելագործւածը. ժողովուրդը տգէտ է ընդհանրապէս և դուրկ է տեխնիկական տեղեկութիւններից: կալւածատէրերը ժողովրդից բարձր չեն իրանց ոչ ընդհանուր ոչ էլ տեխնիկական զարգացմամբ և իրանք չեն պարագում իրանց կալւածներում գիւղանտեսութեամբ, որ ինչպէս արտասահմանում իրանց շատ անգամ օրինակելի տնտեսավարութեամբ ծանօթացնէին ժողովրդին նորաձե անտեսութեան և կատարելագործւած գործիքների հետ, այլ աւելի լաւ են համարում յանձնել ամեն բան տգէտ ու կեղեքիչ կառավարիչների ու ապրել քաղաքում շուազելով կալւածների եկամուռները:

Աչքի առաջ ունենալով այդ բոլորը և այն որ ինքը կարող էր այդ ասպարէզում օգուտ բերել իւր համագաւառացիներին առանց նրանց իւր դէմ զրգաելու, Ասհառունին վճռեց կարգի բերել իւր կալւածը, պարապել գիւղանտեսութեամբ, գործադրելով այն բոլոր կատարելագործութիւնները, որոնց հասել է գիտութիւնը և պրակտիկան և որոնք մատըլի էին շրջակայ բնակիչներին ու համաստասիսանում էին տեղացին սացմաններին:

Ասհառունուն ամենից շատ զարմացնում էր այն, որ բոլոր երկ-

րագործական աշխատանքները կատարւում էին ամենաանկատար գործիքներով և որ ժողովուրդը կարծես ամենելին կարեորութիւն չէր զգում ժամանակը և աշխատանքը տնտեսելու։ Յափշտակւող Սահառունու երեակայութեան մէջ արդէն պատկերանում էր ապագայ բարեկարգ ադարակը, Փերման, շոգեշարժ գործիքներով, գիւղական ուսումնարանով, իւր շնորհիւ բարօրութեան մէջ ապրող ու յառաջադիմութեան բարիքներն հասկացող գիւղացիներով...

Այդ միտքը օրէցօր աւելի ու աւելի հաստատւում էր նորա մէջ, բայց նա իսկոցն չէր ուզում իրագործել՝ չուզելով խարիսավելով վարել իւր անտեսութիւնը և իւր սխալներով անվստահութիւն ազդել գիւղացիներին դէպի ձեռնարկութիւնը։ Այդ պատճառով նա վճռեց կրկին գնալ արտասահման, լաւ ուսումնասիրել գիւղատնուեսութիւնը և միւնոյն ժամանակ գնել անհրաժեշտ գործիքներն ու նիւթերը։

Արձակուրդի ժամանակամիջոցը վերջանում էր, իսկ Սահառունու կարծես մտքովն էլ չէր անցնում Թ-ս վերադառնալ։ Մի անգամ զիւղից յետ գաւնալով նա իւր սեղանի վերայ տեսաւ երկու նամակ։ Ընկերներիցն էին։ Նրանք շտապեցնում էին նորան, միշեցնում էին որ արձակուրդի ժամանակը վերջանում է, զգուշացնում էին որ չ'ուշանայ, որովհետև նորա մեծաւորը, որ նորան շատ լաւ աշքով չէր նայում, կարող էր օգտաել այդ հանգամանքից և զրկել նորան պաշտօնից։ Սահառունին թափ տալով ձեռքը ու սկսեց քայլել սենեակում։ Յանկարծ նորա աշքովն ընկաւ մի նամակ, որ դրած էր սեղանի միւս ծալրում։ Սիրով ճիշդ վկացեց, մէկ զծի վերայ—Հեղինէի ձեռքն էր։ Նա սաստիկ ուրախացաւ ու շտապով ճղեց ծրարը։ Կարդաց, կրկին ու կրկին կարդաց նա այդ մտերմական ու քնքոյց զգացմունքներով բուրող նամակը և պաշարւած քաղցր մոածմունքներով պարկեց քնելու։ Բայց քունը չէր մօտենում նորա աշքերին։ Հեղինէի պատկերը, կարծես ինքը Հեղինէն կանգնած էր նորա առաջ։ զարթնում էին քաղցր լիշողութիւններ...

Միւս օրը Սահառունին ուզում էր ճանապարհ ընկնել։ բայց Վաղիկաւկազից փեսայի մահւան բօթը հաղորդող հեռադիրը ստիպեց նորան յետաձգել գնալը։ Նա չէր իմանում ինչպէս յայտնի այդ դոյժը իւր մօրը, ինչպէս պատրաստի նորան, որ նորա դարդու սիրաը յանկարծ սաստիկ չը խոցւի այդ լուրից։ Երեք շաբաթ էլ մնաց նա

Ե.-ում, հազար ու մի զգուշութիւններով յալտնեց մօրը ցաւալի լուրը, մի կերպ հանգուացրեց նորան, փոստացաւ որ Թ.-սից շուտով կերթայ Վլաղիկաւկազ քրոջը կը տեսնի, տիրութիւն կանի, ու ճանապարհ ընկաւ:

Դնալուց առաջ նա բոլորովին կարգի բերեց իրանց գործերը, հաշիւները տեսաւ, խարդախ կառավարչին հեռացրեց, տեղը մի վստահելի մարդ նշանակեց և խոստացաւ մօրը, որ մէկ-երկու տարուց յետոյ վերջնականապէս կը տեղափոխսի գիւղը գիւղատնտեսութեամբ պարապելու: Մայրը ուրախանում էր երբոր որդին պատմում էր նորան թէ ինչպէս կը կատարելազործի տնտեսութիւնը, գործարան կը հիմնի և այլն: Որդու հայեացքներն ու ծրագիրներն նորահամար բոլորովին նոր, անծանօթ բաներ էին և նա այդ բոլորին վերաբերում էր մի տեսակ երկիւղածութեամբ:

## IV

Սահառունու դնալուց մօտ երկու ամիս անցած Թ.-սի հայ ինտիվիդնցիացի համար տօն էր,—բացւել էր արհեստագիտական բաժանմունքով ծխական օրիորդաց գպրոցը: Հոգաբարձուները, որոնցից մեծ մասը յանձն էր առել ձրիաբար դաս տալ գպրոցում, խնդրում էին Հնդինեին որ նա ստանձնի նոր բացւած ուսումնարանի կառավարութիւնը: Նա հրաժարւում էր, պատճառ բերելով իւր ձեռագործ չը գիտենալը և խօստանում էր մօտիկ ապագայում մի քանի առարկաներից ձրի դասեր վերցնել:

—Ի՞նչ համակրութեամբ էինք վերաբերում դուք դէպի մեզ, երբ մենք աշխատում էինք բանալ այդ գպրոցը և այժմ յանկարծ հրաժարւում էք մեզ օգնելուց, չէ, դուք պէտք է կանգնէք այս գործի գլուխը, տաք—տաք խօսում էր Պետրոսեանցը, աշխատելով համոզել Հեղինեին:

Պետրոսեանցին ու Սահառունուն էր պատկանում այդ գործի նախաձեռնութիւնը:

Վերջապէս Հեղինէն՝ մարդու կամքի հակառակ՝ համաձայնեց ընդունել գպրոցի տեսչութիւնը, այն պայմանով որ նորա տալլ Թամարը, որ հիանալի ձեռագործ գիտէր, իւր օգնականը լինէր:

— Որքան կուրախանար Գէօրգի Ալէքսանդրովիլիը, եթէ այստեղ լինէր, մոածեց Հեղինէն:

Նա այնպէս սովորել էր մոսնակից անել Սահառունուն իւր մըտածած—զգացածին, որ նորա բացակայութեան ժամանակ էլ մի գործ բռնելիս կարծես պտռում էր նորա քաջալերիչ հայեացքը:

Սահառունու պատկերը օրէցօր աւելի ու աւելի յաճախ էր զարթումնորա սրտում, բայց Հեղինէի զգացմունքը դէպի Սահառունին տարբեր էր նորա դէպի Հեղինէն ունեցած զգացմունքից.—այդ զգացմունքը Հեղինէի սիրտը աւելի հանգստացնում էր, քան բորբոքում:

Սահառունու գնալուց յետոյ երրորդ ամիսն էր: Մի օր Հեղինէն սատրասուում էր գնալ Թամարի մօտ, որ նորա հետ միասին գնացին ուսումնարան: Այդ օրը դժւար է ասել թէ ինչու նա աւելի յաճախ էր յիշում Սահառունուն և աւելի սաստիկ զգում նորա բացակայութիւնը: Նա արգէն ուզում էր զիւարկը դնել, որ յանկարծ համարեա վազէվազ ներս մոռաւ Ասունին:

Հեղինէն սաստիկ անհանգստացաւ. ինչո՞ւ պէտք է Ասունին այդպէս վազ գար նրանց մօտ, ինչո՞ւ էր նա ալդպէս վրդովւած:

— Ինչ է պատահել, Ալէքսանդր Վասիլիչ:

— Սահառունուն կարող են պաշտօնից զրկել. նորա բացակայութեան ժամանակ թշնամիները տակը փորել են և գրգռել են նորա դէմ իշխանաւորներին. ուզում են հեռացնել պաշտօնից:

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ են բերում, ասէք ինդրեմ, կարո՞ղ ենք մենք օգնել, ի՞նչ կարող ենք անել, պէտք է աշխատել:

— Աւելորդ է ձեզ բոլոր մանրամասնութիւնները պատմել, դուք ինքներդ լաւ զիտէք, որ մեր մէջ Սահառունու պէս մարդկանց համար դժւար է ամէնքի հետ եօլա գնալ: Խնդրէք, համոզեցէք Միխայիլ Պետրովիչին, որ նա կոմսին խնդրի, նա կոմսի վրայ մի քիչ աղդեցութիւն ունի:

Ասունին մի քիչ հանգստացած գնաց Ամիրանովսերի տանից:

Հեղինէն յետածգեց ուսումնարան գնալը և անհամբեր սրտով սպասում էր մարդու ծառայութիւնից տուն գալուն: Զայրացած անիծում էր նա այն մարդկանց, որոնք նորա կարծիքով Սահառունութիւն չարժեն և համարձակում են պարսաւել, զրոպարուել նորան:

Ահա վերջապէս զանգը խփեցին։ Հեղինէն ինքը գնաց դուռը բանալու, բայց այդ Եփեմիան էր։ Մի քանի բոպէից յետոյ կրկին զանգը քաշեցին, այս անգամ՝ աւելի պինդ, — Հեղինէն չը սխալւեց, մարդն էր։

— Նուտ արա, Հեղինէ, ճաշ տուր ուտեմ, սաստիկ սոված եմ։  
— Լսել ես, Միշէլ, որ Գէօրգի Ալէք...

— Լսել եմ, լսել, անհամբերութեամբ կորեց նորա խօսքը Ամիրանովը։ Ասա կերակուրը տան։

— Միշէլ, մենք պէտք է օգնենք նորան...

— Հլա մի թողէք հանգստանայ, բերանը մի կտոր բան դնի, տեսնում էք իսեղճը ինչպէս յոդնած ու սոված է, շողոքորթութեամբ մէջ ընկաւ Եփեմիան։

Հեղինէն զիտէր, որ մարդը սոված ժամանակ վաս տրամադրութեան մէջ է լինում և վճռեց ճաշից յետոյ խօսել հետը Սահառունու մասին, բայց ճաշի վերջին Ամիրանովը ինքը սկսեց խօսել։

— Դու զարմանում ես, Հեղինէ, որ Սահառունուն զրկում են սլաշտօնից, իսկ ես տեսնելով նորա անխելք վարմունքը վաղուց էի սպասում որ այդ այդպէս կը լինի։

Այդ ասելով Ամիրանովը կոնծեց մի բաժակ գինի և սկսեց այնապէս ինքնագոհ դէմքով շփել ձեռները կարծես մի երեելի բարի գործ էր կատարու մ։

Կինը շւարած նայում էր նորա վերայ։

— Զարմանում եմ, Միշէլ, դու քո մօտ ընկօր մասին այնպէս ես խօսում։ կարծես թշնամիդ լինի։

— Իմ կարծիքով, Միքայէլլ իրաւունք ունի նորան թշնամաբար վերաբերւելու։

— Զէ, Եփեմիա, սխալում ես, ես նորան իրեւ բարեկամ սիրում եմ։

— Դուք, ինչպէս երեւում է, չէք հասկանում թէ մենք ինչի մասին ենք խօսում, բարկացած նկատեց Եփեմիային հարսը։ Թողէք ես ու Միքայէլլ խօսենք։

— Որ այդպէս է՝ ուր եմ մնում այսուղ, գնում առն, նեղացաւ Եփեմիան։

— Բան շը կայ, մնայ, մենք գաղտնիք չունինք, ասաց Ամիրանովը ու չը թողեց որ գնայ:

Հեղինէն թախանձադին հայեացքով նայեց մարդուն և, համոզելով որ երկուսով գնան առանձնասենեակը մի քանի բոպէ խօսելու, սկսեց աղասել որ աշխատի հերքել Սահառունու թշնամիների նորավրայ բարդած զրապարտութիւնները:

— Զարմանալի բան է, Հեղինէ, ով է քեզ ասել, որ իմ ձեռքից բան կը գայ, ես ինչ կարող եմ օգնել:

— Եոլորն էլ ասում են, որ դու, աւ ես կոմսի հետ:

— Միամիտ ես, շատ միամիտ, Հեղինէ: Ազգալիսի մարդիկ մարդու հետ լաւ են լինում քանի որ մարդ նրանցից կախումն կամ կարօսութիւն չունի, բան չի խնդրում: Կոմնը այնպէս զրգուած է Սահառունու դէմ, որ հենց ես մի ծպտուն եմ հանել նորա խաժեր, ես էլ աչքիցը կ'ընկնեմ:

— Ե, սաստիկ սխալում էի ես որ քեզ բարեկամութիւն ճանաչող մարդ էի համարում: Ես կարծում էի, որ դու քեզ ու քեզ առանց ուրիշի խնդրելու կը զգաս որ պէտք է օգնել ընկորդ, իսկ այժմ ինչեր եմ լում քեզնից, զայրացած ասաց Հեղինէն ու ուզում եր դուրս դալ սենեակից, բայց Ամիրանովը ինչ-որ յիշելով կանգնացրեց նորան ու բազցրութեամբ ասաց.

— Լաւ, մի բարկացիր, կ'աշխատեմ ինչ որ ձեռքիցս զայ անել, բայց հաւատացիր, հոգիս, որ նա երբէք չի ուղղւի:

Կինը շւարած նայում էր մարդուն:

— Հա, լաւ յիշեցի, Հեղինէ, մոռացայ քեզ ասեմ, որ կոմսուհին քեզ հրաւիրում է վաղը ճաշի:

— Ինչպէս կարող եմ այս դրութեամբս շիւր գնալ:

— Ոչինչ, մեծ հասարակութիւն չի լինի, ընտանեկան ճաշ կը լինի, կոմնը շատ խնդրում էր որ անսպատճառ գնաս, աղաչում էր Ամիրանովը կնոջը. իսկ այնուեղ, Հեղինէ, թէ ինձ սիրում ես, շողոքորթութեամբ շարունակեց նա, որքան կարող ես քաղցր վարւիր կոմսի հետ. ես էլ կաշխատեմ յարմար բոպէ գոնել, ու խնդրել Սահառունու համար:

Հեղինէն բռնեց մարդու ձեռքը և, ողիղ աչքի մշջը նայելով, ասաց:

—Ազնիւ խօսք տուր, որ խոստումկ կը կատարես:

—Վաշխառեմ ինչ էլ լինի խնդիրքդ կատարել, իսկ դու, սիրունս, աշխատիր լաւ հագնելք: Տես, շատ մի տաքացիր Սահառունու համար, թէ չէ ես էլ նախանձել դիտեմ, կատակով ասաց նա համբուրելով կաջը:

—Դու զիտես, Միքայէլ, որ ես Գէօրգի Ալեքսանդրովի վրայ նայում եմ իբրև եղբոր վրայ և նորա կնոջը քրոջն նման սիրում էի:

—Լաւ, լաւ, կատակ էի անում, ծիծաղեց Ամիրանովը, իսկ այժմ՝ քեզ առանց կատակի ասում եմ, որ լաւ ուշադրութիւն դարձնես հագուստիդ վերայ, կինը պէտք է միշտ հողս տանի իւր շէնք ու շնորհքի վերայ: Վաղւայ համար պատրաստիր կապոյն մետաքսէ շորդ, անցեալ անգամ ամենքն ասում էին որ քեզ սազում է նա:

Հեղինէն ծիծաղեց ու խոստացաւ կատարել նորա ցանկութիւնը:

—Ուրիշ բան չունի. հէնց այն է, որ ինձ տիկնի նման զարդարի, անցաւ նորա մոքովը,

Միւս օրը Հեղինէն նստած կարգում էր. Ամիրանովը ներս մտաւ ու սկսեց շտապեցնել, որ շուտ անի պատրաստի հիւր գնալու:

—Ժամանակ շատ կայ, Միքայէլ, ինչ ես շտապում, մինչև ճաշ ժամ ու կէս է մնում՝ դեռ:

—Զէ՞ պէտք է հագնելս, դրառես:

—Դու էլ ինչ ես այսօր լնկել իմ հագնելու հետ, սկի չես մոռանում:

Ամիրանովը, երբ որ տեսնէր կնոջը գիրք կարգալիս, կասէր հեգնօրէն, որ կանայք՝ քանի որ աննպատակ են ապրում՝ «զիրք են խաղում», ինչպէս որ երեխայ ժամանակները տիկնին էին խաղում, բայց հէնց որ մայր դարձան գրքերը դէն կը քցին:

Ժամի չորսին Ամիրանովն ու կինը գնացին ճաշի: Մեծամեծների ճաշը նորանով է նշանաւոր, որ ժամերով մնում են նստած սեղանի շուրջը, պահպանում են զանազան ձանձրալի ձևականութիւններ ու զբաղւում են դատարկ խօսակցութեամբ:

Հեղինէն՝ հետեւելով մարդու խորհրդին՝ ոչ միայն տռաջւայ պէս արհամարհաբար չէր վերաբերում կոմինի կաւալերու թեանը, այլ և աշխառում՝ էր զոռել իրան և՝ որքան կարող էր՝ քաղցր

վարւել նորա հետ ձաշից յետոց տեսնելով որ կոմսը լաւ տրամադրութեան մէջ է, նա մօտեցաւ մարդուն ու փսիսաց ականջին։ Ամիրանովլ գլխով հաւանութեան նշան արեց ու մի քանի րոպէից յետոց կոմսի յետելից գնաց առանձնասենեակը։ Իսկ Հեղինէն գնաց հիւրասենեակը, ուր տիկինները սուրճ էին խմում։ Նա իրան լաւ չէր զգում։ քէֆը վաստ էր։ Կոմսուհին այդ նկատեց ու տարաւ նորան իւր ննջարանի կողքի սենեակը, որ աջնտեղ մի քիչ հանգըստանաց։

Հեղինէն թեք ընկաւ փափուկ բազմոցի վերաց։ Բազմոցը դրած էր առանձնասենեակի դրան մօտ, այնպէս որ նա սկամայ լսում էր կոմսի ու իւր մարդու խօսակցութիւնը։ Լսում էր և ականջին չէր հաւատում։ Ամիրանովլ փոխանակ Սահառունու համար խնդրելու՝ իւր համար էր ինչ-որ խնդրում... լա՛ւ, կոմսը ընդունեց խնդիրքը... ահա Սահառունու անունն են տալիս... Հեղինէի սիրտը սկսեց բարախել... բայց զարմանալի բան է Ամիրանովլ փոխանակ խնդրելու, փոխանակ պաշտպանելու իւր ընկերոջը, վատարանում է նորան, զրպարտում է, անւանում է նորան խաւնակիչ, ասում է որ նա իւր գործը չի հասկանում, ոռւսերէն էլ չը գետի...

Հեղինէի սիրտը տակն ու վերաց եղաւ։

—Ստոր, վախկոտ արարած, խաբերալ, ասաց ինքն իրան Հեղինէն։ Մեծաւորների աչքը մտնելու համար ամեն բան կանի, բաւական չի որ, վախենալով թէ յանկարծ կոմսը իւր մասին կարծիքը մի քիչ կը փոխի, չի կատարում իւր պարտականութիւնը դէպի իւր բարեկամը, գեռ զրպարտում էլ է նորան... Մարդ որ մի անգամ խղճմուանքը կորցրեց, էլ դժւար թէ ուղղեի, իսկ որ նա խիզճ ասած բանից զուրկ է, այժմ ինձ համար օրը—ցերեկի նման պարզ է... Զէ, զուր եմ աշխատում, ես այդպիսի մարդու սիրել չեմ կարող. որքան ստոր է նա նորանից...

Հեղինէի աչքերը կատաղութիւն ու զայրոյթ էին արտայաջտում։ յետոց կարծես ինչ-որ մի ցիշողսւթիւն փոխեց նրանց արտայայտութիւնը։ Հեղինէի հայեացքը կանգ առաւ մի կէտի վերաց, նա սկսեց աննպատակ նայել այդ կէտին, կարծէս մոռացաւ ամեն բան, որ իրան շրջապատում էր և մտքով վերացաւ, սլացաւ ուրիշ աեղ՝ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ...

Քառորդ ժամից յեսոյ Հեղինէն սաստիկ վրդովւած ու տխուր գնաց տուն:

Միւս առաւօտը նա սաստիկ թոյլ էր զգում իրան. ներքին կահւը ուժասպառ էր արել նորան:

Արեգակը ուրախ լուսաւորում էր նորա սենեակը. հրաշալի եղանակ էր, նա չը կարողացաւ իրան զսպել ու վեր կացաւ անկողնիցը որ պատուհանից նայի իւր սիրելի ձիւնապատ սարերին, բայց չէր կարողանում ոտքի վերաց կանգնել, մի քանի քայլ արեց, ընկաւ բազմոցի վերաց ու սկսեց լալ դառն արտասունքներով:

—Միթէ ելք չը կայ, միթէ յաւիտեան ես կապւած պէտք է մնամ այնպիսի մարդու. հետ, որին ես չեմ կարող սիրել: շնչաց նա ու խորը մտածմունքներ պաշարեցին նորա հոգին:

Հեղինէն ընդ միշտ բաժանում էր իւր փայտացած խարուսիկ ցնորքներից. նա մեղաղրում էր իրան, որ այդքան ուշ էր հասկացել, որ զուր էին իւր բոլոր յոյսերը, զուր էր պատում իւր մարդու մէջ այն ինչ որ պէտք էր իւր սրտին, ինչին ծարաւում էր իւր հոգին:

Երկար ժամանակ այդպէս նատած էր Հեղինէն հերարձակ, զըլուխը յենած բազմոցի մէջքին: Յանկարծ նա սթափւեց մի թեթև շօշափումից:

—Ինչպէս ես զգում քեզ. Հեղինէ: Ես աշխատում էի որքան կարելի է զգոյշ հեռանալ այստեղից, որ չը խանգարեմ հանգիստ:

—Ինչպէս, միթէ զու այստեղ էիր քնել, այնպիսի ձայնով հարցրեց կինը կարծես օձի խայթելուց վախեցաւ, և զգւանքով երեսը շուռ տեսց մարդուց:

—Ինչու այդպէս վտխեցար. հօ առաջին անգամը չի որ մենք միասին ենք լինում...

—Հա, հա... ես մոռացել էի... հեռացեք, ինձ մենակ թողէք, ինդրում եմ...

—Ի՞նչ է պատահել քեզ երէկ, Հեղինէ: Ուստիկ վախեցաց, երբ որ Կոմսուհին ինձ առաց որ հիւանդացել էիր. ուզում էի իսկոյն տուն գտլ, բայց...

—Երանի սկի վերադառնութ չը լինէիր, այրւած, կսկծող սրտով ընդհատոց նորա խօսքը Հեղինէն: Այս, ինչու մենք իրար հանդիպեցինք:

—Հեղինէ, ինչ է պատահել քեզ, շւարած բացականչեց Ամի-  
րանովը: Լա՛ւ վարձառութիւն է, ես ամեն հնարք գործ դրեցի  
Սահառունուն օգնելու համար, չը վախեցայ մինչև անգամ նորանից  
որ իմ անունս կարող է կոտրւել...

—Լոիի՛ր, ինչպէս ես կարողանում առանց կարմրելու սուտ ա-  
սել: Զը լինի ինձ հաւատացնես, որ ինքդ Կոմսին աւելի չէիր գր-  
գռում նորա դէմ:

Մարդը մի բոսկ շփոթւեց և ապշած նայում էր կնոջ վրգով-  
ւած, զայրացած դէմքին: Նորա սրտում կասկած զարթնեց, թէ մի  
գուցէ կինը լսել է իրանց խօսակցութիւնը, բայց իսկոյն այդ կաս-  
կածը դէն քցեց և հաստատ կերպով պատասխանեց.

—Երդում եմ քեզ, քո արելը վկայ, իմ սէրս վկայ, մեր ապա-  
գայ զաւակի արելը վկայ, որ ճիշտ եմ ասում:

—Խա՛չը դժւար է չը հաւատալ, դառը ծիծաղեց Հեղինէն,  
եթէ ես իմ ականջովս լսած չը լինէի ձեր խօսակցութիւնը, ով է  
իմանում ես էլ հաւատացի ու նորից խարւէի: Այժմ տեսնում եմ,  
որ քո ամբաղջ կեանքը խաբերացութիւն է եղել: Ով որ այդպէս  
հիանալի կերպով կարողանում է կեղծել, նա շատ ստոր մարդ  
պէտք է լինի, ասում էր Հիղինէն հետպհետէ բարձրացնելով ձայնը  
և զդանքով նացելով մարդուն:

Այս, դառնութեամբ աւելցրեց նա, ինչ ասես չէի տալ, որ իմ  
ապագայ զաւակս կրթւէր հեռու այն կեղտոտ սովորութիւններից,  
որոնք արմատացել են ձեր մէջ:

Մի քանի բոսկ տիրեց խորին լռութիւն: Հեղինէի հայեացքը  
խիստ էր և արհամարհական, նորա սեղմւած շրթունքների վերայ  
երեւում էր զառն հեղնական ժպիտ, իսկ սիրու սառն էր, սաստիկ  
սառը, կարծես նորա բոլոր ջերմ, քնքոյց, դորովալից զգացմունքները  
յանկարծ մնոնելով տեղի էին տւել արհամարհանքի, դառն թա-  
խիծի ու հեգնութեան: Ոչ մի ժամանակ նորա մէջ այնքան սաստիկ  
չէր արտայայտւել մաքի համարձակութիւն, հոգու ազատութիւն և  
նորութեան ժարաւ՝ ինչպէս այդ բոսկին, ոչ մի ժամանակ նա այդ-  
քան լուրջ կերպով չէր վերաբերւել կեանքի ստոր ու կեղտոտ կող-  
մերին, կարծես նորա աչքերը յանկարծ հրաշքով բացւեցին և նա  
տեսաւ իւր առաջ անյատակ անդունդ...

Ամիրանովը տեսաւ, որ անկասկած կինը լսել է իւր ու կոմսի խօսակցութիւնը: Սուտը բռնւել էր և նա մնացել էր շփոթւած, ամօթահար: Յանկարծակի բռնւելով, նա երկար ժամանակ չէր կարողանում մի հնարք գտնել կնոջ առաջ արդարանալու համար:

Հեղինէ, զուր ես ինձ վերայ յարձակուում, մի քիչ անվճռական կերպով սկսեց խօսել Ամիրանովը: Դու, ինչպէս երեւում է, չես ճանաչում կոմսին: Այդպիսի մարդկանց հետ բանը ուղիղ տանել չի կարելի: Մարդ սէտաք է առաջ սկսի նրանց խաթրովը գնալ, նրանց ասածին ձայն պահել, ցոյց տայ թէ համաձայն է, նոյն կարծիքին է, յետոյ քիչ սկսի իւր գործը առաջ տանել, կակղացնել, համոզել: Ափս'ս, շատ ափս'ս, որ դու մինչեւ վերջը չես լսել մեր խօսակցութիւնը. այն ժամանակ այսպէս չէիր խօսիլ:

— Հերիք է, հէրիք, Աստծու սիրուն, հեռացէք այսուեղից: Մեր մէջ այսուհետեւ ամեն բան վերջացած է:

— Խաչը, Հեղինէ, այնպէս ես խօսում, կարծես սիրեկանիդ անպատուած լինեմ, յանկարծ թռցրեց բերնիցը Ամիրանովը, բայց իսկոյն զղջաց որ այցպիսի անսոեղի նկատողութիւն արեց:

— Կարող ես կարծել. քո սէս անսիրտ, եսական մարդիկ ի՞նչ կարող են հասկանալ, որ կինը կարող է մաքուր, բարեկամական զգացմունքով վերաբերել մի որ և է տղամարդու: Դու զուր ես քեզ միամիտ ձեւացնում, զու լաւ հասկանում ես, որ իմ զարոյթիս պատճառն այն չի որ Սահառունին զրպարտութեան առարկայ է եղել, նա փառք Աստծու ինքն էլ կարող է իրան պաշտպանել, այլ քո վերին աստիճանի զզւելի վարմունքը ես երբէք չեմ կարող մոռանալ և ներել այդ սատրութիւնը: Եմացած կաց, որ ես կարող եմ յարգել և սիրել միայն այնպիսի մարդու, որ իւր բարոյական պարտականութիւնները բարձր է դասում իւր անձնական շահէրից:

Ասաց Հեղինէն ու զայրոյթով լի հայեացք քցելով յարդու վերաց գուրս եկաւ պատշգամբը ներքին կրակը հովին տալու:

Ամիրանովը ինքն իրան մսիթարում էր, մտածելով որ կնոջ զայրոյթը շուտով կը նառի, հէրիք է որ ինքը սկսի աւելի քաղցր վարւել հետը, աւելի սէր ցոյց տալ և աշխատի իսաբել նորան, ինչպէս միշտ յաջողել էր նորան, բայց այս անդամ՝ նորա յոյը զուր եղաւ:

Նորան մոքովն էլ չեր անցկենում, որ Հեղինէի զայրոյթը բո-  
պէական բռնկումն չի, այլ լուրջ զգացմունք, սկիզբն ներքին հո-  
գեկան յեղափոխութեան: Հեղինէի սրտում առաջ գոնէ յոյս էր  
մնում, որ ամեն բան ապագայում կը փոխւի, նրանց յարաբերու-  
թիւնները կը ստանան այն ձեւը, որ նորան ցանկալի էր: Այժմ այդ  
յոյսը, առաջւայ զգացմունքների միակ յենարանը, ոչնչացաւ:

Հեղինէն ոչ մի ժամանակ այնպէս սաստիկ չեր զգացել որ ինքը  
մենակ է որքան այդ ժամանակ: Նա սաստիկ տիսուր էր և օրէցօր  
նկատելի կերպով հալւում, մաշւում էր, չայց միւնոյն ժամանակ  
այժմ նորա շարժմունքներում ու դէմքի արտայացութեան մէջ  
աւելի վճռականութիւն ու լրջութիւն էր երեսում:

Ես չեմ կարող էլ մարդուս հետ ապրել, ես ատում եմ  
նորան, պէտք է աշխատել մի ելք գտնել, օրը մի քանի անգամ  
կրկնում էր ինքն իրան Հեղինէն, բայց չեր իմանում ինչպէս անի  
որ ազատւի իւր այժմեան անտանելի դրութիւնից: Սաստիկ յուզ-  
մունքը, յղիութիւնը, օր է օր սպասող զաւակի մօտալուս ծնունդը  
թոյլ չէին տալիս նորան սառը մտածել այդ հարցի մասին ու  
վճռել:

(Կը շարունակւի)

## ՀԵՅՆԻ

ԶԱՒԱՐ ԲՈԼՈՒԴՅԱՆԻ

### I

„Aus meinen Thränen spiesen  
Viel blühende Blumen hervor“.

Իմ արցունքից դուրս եկան  
Դատ ծաղիկներ թարմագին  
Եւ իմ հառաջք երգ դարձան—  
Սոխակները երգեցին:  
Եթէ սիրես ինձ, մանկիկ,  
Բոլոր ծաղկունք քեզ կը տամ,  
Լուսամուտից քո մօտիկ  
Կ'երգէ սոխակն ամեն ժամ:

### II

„Die Lotosblume ängstigt  
Sich vor der Sonne Pracht“.

Նունուֆարին նեղացնում է  
Զերմ արևի շըքութիւնն—  
Նա գըլխակոր լսպասում է  
Զով գիշերին կիսաքուն:  
Եւ սիրահար-լուսնեակն նորան  
Զարթեցնում է իւր լոյսով,  
Իսկ ծաղիկը—սիրոյ նըշան—  
Փըռւում է մեղմ, ժըպտալով:  
Նա ծաղկում է ու փայլում է,

Մունջ նայում է երկընքին,  
Նա բուրում է, արտասռում է  
Սիրոյ ցաւից տենդային:

## III

„Liebste, sollst mir heute sagen,  
Bist du nicht ein Traumgebild...“

Ալսօր, հոգիս, պիտի ասես,—  
Չես դու պատկեր ցնորալից  
Եւ տաք օրում հնարևած չես  
Բանաստեղծի ուղեղից:  
Բայց այդպէս մի փոքրիկ բերան,  
Ոչաց փալլը կախարդող,  
Ստեղծել այդպէս սիրուն մանկան  
Բանաստեղծը չէր կարող:  
Մեծ-մեծ օձեր, յարալեզներ,  
Կակղի որդեր, հըրէշներ  
Եւ ալլ չ'եղած վատ գազաններ—  
Ահա նա ինչ կը ստեղծէր:  
Սակայն քեզ քո այդ նենգութեամբ,  
Քո այդ գէմքը սիրալիւ—  
Նայող խարդախ անմեղութեամբ  
Բանաստեղծը չի ստեղծէլ:

## ՄԻՆԱՍԻ ԵԶԸ

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

### I

Ախալքալաքցի տաւարավաճառ Գէորգը պտտում էր Շիրակի գիւղերը և տաւար էր ժողովում Թիֆլիս տանելու վաճառելու: Նա գնած կենդանիներին իսկոյն չէր տանում իւր հետը, այլ պահ էր տալիս նոյն գիւղացիներին՝ մինչև իւր գործակատարների գալը, որոնք զանազան գիւղերում գնած կենդանիները պէտք է յետոյ ժողովէին մի տեղ և մի անդամից ճանապարհէին դէպի վաճառանոց: Այդ էր պատճառը, որ Գէորգը շատ շուտով վերջացնում էր իւր գործը մի գիւղում և անցնում էր միւսը:

Գէորգը մեծ յոյսեր ունէր այս տարւայ վերայ, որովհետեւ տարին թէւ առաստ էր եղել հացով, բայց երաշտութեան պատճառով՝ հացը կարճ էր բուսել, նորանից քիչ դարման էր սաացւել և խոտ էլ շատ քիչ էր ժողովւել: Գիւղացիները հաշւում էին կերակրի պաշարները և նոցա համեմատ կենդանիների թիւը: Աւելորդ ապրանքը պէտք է ծախսէին:

Չրախլու գիւղում շատ տներից կանչեցին Գէորգին, որ սա գայ՝ նոցա տաւարը տեսնի: Այդ կանչողներից մէկն էլ գիւղացի Մինասն էր, որ բաւական հարուատ տուն ունէր գիւղում: Մինասը շատ անգամ ինքը անձամբ տանում էր իւր աւելորդ ասլրանքը Ալեքսանդրապոլ ծախսելու: Խակ այժմ նա ցանկացաւ օգուտ քաղել Գէորգի գալուց՝ իւր մի եղը և մի կովը հէնց գիւղում նաղդելու:

Գէորգը հիացաւ Մինասի գոմից: Սա շինւած էր շատ ընդարձակ և գեղեցիկ էլ սալայատակւած: Կովերը տանը չէին, ուղարկ-

ւած էին արածելու, իսկ եզները գոմումն էին: Գէորգը տեսաւ մեծամարմին, կուշտ կենդանիներ, որոնք հանգիստ որոճում էին իրանց կերակուրը: Նա ուրախութեամբ կ'գնէր բոլոր եզներին, եթէ ծախու լինէին. Մինասը, զոյց տալով մի մոյդ կարմիր զոյնով եղ, յայտնեց Գէորգին՝

— Ահա սա է ծախու եզս:

— Տեսնե՞նք, տեսնե՞նք:

Մինասը քացի տալով և յորդորելով, վերկացրեց եզնը նստած տեղից: Գէորգը սկսեց տնդղել կենդանուն և փորձեց նորա չաղութեան աստիճանը:

## II

Մինասը թողաւ Գէորգին, որ նա զբաղւի ծախու եզան մանրամասն զննութիւնով. իսկ ինքը մօտիկացաւ գոմի ծայրում կասպած մի պառաւ եզան և սկսեց առանձին սիրով ու ջերմեռանդութիւնով նորան փայփայել, շփելով նորա մարմինը և դրստելով մազերը: Եզը զգում էր իւր տիրոջ գգւանքը. նա մի տեսակ խուլ բաւականութեամբ՝ կպցը էր իւր գլուխը տիրոջ շորին և շարժում էր ուրախ իւր ազին:

Մինասը համբուրեց եզան ճակատը և ուզում էր դառնալ դէսի Գէորգը, երբ տեսաւ, որ սա եկել է և կանգնել իւր մօտ:

— Սա, շատ պառաւ եզ է երեւում, նկատեց տաւար ժողովողը:

— Այո, լաւ պառաւ է:

— Քանի՞ տարեկան կ'լինի:

— Քան տարեկան կայ, պատասխանեց Մինասը:

— Ենչ ես ասում, զարմացաւ Գէորգը. պառաւ էր երեւում, բայց ո՛չ այդքան: Տօ էլ ինչու ես դորան պահում: Գա մինչև անգամ իմ առնելու էլ ձեռնտու չէ, միսը շատ կոշտ կլինի: Ծախիր, ազատուիր: Ես կառնեմ ու ծախելու տեղ կգտնեմ:

— Զէ, սա ծախելու չէ, սա ինձ հարկաւոր է, ասաց Մինասը լուրջ կերպով և կարծես փոքր ինչ վիրաւորւած:

— Ի՞նչպէս թէ հարկաւոր է. տո դա մշակութիւն անել չի կարող քեզ համար,

— Ինչու, կարող է. կարող է իւր համեմատ:

—Արածը —արած չէ՛ն. հաշիւ չէ. Մինաս:

—Ինձ համար մեծ հաշիւ է. առաջին հերկ սկսողս դա է լինում, ասաց մի տեսակ համոզմունքով Մինասը.

—Չեմ հասկանում, եղբայր, քո քանը. ծախի՛ր ու մի քանի կոպէկ էլ աշխատանք ստացիր. թէ չէ մէկ էլ կը տեսնես, կընկնի ու կ'սատկի:

—Դա Ասուուծու կամքն է, ասաց հանդարտ կերպով Մինասը:

—Ավոր ինչո՞ւ ես պահում, հարցրեց զարմանալով Գէորգը.

—Ուստ եմ արել, պատասխանեց դժւարանալով Մինասը. նա ինձ պէտք է: Նա ինձ ծառայութիւն շատ է արել. իմ ընկերն է, իմ հաւասար մշակ եղբայրը, իմ տուն շինողը:

—Ավոր նորա կեանքը —կեանք չէ: Մորթելը լաւ է, քան թողնել սատկելը, խղճմունք չէ պահելը:

—Չէ, Գէորդ աղա, ինձ մի խօսացնիլ: Ես չեմ կարող նորան ծախել: Ուրիշ ինչ եղ լինէր՝ կը ծախէի, իսկ սորան չեմ կարող: Գէորգը ոչինչ չհասկացաւ այս խօսակցութիւնից և լռեց:

Եղը իւր գունչը մօտեցրել էր Մինասի ձեռքին և լիզում էր նորան: Խօսակիցները լռել էին, բայց տեղներիցը չին շարժում: Մինասը մտածութեան մէջ էր ընկել: Գէորգը սկսեց աւելի ու աւելի տնդղել եղան և զբաղւեց նորանով:

Պառաւ լծկանը մի հրաշալի կենդանի էր՝ լայն կազմածքով և կարմիր գոյնով: Աչքերի շուրջը բոլորել էր սև օղակը, որ տալիս էր կենդանու նայւածքին՝ թէ գեղեցկութիւն և թէ խելացիութիւն: Այդ աչքերը հանդիսանէին, լի բարութիւնով ու բաւականութեան զգացմունքով:

Մինասը յանկարծ սիժափւեց և դառնալով Գէորգին՝ շփոթւած ձայնով ասաց.

—Սորան թողնենք, սա գոմի ապրանք է. ահա ինչպէս ասացի իմ ծախելուն նա է. մէկ էլ տես, ինչ մատղաշն է նա. ինքը մսալի, քեզ համար աւելի ձեռնտու:

Այդ ես զիտեմ: Նատ շնորհակալ եմ. բայց ինչո՞ւ ես ծախում այս տեսակ մարալին ու այն պատաւին պահում:

—Այս մարալի ձախ աչքը լինաւել է անցեալ տարի, իսկ նոր եղնացուս հասել է, նորան կարող է փոխարինել:

Գէորգը եղը հաւանեց, գնահատեց և մի փոքր սակարկութիւնից յետոյ՝ իւր վերայ թողաւ։ Կովը տեսնելու համար նշանակեց միւս առաւտօար։

Թողնելով Մինասի գոմը՝ նա անցաւ միւս գիւղացիների տները և մինչև երեկոյ կարողացաւ դնելու մինչև քսան չորս դլուխ ապրանք։

Գիւղի տէրտէրը պատահեց Գէորգին, յայտնեց, որ նա էլ ծախու ապրանք ունի և հրաւիրեց երեկոն և գիշերը իւր մօտ անց կացնելու։

### III

Երեկոյեան տէրտէրի տանը՝ օդայում՝ վառւած բուխարու առաջ նստած՝ խօսում էին տէրտէրը և մի քանի գիւղացիներ։ Նոքա ըստասում էին Գէորգին, որ գեռ փողոցներում շարունակում էր իւր գործերը։ Վերջապէս նա էլ մի երկու մարդու ուղեկցութեամբ՝ եկաւ տէրտէրի տունը։ Նորա գէմքի վերայ երեւում էր ժպիտ և բաւականութեան արտայալութիւն։ Ողջունելով տէրտէրին և միւսներին՝ նա նստեց նորա համար նշանակւած պատւաւոր տեղը՝ տէրտէրի հանդէս։

—Դեռ աշուն է, շատ էլ ցուրտ չէ, սկսեց նա, բուխարներդ կարգին վառւառմ է։

—Ե՛հ, կրակը ուրախութիւն է, ասաց մի գիւղացի, ինչքան լինի՝ կրակի տեսքից մարդու սիրու բացւում է։ —ի հարկէ գեռ բուխարու ժամանակը յետոյ է։

—Ունեցողը հիմի էլ է վառում, աւելացրեց նստածներից մէկը։

—Աստուած տւելի կարողութիւն տայ, բարեմաղթեց Գէորգը։

—Ամէն, ամէն, պատախաննեցին միւսները։

Տէրտէրը շնորհակալութիւն արաւ՝ զլուխը շարժելով. և մատնացոց լինելով կրակի վերայ՝ աւելացրաւ։

—Սռանց կրակ, պարոն Գէորգ, ինչ կեանք. տան կրակը եթէ իսկն ասես՝ չպէտք է հանգչի. մենք այսպէս ենք լսել. սա աւանդութիւն է։ Եւ ճշմարիտ էլ է։ Կրակը վառւելուց՝ փառաւորւում ես. զզում ես, որ տունու չի աւերւել, որ նա շէն ու հաստատ է։ Բարեկե ես եկել Գէորգ։ ինչպէս է այսօրւայ առուսուրու։

— Լաւ է, այս տարւայ ապրանքը առհասարակ մնալի է: Եթէ ապրանքի դինո՞ւ չընին՝ մարդ կարող է մի երկու շահի աշխատել:

— Մարկոսենց եզները ինչպէ՞ս տեսար, հարցրեց գիւղացիներից մէկը:

— Ախր շատ էլ չեմ հաւանում, պատասխանեց Գէորգը. ճիշտ է՝ մեծ մարմնով կենդանիներ են, բայց միս, եղ չունեն. ի հարկէ՛ նորանց որ լաւ կերակուր տրւի՝ շատ կարգին մնացու կ'դառնան. բայց դորան էլ ժամանակ է հարկաւոր:

Փոքր ինչ առևտրական խօսակցութիւնից յետոյ՝ Գէորգը մտարերեց այդ օրւայ Մինասի գոմում տեղի ունեցած դէսքը և նա հարցրեց գիւղացիներից՝ —

— Մէկ ասացէ՛ք, իննդրե՛մ, ինչո՞ւ Մինասը իւր պառաւ, անպէտքացած եզը չի ծախում:

— Հը՞, չի ծախիլ, չի ծախիլ, նկատեց կիսաժայիռով հասակաւոր գիւղացի Գրիգորը:

— Ինչո՞ւ:

— Ե, դա մի ամբողջ պատմութիւն է:

— Ի՞նչ պատմութիւն է:

— Ես ձեզ մի կարճառօտ պատմեմ, ասաց Գրիգորը և կացնելով իւր չուբուխը՝ սկսեց:

#### IV

Գրիգորը պատմեց հետևեալլ:

• Սորանից տասն և հինգ տարի առաջ Մինասը շատ աղքատացաւ: Դոքա երեք եղբայր էին՝ լաւ քաջ տղերք. մէկին աւազակները սպանեցին, միւսը հիւանդացաւ մեռաւ: Այդ տարին տաւարի ցաւ էլ պատահեց և Մինասի տաւարի մեծ մասը կոտորւեց: Հինգ լուծ ապրանքից մնաց միայն մի ջահիլ եղ, որ հորիկութեան նոր էր մտել և առանձին զեռ լծւած չէր: Մինասը հող ունէր բաւականին, բայց զրկւած էր թէ մշակից, թէ եզնից: Կենդանի մնացած կովերից երկուսը ծախեց և մի եղ գնեց, որպէս զի իւր մօտ եղած եղնով կարողանայ գոնէ մի լուծ շինել: Այդ իմ պատմած ջահիլ եղը, — այն հիսմիկւայ պատաւած եղն է, որ, Գէորգ ինսամի, տեսար Մինասի գոմումը:

Այդ լուծով նա բանեց մի ամառ.. բայց շատ քիչ վարեց; Միւս տարւայ համար եղը բաւականին մեծացել և ամրացել էր; Մինասը վճռել էր այդ տարին մեծ վար անելու; Մեր տեղերում, ինչպէս գիտէք, վարում են և երկու լուծով և մի լուծով—բայց մի լուծով բանողները կամ գոմէշ են լծում կամ ուժեղ եղներ; Մինասի թէ ջահիլ եղը և թէ՝ նոր գնած եղը մեծ ոյժ չունէին. այնու ամենայնիւ Մինասը մի լուծ միայն գործածեց վարելու համար; Վարում էր նա անդադար մօտ երեք շաբաթ: Խեղճ եղները յօդնել էին. բայց Մինասը մաքումը զրել էր մեծ վար անելու: Նա իւր վերայ ուշք չէր դարձնում, աշխատում էր առաւօտից մինչև երեկոյ: Կարգին գութանավարի մասին նա մտածել անգամ չէր կարող. նա արօրով փորփորում էր հողը: Մենք հարևաններս զարմանում էինք՝ տեսնելով Մինասի և նորա եղների անյօդնութիւնը: Մինասն էլ՝ քանի որ իւր և եղների ոյժը պատում էր՝ շարունակում էր գործը:

Այդ օրերից մէկում՝ ես գնում էի հանդը և պէտք է անցնէի Մինասի հերկոլ: Տեսնում եմ հեռուից, որ եղները կանգնած են և Մինասը ինքը չի բանում: Փոքր ինչ մտիկանում եմ և տեսնում եմ նորան չոքած և ձեռքերը տարածած, ինչպէս աղօթքի ժամանակ պարզում են դեսի Աստուած: Առաջ եմ գնում, Մինասը մի լսում: Եւ իսկապէս նա աղօթում է: Վերջապէս այնքան մօտեցայ, որ լսեցի նորա բարձրածայն աղօթելը: Առաջ խօսքերը համնում էին ինձ կցկուրը, իսկ լեռոյ՝ բաւականին պարզ՝ լսեցի հետեւալլը:

«Մեր մեղքը մոռացիր, Տէր Աստուած, զու ներիր մեզ, բարերար Աստուած... ախ՛, խեղճերը ինչքան տանջւում են մեր ձեռքից... ինչ պատասխան պէտք է տանք Քեզ...»

Ես վերջապէս կանչեցի՝

—Մինա՛ս, ինչ աղօթք անելու ժամանակ է. առ, վերկա՛ց, ինչ է պատահէլ.

—Գրիգո՞ր. ասաց Մինասը, նայելով վերաս զարմացմամբ:

—Ի՞նչ ես չոքել, հարցրի նորան.

—Գրիգոր, պատասխանեց նա, սիրտս թող է, զլուխս պարտում է... օ՛հ խեղճ եզ, խեղճ եղբայր:

Մինասը շարած զրոթեան մէջ էր: Յանկարծ նա վեր կացաւ,

վազեց իւր ջահիլ եղան մօտ, ճակատը պաշեց, գլուխը շփեց, վզով վր փարեց և մղկուալով ասաց եղան.

— Խնձ կ'բաշխես, իմ ընկե՛ր, մեղաւոր եմ առաջիդ.

Մինասը կանգնած էր անշարժ իւր եղան առաջ և մոռացել էր իմ ներկայութիւնը:

— Տօ՛, ինչ է պատահել քեզ, Մինաս, հարցրի նորան:

— Ե՛ս Գրիգոր, ձեռքով արաւ ինձ, թէ Ասուուած կ'սիրես, ինձ մի խօսացնիլ. խելքս կորցնում եմ. ինքս էլ չեմ իմանում թէ ինչ եմ անում:

— Խնձ է եղել, ասա՛, իմանանք էլի, հեր օրհնած.

— Ե՛ս, Գրիգոր, զլուխը թափ տալով պատասխանեց նա, ամաչում եմ, եղբայր, ասել զլսիս եկածը. ինքս լաւ եմ հասկանում իմ բանը, բայց կարդին չեմ կարող քեզ պատամել. դու կը ծիծաղես վերաս, ցաւս չես հասկանալ:

— Դէ լաւ, ասա, հիմի մի կերպ կ'աշխատեմ հասկանալու:

Մինասը փոքր ինչ շարժեց զլուխը, ձեռքերը խփեց ճակատին, որորեց ականջները, պուշները կրծուեց և վերջապէս բերանը բացեց:

— Խնքդ դիտես, սկսեց Մինասը, որ այսօր քսան երրորդ օրն է, որ ես առանց մի կարդին հանգստութիւն տալու՝ բանեցնում եմ եղանակ: Ահա չորս օր է, որ խեղճը էլ չի կարողանում բան անել. բայց ես ի՞նչ անեմ, ես ի՞նչ ասեմ իմ տանեցիներին, ինչպէս նոյս քաղցած բերանները լիացնեմ ձմեռը: Գիտէի, որ եզր ուժից ընկել է, բայց էլի օթում էի, էլի դրդում էի: Երեկ կարծում էի թէ էլ բայց էլի գիտէի բան անի. բայց կարողացաւ մի կերպ: Այսօր առաջ կարողանալու բան անի. բայց կարողացաւ մի կերպ: Այսօր առաջ կարողանալու բան անի. բայց կարողանում, մի կէս ժամ չարչարւում էր, մինչեւ որ ուները բացւեցին:

Ճաշի դէմ մի քիչ հանգստացրի, յետոյ էլի սկսեցի բանել. մի չորս ժամ կայ՝ բանում եմ: բայց վայ այն բանելուն: Զէ, տեսայ եզր ժամորովին կանգնում է, ի՞նչ անեմ: Մի քանի ժամնայ բան է մնացել, որ բոլորովին այս տարւայ վարս վերջացնեմ: Էլի խփեցի: Խեղճը մի քիչ էլ գնաց և վերջնականապէս նա կանգնեց: Եարհեցի: Խեղճը մի քիչ էլ գնաց և վերջնականապէս նա կանգնեց: Եարհեցի: Կութիւնս մի կողմից՝ խղճմանք միւս կողմից՝ ինձ պաշարեցին. կութիւնս մի կողմից՝ խղճմանք միւս կողմից՝ ինձ պաշարեցին. սկսեցի ծեծել, յորովորել ոչինչ չեղաւ. յանկարծ ձեռքս կարծես զժւեցի և հաստ մահակով մի հարւած հասցրեց զլսին, այսպէս հար-

ւած, որ կարծես թէ սպանելու. նպատակով էր հասցնելում։ Հարւածից՝ եզս երերւեց, իսկ ես սարսափեցի։ Վազեցի եղանա մօտ և տեսայ, որ խեղճի աչքից արտասունք է կաթում։ ես ինձ կորցրի. «Այսքան էլ անգիտութիւն... մրժնցացի և աննկատելի կերպով ծունկ չոքեցի ու սկսեցի ազօթել Աստուծուն, որ նա ինձ ների»

Մինաս, ասացի նորան, հանգստացիր, դ՛ բան է փորձանք է՝ պատահել է։

—Ախր խեղճ չէ կենդանին։

—Խեղճ է, ի հարկէ, բայց ի՞նչ արած։

—Նա բանի՝ մենք ուտե՞նք։

—Ի՞նչ ես ասում, Մինաս, է՞շ դու ել. —Նա մեզ է կերակրում։ մենք էլ նորան ենք պահպանում։

—Ի՞նչ ուզում ես ասա, բայց մեզնից խիստ պահանջ է անելու։ Աստուծ։

Մի կերակ Մինասը հանգստացաւ։ Աստուծ ած տւաւ, ցանքսը յաջող դռւրս եկաւ, Մինասը շահւեց, տունը փոքր ինչ կարգի բերեց, սկսեց մարդամիջի տեղ ունենալ։ Կամաց կամաց եղների, տաւարի թիւը շատացրեց։ Հիմի տեսնո՞ւմ էր, ինչ հարուստ մարդ է դարձել մեր զիւղում։ Այն եղան նա համարում է իւր հարստութեան աղբիւր. նորանով է սկսում իւր առաջին ակօսը մինչև այժմ։ Թէև եզր քսան տարեկան է, բայց էլի գարնան՝ տանում է վարի սկզբին զնում։ Փոյթ չէ ինչքան է գնում եզր, միայն թէ հողը տեղից շարժւի ալդ եղան միջոցավ։

### V

Լատղները շատ հետաքրքրւած էին, սկսեցին մի քանի աւելւածներ անել, իրանց զիտողութիւններից և անտեսութիւններից օրինակներ բերել։ Մի ծեր զիւղացի էլ՝ զլուխը շարժելով՝ ասաց խրատական ձայնով՝ Եհ, զուր չէ Վազախու հայր ասում թէ։

Ես մատաղ եմ եղանը՝

Որ կը պահի խիզանը.

Աստուծ էլի զուաթ տայ,

Մեր տնարար եղանը։

Տէրտէրը, որ աւանձին հետաքրքրութիւնով լսում էր այդ բոլորը, մէջ մոռաւ։

— Եէ, որ ացդքանը գիտէք, էլ մեզք և պարտազանցութիւն չի համարւիլ, որ մէկ բան էլ ես աւելացնեմ: Այսր մեր Մինասը երեք տարի չէր հաղորդում: ասում էր թէ ապաշխարում է. յետոց հաղորդւելուց միան՝ իմացայ թէ մեզքը—այդ եղան խփելն է, որ պատմեց Գրիգորը:

— Տէրտէր, իսկն ասենք, անզութ բան շատ ենք անում մեր եղների հետ. միթէ՞ դորան գատաստան չը կայ:

— Կայ, կը լինի, որդիս, աբա եզը—շունչ չէ, ապա նա կենդանի չէ, ցաւ զգացող չէ:

Գրիգորիները շատ հետաքրքրւեցին այդ խնդրով և սկսեցին տաք խօսակցութիւն: Երբ որ բաւականաշատի զատազութիւններ արւեցին ամեն աեսակի, խօսքը կրկին շուռ եկաւ Մինասի եղան վերայ: Գրիգորը, որ աճնքան բան էր պատմել արգէն, կարծես պատում էր այդ բովէին: Նա զլուխը շարժելով՝ մէջ մուաւ:

— Աբա, այս տեսակ բան է, եղել աշխարհքում: Մեր Մինասը զուր տեղը չէ իւր եղանը պինդ բոնել կանգնել: Մինասը ուխտ է արել, որ այդ եղանը պէտք է չը մորթի, մինչեւ վերջը իւր մօտ պահի, որ նա, ինչքան կեանք նորան սահմանւած է՝ ապրի աճնքան, որ իւր բնական մահով վերջանայ: Խոր ծերութեան համնելով:

— Լաւ, դորանից էլ ծե՞ր:

— Ով գիտէ, ասում են որ եղների մէջ մինչև քոան հինգ տարի ապրող էլ կայ:

— Մինասի եզը, շարունակեց Գրիգորը, խակապէս ալժմ մի զարմանալի եզ է զարձել, ապրում է Մինասով: Եթէ մի երկու օրով սա բայցակայ եղաւ, ախրում է. իսկ երբ՝ զիցուք՝ Մինասը եկաւ ու նորան շիեց փայտայեց՝ նա զւարթանում է: Մինասը, որ տեսնում է իւր եղան ուրախութիւնը ու զւարթանալը, աճնպէս է ուրախանում, որ կարծես թէ հարազատ արխոնակիցը լինի:

Անտանավաճառ Գէորգի վերայ աճնպէս սատողիկ ազդեց պատմութիւնը, որ նա զգացմունքով ասաց.

— Ապրի Մինասը, շատ ապրի: Նաս լաւ է անում, որ չի ծախում: Բաց մի բան ասեմ, մի խոստովանք յայտնեմ, որ նորա պատմութիւնը ինձ մի քիչ ցնցեց... Մի՛թէ ես էլ, ուրեմն, անասունների զահիճը կամ գոնէ զահճի միջնորդն եմ:

Գրիգորիները լուեցին, ոչինչ չը կարողացան նորան պատասխանել:

# ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԿՐՎԿԱՍՈՒՄ

Ըստ Ա. Ե. ԲԱՆԴԻՐ ՔԱՂԱՔԱՐԻ

(„Состояніе скотоводства на Кавказѣ“ Рогатый скотъ.—Изъ II тома „Материаловъ для устр. казен. пастбищъ и для изуч. скотоводства на Кавказѣ“).

## Յ. ՍԱԳԱԹԵՏԵԱՆԻ

Պր. Ալ. Քալանթարի աշխատառմիւնը պաշտօնական հետազոտութիւն է և գրւած է ի հարկէ ռուսերէն լեզուի. Պաշտօնական հետազոտութիւնները առհասարակ, ծառակիլով բայտնի վարչական նպատակների, լինում են մեծ մասսամբ միակողմանի և ոչ միշտ համապատասխան անձից կատարւած. Պաշտօնական հետազոտողը սովորապէս իւր առանձին ուշադրութիւնը լարում է ուսումնասիրելի առարկայի ան կողմի վերաց, որը իսկական դրդիչն է ազդ հետազոտաթեան և որի վերաբերմամբ բարտնի վարչական մտադրութիւններ կան. Բայց լինում են դէպքեր, երբ պաշտօնական հետազոտութիւնները կրում են գրական և գիտնական հետազոտութիւնների բոլոր արժմանաւորութիւնները, դոցա կատարոների բառկութիւնների չնորհիւ. Ազդ աեսակ մի երեսլթ է ներկայացնում նաև պ. Քալանթարի հետազոտութիւնը, որի նիւթը կազմում է մի առաջնակարգ տնտեսական նշանակութիւն ունեցող առարկա—անասնապահութիւնը ամբողջ Կովկասում. Մի ազդպիսի երկիր, որպիսին մերն է, որտեղ տնտեսական կեանքը զլիսաւորապէս կայանում է գիւղական արդիւնաբերութեան մէջ, շատ հեշտ է հառկանալ թէ ինչ դեր պիտի խաղաց ազդ կեանքում անասնապահութիւնը. Աերջինս, բացի իւր անմիջական արդիւնաբերական գերից, որը երբեմն ժողովրդի գոլութեան միակ աղբիւրն է կազմում մի աճնպիսի գիւղատեսական երկրում, որպիսին մերն է, ասովմանաւորում է արդիւնաբերութեան համարեաց բոլոր միւս ճիւղերի գոլութիւնը. Անասնապահութեան ազդ մեծ

աճտեսական նշանակութիւնը կազմում է հետազօտութիւն գլխաւոր հիմքը։ Ազդ դժւար և բազմակողմանի խնդրի մէջ հետազօտողը ցուց է տալիս հիմնաւոր մասնագիտական պատրաստութիւն, միացած իմաստասիրական ընդունակութեան և պարզ ու նկարչական ոճի հետ։

Որ. Քալանթարի աշխատութիւնը բաղկացած է երկու մասից։ իսկական շարադրութիւնից և 2) նիւթերից, որոնց վերա հիմնած է առաջին մասը։ Ազդ աշխատութեան արժեքը հասկանալու համար, բաւական է իմանալ, որ նիւթերը կազմում են հեղինակի անմիջական դիտողութիւնները, որ նա կատարել է շրջելով ամբողջ երկրը, ուսումնասիրելով ամեն մի անկիւն, ուր զաել է մի որ և իցե տեղային առանձնապատկութիւն։ Կովկասի կլիմայի և բնութեան բազմատեսակութիւնը բնականաբար պիտի արտակարութեան գոճուող կենդանիների ցեղերի և անուակների վերաց։ Ազդ, ալսակէս տաած, բնութիւնից ծագած բարդութիւններին՝ կովկասում միանում է անասնապահութեան վերաբերմամբ՝ ժողովուրդների կուլտուրական սովորութիւնների և պահանջների բազմատեսակութիւնը։ Զը նախելով ինդրի ալսպիսի դժւարութիւններին, հեղինակը զարմանալի լաջողութեամբ լուծել է նրան։ Նրա նկարագրութիւնը անասնապահութեան գրութեան, բազմակողմանիութեան և սվաստնամատիկականութեան պատճառով՝ կարող է բաւարարութիւն տալ իւրաքանչիւր մէկին՝ ինչ տեսակէտից որ հետաքրքրւէր այդ առարկանով։ Ահա ինչումն է նորա անփախարիննելի առաւելութիւնը։

Սուածին մասը բաղկացած է լաւաջաբանից և 5 գլուխներից։ Յառաջաբանի մէջ հեղինակը խօսում է այն առանձին պահմանների մատին, որոնք ի միջի ալլոյ աղդում են կովկասի անասնապահութեան վերաց, որոնք կազանում են բնակիչների սովորութիւնների խտրութեան մէջ։ օրինակ մինչդեռ ժողովրդի մի մասի կենդանիները ձմեռը կերակրուում են տաք բնակարաններում, ուուս աղանդաւորներինը ապրում է ուղղակի ձիւնի վերակ, խաչնարածներինը մեծ մասամբ արածում է ամերող ձմեռ կիսացուրտ տեղերում։ Հիւսիսաւին կովկասում շատ տեղերում հորդերը ծծում են միան մի քանի շաբաթ, մինչդեռ միւս մասերում շարունակ՝ քանի կովը կաթ է առաջ։ Նողաչները և ուուս աղանդաւորները կաթի արդիւնաբերութեան ժամանակ երբէք չեն տաքացնում նրան, իսկ միւսները բոլորսին հակառակն են անում։ Բնակչութեան մի քանի մասերի համար անսունապահութիւնը կազմում է միանակ ապրուստի միջացը, իսկ միւսների համար օժանդակիչ։ Ապա բերում է մի քանի նահանդների անասունների թիւը, ըստ Տրեսկովսկու և Արքունի կաւածների նախարարութեան հետազօտութիւնների։ Ըստ Տրեսկովսկու՝ Անդրկովկասի և Հիւսիսաւին կովկասի նահանդներում անասունների միջին թիւը 1871—1881 ժամանակամիջոցում եղած է։

	Աշխատանքում.	Դժվար.	Ճ.
Բարգուալ նահանգում	600.000	1.000.000	300.000
Թիֆլիսի	500.000	1.900.000	80.000
Գանձակի	400.000	1.500.000	100.000
Երևանի	250.000	500.000	50.000
Քութափսի	150.000	124.000	40.000
Կուբանի	1.000.000	1.713.000	170.000
Ստարազոլի	616.000	1.780.000	990.000
Տեղակու	200.000	16.400	40.000
<b>Ընդամենը</b>	<b>3.716.000</b>	<b>8.384.300</b>	<b>1.039.000</b>

Բացի այդ, Գանձակի նահանգում կան 30.000 փափկամազ ոչխար, Թիֆլիսի 9.000, Քութափսի 1.500, Կուբանի 587.000 փափկամազ ոչխար և 154.000 աչ, Ստարազոլի 300.000 ոչխար փափկամազ և 73.000 աչ, Տեղակու նահանգում—100.000 աչ։ Արքունի նախարարութեան թւերը վերաբերում են միտքն արքունի դիւղացիներին։ Այս տեղից մինք կը բերնք միան ան թէ միջին արքունի դիւղացու տաճ վերակ որքան անառ սուն է գալիս։ Թիֆլիսի նահանգում ամեն տեսակի անասուն միջին տաճը ընկնում է 32 զլուխ, բազուք 20, Երևանի 22, Գանձակի 17, Քութափսի՝ 5, կոտորակները թողնում ենք։ Այս թւերից պարզ երեսում է, որ անստանապահութիւնը մեր երկրի անտեսական կենաքում նշանաւոր տեղ է բոնում, բայց նա արդեօք բարուքում է մեր երկրի ազգաբնակութեան նիսթական պալմանները ան չափով, որ չափով կարող է, ահա ինզիքը թւերին նայելով պէտք է այդ բոլորը սովասել, բայց իսկապէս լաւ լայտնի է, որ մեր ազգաբնակութեան անտեսական դրութիւնը բոլորովին նախանձելի չէ։ Այդ քանակութեամբ անանապահութիւն՝ մի եւրոպական երկրում միտքն վերցրած՝ զրաւական է ժողովրդի բարեկեցութեան։ Բայց ինչու մեզանում ազգաբնակութիւնը ունենալով միենուն պահմանը, ունենալով նաև բաւականաչափ մշակութեան հող, մեծ մասամբ ամենը, կրիմական պարմաններում, որտեղ բուսանում են թանկապին բերքեր, ողորմելի զրութեան մէջ է։ Մի եւրոպացի դիւղական ընտանիք ունենալով 32, 20, 22 զլուխ անստան, միան զորանով կարող է ոչ թէ միան բաւականածալ, այլ բարեկեցիկ կենաք ունենալ, բայց մեր դիւղացին աշխատանքում է անստանի հետ ունենալով հող, ունակական տուն՝ աղքատ է, ասդ աղքան անստանի հետ ունենալով հող, ունակական տուն՝ աղքատ է, ասդ բուսանքից պատու յամանակը, թափառում է քաղաքները օրական 20 կամ 30 կոպէկ օրավարձի համար և կրկին թաղւած մնում անվերջ ողարտքերի մէջ։ Հասկանալով մեծ մասամբ միտքն ցամաք հացը։ Հողագործական աշխատանքից պատու յամանակը, թափառում է քաղաքները օրական

դիւնաբերութեան տեխնիկան և մթերքների արտահանութեան պայմանները, մենք կը տեսնենք, որ միւնչո՞ն գիւղացին հնար կ'անենալ թէ մարդավարի ապրուստ ունենալ և թէ մտաւորապէս լառաջ ընթանալ: Ահա մի խնդիր որ ծագում է ժողովրդի բարեկեցութեան համար մտածողի առաջ, մի պարտք—նրանց վերակ, որոնք կարող են տալ ազդ ժողովրդին այն, ինչ պակասում է նրան բարեբառախկ կեանք ունենալու համար:

Առաջին զլխում հեղինակը որոշում է Կոմիկասում տարածւած տաւարի զլխաւոր տիպերը: Նա գտնում է տաւարի երկու ցեղ, իւրաքանչիւրը մի քանի ճիւղերով, 1) Մեծ կոմիկասեան և 2) Փոքր կոմիկասեան: Առաջին ցեղը ապրում է Մեծ կոմիկասի բարձրաւանդակներում և հովիտներում, իսկ երկրորդ ցեղը Փոքր կոմիկասի լեռնաշղթաների և հագկական լեռնաղացի վերակ: Առաջին մեծկոմիկասեան ցեղը փոքրահասակ է, քարշը մորթելուց վեցու 3—6 փութ է, սղեղ է, սակաւակաթ: գոճնը զլխաւորապէս սև: Ազդ ցեղը բաժնաւում է հեռենեալ զլխաւոր ճիւղերի՝ Գաղատանեան, Վիրական, Կարաչայեան, Կումիկեան, Կուբինեան, Շիրվանեան և ալլն: Փոքր կոմիկասեանը համեմատաբար տևելի խոշոր է, մորթելուց վետոք քաշում 8—12 փութ, գեղեցկակաղմ է, կաթնատու, լաճնալանջ և զլխաւորապէս կարմիր դոնով, Ազդ ցեղի ամենասպանիւ տեսակը ներկայացնում է զարարադաղազարինեանը: Բացի վերջինից նշանաւոր են, Դարալագեազեան (Վարչ ձոր) Շորադեւան Փամբակեան (Շիրակ) և Քրդական և ալլն:

Հետազօտութիւնից երեսում է, որ Կոմիկասում տաւարի աղնիւ ցեղերը ապրում են հագկական մասում: Հասկանալի է պատճառը: Հայաստանը լայտնի է իւր ճոխ աղբիւրներով լի արօտատեղիներովից: Այս չափութիւնների պատճառով՝ նա գեռ չատ վաղ ժամանակներից գրաւում էր դեպի ինքը խաշնարած բարբարուներին, որոնք վերջ նվերջոց պիտի նորա տէրը դառնալին, կործանելով նորա աղգարնակութեան հնաղարեան կուլտուրան ու քաղաքական անկախութիւնը: Կոմիկասեան երրորդ և վոքբաթիւ տաւարի ցեղը ներկայացնում է կառապեան զերտն, կամ ինչպէս նրան իւր բնակավագրում՝ Լենկորանի գաւառում անւանում են ագիլեակր, Այս ցեղի առանձնահատկութիւնը կանանում է նրանում, որ թիկունքի վերակ ունի մասգունդ մինչ 5 Փունտ ծանրութեամբ, որը երբեմն համում է 10 Փունտի: Այս ցեղի կենդանու միջի քաշը մորթելուց վետոք 7—7½ վութ: և աւելի է: Գիլեակը զեղեցկակաղմ է, արագաշարժ, նման աւելի կիսավազնի կենդանու, ցրտին աւելի դիմացկուն է քան թէ չոգին: Արածում է ամբողջ ձմեռը, չատ անզամ ձիւնի տակից փնտռելով իւր կերակուրը: Լեռներից տեղափոխելով դաշտը, չի զիմանաւմ և սատկում է: Գիլեակի ցեղը տարածւած է Լենկորանի գաւառի շարունակութիւն կազմող պարսկական նահանգներում, ինչպէս օրինակ Մազանդարանում: Գիլեակը խառնւելով դաշտակն ցեղի հետ, տալիս է նոր տեսակ առ ու բարից, որը ունի երկու

ցեղերի էլ տռաւելութիւնները և բաւականաշոփ տարածւած է լեռների դաւառում:

Այս տեղական ցեղերին միտնում են Կովկասում՝ Զերկսուհան և Կողա լեռն ցեղերը: Առաջինը ներւուծել են Կովկաս ռուս աղանդաւորները, իսկ երկրորդը տարածում են Ֆեծ Կովկասում լիոնցիները: Այս երկու ցեղերն ել մեր տեղականներից խոչոր են, բայց դժւար են լարմարւում մեր բնական պայմաններին:

Հնագոտութեան ոչ զլիսաւոր առարկան կազմում են տաւարի միւս տեսակները աճն չափով, որ չափովնոքա ազգում են տաւարապահութեան վերաբէ Տաւարների թւում ի հարկէ գտնւում են և գոմեշները: Վերջին տեսակի վերաբերմամբ աճն է հետաքրքրական, որնա զլիսաւորապէս տարածւած է դաշտավին և շոք մասերում, որտեղ շատ ջուր կայ: Խոկ հայերի մէջ տարածւած է և ցուրտ տեղերում, ինչպէս օրինակ Արակածի ստորոտներում, Նոր-Բայազեղի լեռնադաշտում և ալզն: Այս հանգամանքը հեղինակը բացատրում է նորանոյի որ ազդ տեղերի ազգաբնակութիւնը դազմականութիւն է գաշտերից: Խոկ մենք կարծում ենք, որ պատճառը պատմական է: Գամեշը ամեն տեղ տարածւած է հազերի մէջ: Երբ Հալաստանին Թաթարները տիրեցին և բնակութիւն հաստատեցին նորանում, անասնազողութիւնը դարձաւ նորանց ամենասիրած առարկան: Գոզութեան համար ամենից քիչ լարմարութիւններ է ներկազցնում զոմեշը: նա ծանրտշարժ է ու լեռնալին ուղիներում վաղելու բոլորովին անընդունակ: Այս տեսակ անասուն ուսնելը համեմատաբար աւելի ապահով էր: Եւ իրաւագուրկ հայ ժողովուրդը սաստիկ լարդում էր այս տեսակ անասունին: Այդ կարելի է նկատել ալժմ օրինակ Մշում, Ալաշկերտում և ալզն: Նողնակն և այժմ մեր երկրում չը նաէլուլ որ անասնազողութիւնը ամենատարածւած և ամենասովորական երեսին է, զոմեշներ ամենից քիչ են դոզացւում: Թուրքերը, որ զոզութեան մէջ ցոյց են տաշիս մեծ հնարագիտութիւն—արժանի աւելի լաւ արհեստի, մի քանի տեղեր, ինչպէս օրինակ Փամբակում, վերին աստիճանի արտասովոր և մի և նոյն ժամանակ գարշելի ոճագործութիւն են հը նարել զոմեշի այդ անլարմարութիւնների չնորհիւ: Զը կարողանալով ամբողջ գոմեշը զողանալ, մորթում են պատահած դիւզում այդ անասունին և վերցնում կաշին, 5 կամ 6 րուբլու համար գիւղացուն տալով 60 կամ 70 րուբլու վեսա:

Պէտք է ցաւել որ հեղինակի հետազոտութեան մէջ չէ մտել ձիապահութիւնը մոպանում, չը նաևելով, որ այդ կողմից մեր երկիրը նոյնպէս հետաքրքրելի է: Ցաղանի է որ մեր ձիերը, հին ժամանակներից ոկտած, երկրորդն են համարում արաբականից լիտոյ: Անասնապահութիւնն այս ձևովը, եթէ կանոնաւոր կերպով առաջ տարւի, կարող է մեծ եկամուտի աղբիւր դառնալ մեր երկրի համար: Մեր երկրի ձին, երբ ամենապատւական տեսակներից էր համարում, անգլիականը բոլորավին լաւանի չէր. բայց նրանց

ահիսնիկան ալնքան է աղնւացրել տեղական ձիու ցեղը, որ հասր մի քանի հաղար բուբլիներով է ծախվաւմ, մինչդեռ մերը երկու հարլւր բուբլու հազւագիւտ դէպքումն է հասնում: Այս ճիւղի չը հետազօտելու համար չի կարելի մեղադրել հեղինակին, որովհետեւ նրա թեման պաշտօնական է, ինքը չի ընտրել: Նուն պատճառով հեղինակը առանձին չի հետազօտել անսասպահութեան միւս նշանաւոր ճիւղը — ոչխարապահութիւնը:

Միւս պլումներում հեղինակը խօսում է անսանապահութեան նպատակին, նրա սննդի միջոցների, կաթի արդիւնաբերութեան և գոհչապահութեան մասին: Ազդ չօդածներից երեսում է, որ անսանապահութիւնը մեր երկրի բոլոր ժողովրդների համար գործութեան պայման է, ոչ սակաւ անզամ կաղմելով եկամուտների միացնակ աղբիւրը, ինչպէս օրինակ խաշնարածների մօս:

Ժողովրդի արդիւմքը անսանապահութիւնից պլսաւարսպէս կաչանում է նրանում, որ բայր հողազարծութիւնը հիմնած է ազդ ուժի վերաց և կաթնեղինը հացից լեռոյ կազմում է նրա ամենազլիսաւր սնունդը: Անսանավաճառութիւնը, իրբ եկամուտի աղբիւր, նունպէս կաթի արդիւնքների վաճառումը՝ ընդհանուր երեսիթ չէ և լատուկ է զլխաւորսպէս խաչարածներին բնակիչներին, կաթից բազմապէս մթերքներ պատրաստելը՝ խըլը և պանիրը չափանի է աղդաբնագլխաւոր բոլոր մասերին և զդալի առաջնապահութիւններ չի նշարկութեան բոլոր զարարական մասերին: Պանրի մի քանի տեսակները, ինչպէս օրինակ օսերինը, զազախինը, թռւշերինը խիստ չարգւած են թէ և ծախում էն եւրոպական տեսակներից 4 կամ 5 անգամ աւելի ածան: Խնչում միենայն առարկան, նորդպիսի կաթից պատրաստած, տալիս է մեր ժողովրդին 4 կամ 5 անգամ աւելի քիչ եկամուտ քան թէ եւրոպացուն:

Մեր կեանքի ամեն մի երեսով զիտելս՝ միշտ ծագում է ազդ հարցը: Շատ տիսուր և վհաստեցուցիչ աեսարան է ներկայացնում մեր երկրի ժողովուրդների իրական կեանքը: Դա աղքատութեան և տգիտութեան տեսարան է, մինչդեռ անտեսական չառաջադիմութեան համար բնական պակման ները խիստ բաւարար են:

Մրանով մենք վերջացնում ենք մեր կարճ տեսութիւնը պ. Քալտնթարլի հեղինակութեան առիթով: Խակ ով հետաքրքրուում է ամբոխի վլճակով և ցանկանում է ուսումնասիրել նրա կեանքը որոշադ պայմանները, վստահութեամբ կարող է զիմել պ. Քալանթարլի հետազօտութեանը, որի մէջ ազդ կեանքի ամենանշանաւոր կողմերից մէկը նկարագրւած է ազնքան հիմնաւոր և չաջող կերպով, որքան ազդ հնար է ներկաչ հանգստմանքներում:

# ԻՄ ԱՌԱՋԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԸ

## ՄԱՐԿ ՏՈՒԻԵՆԻ

Ես տասներեք տարեկան հասակումն մի սրամիտ աղայ էի և  
մինչև անդամ աչքի ընկնող սրամիտ. գոնէ ես այդ կարծիքը ունեի  
իմ մասին:

Իմ պատահնեկութեան այդ վաղ ժամանակում՝ ես սիրու արի  
առաջին տարադրութեան տալ իմ գրւածքը, որ բոլորովին անսպա-  
սելի կերպով մեծ աղմուկ զցեց մեր հասարակութեան շրջանում։  
Իմ յօղւածիկով, կարելի է ասել, պարծենում էր մեր հասարակու-  
թիւնը, ինչպէս և ես ինքս։

Ես, ինչպէս ասում են, լրագրի «Հարաճճին» դարձայ և այն էլ  
մի քաջարի ու վառասէր չարաճճի։

Հօրեղբայրս հրատարակում էր «Հաննիբալեան շարաթաթերթ»,  
անունով մի լրագիր, որ արժէր տարին երկու դօլլար, նշանակել էր  
վճարը կանխիկ, ունէր հինգ հարիւր բաժանորդ, որոնք լրագրի  
վճարը վոխարինում էին վառելափայտով, կաղամբով և փշացած  
շաղգամով։

Եւ ահա ամառւայ մի գեղեցիկ օր՝ հօրեղբայրս, ստիպւած լի-  
նելով մի շաբաթով հեռանալ քաղաքից, հարցրեց ինձ՝ կարող եմ  
ես արդե՞օք նորա բայակայութեան միջոցին՝ յանձն առնել նորա  
լրագրի խմբագրութիւնը։

Ի՞նչ ասել կ'ուզի։ Ով չի կարող ցանկանալ իւր ոյժերը վորձել։  
Ի հարկէ ամենամեծ պատրաստականութեամբ ընդունեցի։ Եւ ահա  
ինչ բանից ես սկսեցի։

Մի պարոն Խ., այդ ժամանակ խմբագիր էր մի ուրիշ լրագրի,

որ հօրեղբօրս լրագրի հակառակորդն էր ներկայանում։ Պարոն Խ\*-ը հէնց այդ ժամանակները խարւած էր մի կնոջից, որին նա սիրել էր։ Խ.-ի բարեկամը մի երեկոյ գալիս է նորա մօտ, նորան տանը չէ գտնում, իսկ մահճակալի վերայ տեսնում է Խ.-ի ձեռքով գրած բաց նամակ, որով յայտնում է, որ նա անկարող է այլ ևս իւր անցածող կեանքը շարունակել և վճռել է մեռնել՝ խեղզելով իրան Արջադետում։ Բարեկամը շտապում է իսկոյն դէպի գետը և տեսնում է, որ Խ.-ը ջրի հոնով բարձրանում է դէպի ափը։ Դուրս է գալիս, որ նա միտքը փոխել է... Քաղաքումը մի քանի օր հէնց այդ անցքի մասին էր բոլորի խօսքը։ Բայց Խ.-ը ըլ գիտէր թէ ինքը խօսակցութեան առարկայ էր։

Այս անցքը ինձ թւեց շատ իւղալի նիւթ մի սուր յօդւածիկի համար։ Ես նորանից, թէւ վատ, բայց մի երկան պատմւածք շինեցի, որը, ազդեցութիւն գործելու նպատակով, ճոխացրի անձունի նկարներով, որոնք գանակով քանդակւած էին փայտի վերայ։ Այդ նկարներից մէկը ներկայացնում էր Խ.-ին այն րոպէին, երբ նա մտնում է, եղել գետը՝ շապկանց և լապտերը ձեռին, գտաւզանով ստուգեցով ջրի խորութիւնը։ Այդ բանը ինձ շատ գւարճալի թւեց և ի հարկէ իմ զուտիւը չէր կարող հաշւի առնել այդպիսի պարսաւագրի բարոյական նշանակութիւնը։

Բոլորովին բաւական մնալով իմ սրամութեան արդիւնքով՝ ես որոնում էի իմ յաղթութիւնների համար ուրիշ առարկաներ, երբ յանկարծ մի լաւ բան եկաւ մոքիս, այն է, որ փորձեմ զրել մի ծաղրական ոտանաւոր, որով մի լաւ կծեմ զիւղական թերթի հրատարակչին, մէզադրելով նորան մի որ և է չարած խարդախութեան մէջ և յետոյ տեսնեմ-թէ նա ինչպէս է վեր ու վայր տալիս և կատաղում։

Ես մտադրութիւնս՝ իրագործեցի, նմանեցնելով ոտանաւոր յայտնի մի բանաստեղծութեան և պէտք է խոսովանեմ, որ Հնմանողութիւնը շատ անցածող դուրս եկաւ։

Դորանից յետոյ ես ամենակատաղի ակնարկներով խայտաւակեցի մեր քաղաքացիներից երկու անւանի մարդու, որոնք իսկն ասած՝ մերկացնելու արժանի ոչինչ չին արած, բայց ես մտքումն դրել էի հօրեղբօրս լրագիրը որչափ կարելի է կինդանի դարձնելու։

Անուշեառ ես մի թեթև կոթեցի մեր քաղաքը նոր եկած մի շքասէր ձանապարհորդի, որ կանանց շրջանում մեծ անուն ունէր և սրտեր էր գրաւում: Դա մի անվերջ ժպատաշող իմաստակն էր, զիզի-պիզի հագնւող և անսահման իրանով պարծեցող: Նա իւր արած յաղթութիւնների պատուին և յիշատակին յօրինում էր տենդոս ոտանաւորներ, որ բերում էր մերթերթում տպագրելու: Իմ խմբագրութեան միջոցին՝ նա բերաւ մի ոտանաւոր այս վերնագրով «Մարիամը Հոռմա, որ նշանակում էր՝ Մարիամը Հաննիբալեան թերթում: Մրբագրութեան ժամանակ կարգալով այդ ոտանտորը՝ ես տեսաց, որ դա ամենսխացոտառակ զատարկութեան մի նմուշ է, որ ՚ի հարկէ պէսաք է, ամեննեին չը տպագրէի. բայց ես նորան հրատարակեցի, աւելացնելով հետեւալ կծու ծանօթութիւնը:

«Մեք տպագրում ենք այս անմիտ ոտանաւորը վերջին անգամը. բայց յացնում ենք նորա հեղինակ պարոն Դին, որ միւս անգամ մենք մեզ այս փորձութեան մէջ չենք գձիլ և խորհուրդ ենք տալիս, որ նա միւս անգամ, երբ ցանկանալու լինի զործ ունենալ իւր բարեկամուհինների հետ Հոռմա, ընտրի իւր համար ուրիշ միջնորդ և ոչ թէ մեր լրագրի համարները»:

Համարը գուրս եկաւ: Ես երբէք չէի երեակայել, որ լրագրական մի ացդ տեսակ նշյն բան կարող էր մի ացդ տեսակ ուշագրութիւն զրաւող լինել: Մեր լրագիր պահանջները յանկարծ բազմացան և այնպէս մեծ թւով, որ մինչև այդ ժամանակը լսւած չէր:

Բոլոր քաղաքը տակնուվերաց եղաւ: Վաղ առաւօտը ոլ. Խ-ը մոտաւ խմբագրատունը՝ ձեռքին բունած երկփողանի հրացանը: Երբ նա ինձ տեսաւ և համոզւեց, որ նորան վիրաւորողը ինձ նման մի երեխայ է, միայն ականջներս բռնեց, քաշեց և հեռացաւ. բայց մի և նոյն երեկոյեան, ինչպէս իմացանք, նա բնակարանի փողը տալիս է ու հետանում առ միշտ մեր քաղաքից: Ճանապարհորդը, որ իւր մասնագիտութիւնով մի գերձակ էր, եկաւ իւր մկրատով և արդնուկով. բայց նոյնպէս նայեց արհամարհանքով վերաս և խկոյն հեռացաւ մեր քաղաքից: Միւս երկու անւանի քաղաքացիները եկել էին իմ դէմ դատ բանալու, բայց տեսնելով իմ չնչին մի բան լինելս՝ դուրս փախաւ կատաղած կերպով: — Միւս օրը՝ գիւղական թերթի խմբագիրը ներս մուտ և սկսեց անհաշիւ աղաղակել ու բարկանալ,

արիւնով վրէժ պահանջելով, սակայն վերջացրեց նորանով, որ բարեսիրտ կերպով ինձ ներեց և մինչեւ անգամ ինձ հրաւիրեց մերձակայց զեղատունը, որ իսպառ ջնջենք թշնամական զգացմունքը՝ դարդուկելով մի-մի բաժակ ճճինու սպանող դեղից, ինչպէս նա հանաքով ասաց ինձ բաժակից չխկացնելով:

Հօրեղբայրս իւր բացակացութիւնից գառնալով՝ շատ բարկացաւ վերաս և ի հարկէ ՚ի զուր, որովհետու ևս լրագրին զարկ տւի, նորա մէջ կենդանութիւն փանով և մի և նոյն ժամանակ նորան չենթարկեցի կատաղի մեղագրեալների արիւնարբու հարւածներին...

Բացց երբ հօրեղբայրս նայեց հուշեմատեանին՝ բարկութիւնը փոխեց զթութեան և ժպիտի: Նա տեսաւ որ ևս աւելացրել եմ բաժանորդների թիւը երեսուն և երեքով, որոնք արդէն նազդ կերպառուցել էին բաժանորդագիրնը ամենայն տեսակի անացին պապով հատուցել և ընդեղէններով, զորօրինակ, փայտով, կազամբով, բակլով և չը ծախւող շողկամով, և այս բոլորը այնպիսի մեծ քանակութեամբ, որ կարգին լնուանիք ունեցողին անգամ՝ երկու տարի կարող էր բաւել:

## ԻՄ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԱՐԿԱԾՔՆԵՐԸ

### ՄԱՐԿ ՏՈՒԵՆԻ

Ես ունեի մի հրաշալի ժամացոյց, որ ամբողջ տարի ու կես ժամանակ բանում էր բոլորովին կանոնաւոր, ոչ յետ էր մնում, ոչ առաջ էր դնում, ոչ մի խանդարումներ չուներ և երբէք էլ չէր կանգնում: Ես արդէն սկսում էի այն համոզմունքին գալ, որ իմ ժամացոյցը անսխալական է իւր ցուցմունքներում: Խսկ նորա կաղմածքը և ներքին աշխարհը մշանջենական է:

Բայց ըլ գիտեմ ինչպէս եղաւ մի անդամ գիշերը մոռացայ ժամացոյց լարելու և նա կանգնեց: Այս դէպքի մասին ես շատ ցաւեցի, տեսնելով այդտեղ ասկազայ դժբաղութեան մի նախարան, մի չարագուշակ նշան:

Ես սակայն ինձ քաջալերեցի և դիմեցի ժամագործին, որ նո կարգի բերի բոլորը: Ժամագործը ձեռ քն առաւ իմ ժամացոյցը, և բաց արաւ ներսը և սկսեց մանրամասն զննութիւն, որից յետոյ վճռական կերպով յացանեց՝ «Ճամացոյցը չորս րոպէ յետ է մնում, պէտք է նորա խաղը աւելացներ»:

Ես կամեցայ նորա ձեռքը բոնել, յետ պահել, փորձեցի հասկացնել նորան, որ ժամացոյցի խաղը բոլորովին ճիշդ է, բայց աւազ, ի զուր: Ախմախուր մի բերան հա պնդում էր, որ ժամացոյցը յետ է մնում, պէտք է զեկը փոքր ինչ ծռել և էլ ոչինչ չէր ուզում լսել: Մինչդեռ ես վրգովմունքից և բարկութիւնից պար էի դալիս կանգնած տեղում՝ չարագըրծը սառնասիրա և կոպիտ կերպով իրագործեց իւր խացառակ մոռաղբութիւնը:

Եւ ի՞նչ զուրս եկաւ: Ժամացոյցս սկսեց վագել: Նա վագում էր

անդագար՝ որ օրի վերայ՝ աւելի ողնորւելով։ Մի շաբաթից յետոյ նա արդէն հասաւ մի հիւանդու տենդային արագութեան և նորա զարկը բարձրացաւ մինչև հարիւր յիսունի սուկրում։ Երկրորդ ամսի վերջում նա մեր քաղաքի բոլոր ժամացոցներից առաջ ընկաւ և նորա ցոյց տւած ժամանակը (եթէ հաշւենք բոլոր աւելորդ անցած ժամերը) օրացոցից ցուցմունքից տասներեք օր աւելի առաջ անցաւ։ Ժամացոցս նոյեմբեր ամիսն էր մտել՝ փոթորիկների և ձիւնի եղանակները, մինչդեռ զրառմը՝ հոկտեմբերի տերւները զեռ ծառերի վերայ թփթփում էին։ Նետեւելով ժամացոցիս ցուցմունքին՝ ես վաղ վճարեցի բնակարանիս փողը, պայմանաժամկից առաջ տւի հաշւեներս և կատարեցի ուրիշ պարտաւորութիւններս այնպէս տնաքանդ կերպով, որ հազիւ ազառուեցի կատարեալ սնանկութիւնից։

Չե, տեսայ բանս շատ է վատանում։ Ես վճռեցի դիմելու մի ուրիշ ժամագործի։ Նա հարցրեց ինձ, արդեօք երբ և իցէ տւել եմ ժամացոցս ուղղելու։ Ես բացասական պատասխան տւի, հաւատացնելով նորան, որ ժամացոցս ոչ մի պակասութիւն երբէք չի ունեցել։

Նա նայեց ժամացոցիս մի դիւական զգելի չարախնդացութեամբ, արագ բացեց ներսը և յետոյ՝ իւր աչքին դնելով խոշորացոցը՝ սկսեց զննել ժամացոցի կազմութիւնը։ Զննութիւնից յետոյ՝ ժամագործը յացնեց, որ հարկաւոր է ժամացոցը մաքրել, օծել և նորա զեկի դիրքը փոխել։ Մի շաբաթից յետոյ, ասաց նա, պատրաստ կը լինի։

Այս գործողութիւնից, այսինքն, մաքրելուց, օծելուց և զեկը տեղափոխելուց յետոյ, դժբաղդ ժամացոցս սկսեց այնպէս յետ մնալ, որ նորա յուսակուուր չկլուսկոցը յիշեցնում էր թաղումի զանգահարութիւնը։ Ժամացոցիս շնորհքից՝ ես բաց էի թողնում հարկաւոր գնացքները, ուշանում էի գործքիս վերաբերեալ բոլոր այցելութիւններին և վերջապէս բաց էի թողնում մինչև անգամ իմ ճաշերը։ Ժամացոցս մի անգամ կարեւոր պարտամուրհակիս օրը զողացաւ և ես սաստիկ տուժեցի։ Աստիճանաբար ես յետ էի գնում զեպի երեկուայ օրը, յետոյ անցեալ օրը, և վերջապէս մի շաբաթ յետ Ես սկսեցի վախենալ, որ մի գուցէ աւելի ևս յետ գնամ և անցած ամիսը ընկնեմ։ Բոլոր աշխարհը սկսեց մթնել աչքում։ Այդպէս յետ գնալով ախր ուր պէտք է հասնէի։ Ես արդէն նկատում էի, որ իմ մէջ մի

ձգտում է սկսում երեւալ դէպի մեր թանգարանում զրւած մու-  
միան և պահանջ է զգացւում նորա հետ զրոյցի մտնել ընթացիկ  
ասեկոսէների մասին:

Ես նորից զնացի ժամագործի մօտ: Խմ ներկայութեամբ նա  
նորան քանդեց՝ մանր մասների վերածելով, որից յետոյ ասաց, որ  
սլաքը ձգւել է և որ նա ցմնն է առնում երեք օրում ուղղել: Այս  
անգամեայ կարկատանից ժամացոյցս սկսեց օրւայ հաշիւը ուղիղ ցոյց  
տալ մօտաւորապէս. բայց ահա ինչոտարոտի սովորութիւններով:  
Օրւայ կէսը նա շարժւում էր աշխուժով, անգթաբար արագ և բարձ-  
րացնում էր մի այնպիսի հաջոց, ունոց, շւտոց, փռնչոց և փոշոց,  
որ նորա գժոխալին աղմուկից մոքերս խառնում էին իմ զլխումը,  
էլ չը խօսած այն բանի մասին, որ այդ արշաւանքի ուժգնութեան  
շնորհիւ՝ քաղաքի ամենաեւանդուն ժամացոյցներն անգամ չէին  
կարողանում զիմանալ և յետ էին մնում: Խակ օրւայ երկրորդ կէսից  
նա սկսում էր գանդաղ շարժւել և ապուշանալ, մինչեւ որ զարձեալ  
զալիս էր և հաւասարւում միւս ժամացոյցներին իւր հաշիւներով:

Ացրափառվ, վերջ ի վերջոց, մի ամբողջ օրը լրանալուց յետոյ՝ ժա-  
մացոյցս համնում էր մրցանակի սիւնին՝ բոլորովին ճիշդ պայմանա-  
ժամին, կարծես թէ մոռանալով իւր բոլոր շեղու մները:

Նա ցոյց էր տալիս միջին ժամանակը ուղիղ և ոչով չէր կարող  
յանդիմանել, որ նա աւելի կամ պակաս է բան արել: Բայց միջին  
ժամանակի ուղիղ ցոյց տալը կազմում է մի ժամացոյցից պահանջւող  
առաքինութիւններից ամենափոքրը:

Ես տարա ժամացոյցս մի ուրիշ ժամագործի մօտ: Նա ասաց,  
որ զզրոցը փշացած է: Ես ուրախացայ, իմանալով, որ աւելի մեծ  
վտանգ չէ վերահասել իմ ժամացոյցին: Խոկն ասած, ես հասկացո-  
շութիւն անգամ չ'ունէի թէ ի՞նչ բան է ժամացոյցի զզրոցը,  
բայց չէի ուղում տղէտ երեւալ անծանօթի տուած: Ժամագործը  
ուղղեց կոճակը. բայց ժամացոյցը որչափ դորանից լաւացաւ, այն-  
քան էլ վատացաւ, որովհետեւ փոքր ինչ գնում էր՝ փոքր ինչ կանդ-  
նում, յետոյ զարձեալ զնում և կանգնում և այն, ինքնահաճ կեր-  
պով կարգադրելով իւր գնալու և կանգնելու միջոցները: Ամեն ան-  
գամ էլ՝ ճանապարհ ընկնելուց՝ աղմուկով յետ էր տալիս, ինչպէս  
մի հրացան: Սոխպւած՝ մի քանի օր ես բամբակի կրծքակալ էի

զնում՝ բաճկոնակիս տակը... բացց վերջապէս տարա իմ՝ չարարազդ ժամացոյցը մի ուրիշ ժամագործի մօտ:

Նա քանդեց ժամացոյցս: Երկայն ժամանակ նա խոշորացոցով քննում էր իւրաքանչիւր մասնիկը և վերջումը չաշտնեց, որ պէտք է մաղը փոխել: Յետոյ նորից հաւաքեց բոլորը և բանի գձեց: Այժմ ժամացոյցը սկսեց յաջող առաջ զնալ. միայն ամեն անդամ՝ երբ համնում էր տասն ժամին առանց տասն րոսկէի, ոլաքները միմիանց զրկում էին, ինչպէս մկրատի թալթերը, և այդ կէտից շարունակում էին իրանց զբօսանքը միասին: Աշխարհիս ամենափորձառու ծերունին անդամ չէր կարող այդպէս ժամացոյցով որոշել ժամանակը, ուստի ևս դարձեալ տարա վարպետի մօտ:

Նոր ժամագործը ինձ ասաց, որ ապակին ճնշում է և ոլաքը թուլացել է, ուստի պէտք է ացդ մասերը փոխեն: Նա իսկապէս մնձ ճշութեամբ կատարեց, ինչ հարկաւոր էր: Եւ ժամացոյց լիրաւի բաւականին առողջացաւ, միայն մի արատաւորութիւն ունենալով: Անվրդով և բարեխիլզմ կերպով ութ ժամ շարունակ շարժւելուց յետոյ, նորա ներքին համակարգութիւնը խանգարւում էր, մեքենան սկսում էր բզզալ մեղրածանծի նման, ըստ որում ոլաքները սկսում էին արտգընթաց պտղաւել՝ մէկը միւսի ետելից՝ այնպիսի ուժգնութեամբ, որ նոյա անհատականութիւնը չքանում էր արտաքին տեսքից և նոքա երեւում էին ժամացոյցի երեսին, իրուն ոստայնի թելեր:

Ժամացոյցը այզպիսի դէպքերում մի վեց-եօթ րոսկում անում էր քանիչորս ժամւաց գործ և յետոյ կանգ էր առնում ուժգին հարւածով: Տիսուր սրտով՝ ես զնացի դարձեալ մի ժամագործի մօտ և վճռեցի, որ այս անդամ արդէն մանրամամն հետեւմ ժամացոյցիս վել այս կատարւող փորձերին և կէտ առ կէտ հարց ու փորձ անեմ բոլորի մասին, որպէսին, ինչպէս տեսնում էի, ինձ սպառնացող վասնը շատ լուրջ կերպարանք էր սկսում սուանալ:

Առաջ ժամացոյցս արժէր երկու հաղար գոլլար, իսկ զբազւելով նորան ուղղելու և կարկատելու գործով՝ ես կարծեմ ծախք էի արել արդէն երկու երեք հաղար գոլլար:

Մինչդեռ ճնշւած այս խորհրդածութիւններից՝ սպասում էի վարպետի վճռին, սկսեցի նկատել, որ ժամագործը ինձ ծանօթ և

երևում։ Միթէ աս իմ վաղեմի ծանօթ՝ շողենաւի մեքենավարն է, որ ամենեին հմուտ մասնագէտի անուն չունէր։ Աս դիտում էի, աշբիս չէի հաւատում։ Նա մանրամասնաբար զննեց ժամացոյցի կազմութիւնը, ինչպէս արել էին և նախորդ վարպետները և յետոյ յալոնեց իւր որոշումը նոյն անպայման անձնուողագութեամբ։

— Զեր ժամացոյցը, ասաց նա, չափազանց շատ շոգի է արտաքերում. պէտք է նախապահ լեզւակը փակւի...

Համբերութիւնս այզտիղ հասուա. բարկացայ և այնպէս սաստիկ վերան յարձակւեցի, որ զլուխը իսպառ ջարդեցի իրան մեռցրի և թաղեցի թշւառականին իմ հաշւով։

Իմ հանգուցեալ հօրեղբայր Աւիլեամը (Աստուած հոգին լուսաւորի) յաճախ ասում էր, որ լաւ ձին մինչև այն ժամանակին է լաւ ձի, քանի տնից չէ փախել և որ լաւ ժամացոյցն էլ՝ մինչև այն ժամանակին է լաւ, քանի չէ ընկել կարկատողների ձեւքը։ Նա առհասարակ զարմանում է, թէ ի՞նչ տեսակ են կարողանում աշխարհումն ապրուստ ճարել բոլոր անյաջող պղնձագործները, զինագործները, կոշկակարները, մեքենագործները դարբինները, և այն և այլն։ Եւ այդ բանի վերաբերմամբ՝ ոչով չէր կարողանում նորան մի կարգին պատասխան տալ։

\* \* \*

## ՍՈՒՐԵՆ ԱԹՎՅԵԱՆՑԻ

Անցաւ գիշերը խաւար միգտպատ,  
Բացւում է գաշտը, պարզւում խորխորաս,  
Գարնան արևը շուտ կ'ելնէ սարից,  
Թափելով ջերմը վըճիտ շողերից:

Թող ալստեղ քնքոյշ բացւի արշալոյս,  
Եւ թլմբած երկրին ներշընչէ խրախոյս,  
Անթիւ գոյները միմեանց ձուլելով,  
Վառւի խալտալով, անցնի ժըպտալով.  
Թող սուլէ-փըչէ մեղմիկ զեփիւոը,  
Նարժէ գալարի թարմ համասփիւոը,  
Գուրգուրի վերան, կենդանի խօսէ  
Եւ մեղմածածան-ալիքներ հիւսէ:

Թող արևելքը խարոյկը բացէ,  
Եւ նորա միջից լուսատուն ծագէ,  
Հովիտ ու անտառ, աղքիւր և գետակ.  
Վառ երկնքի գէմ շողշողան խալտակ.  
Արևը թափէ լոյսը ջերմագին  
Եւ, գըլորւելով փայլուն կամարին,  
Բարձրանալ վերին խորանն անլատակ,  
Բարձունքից օրհնէ քրտինք ու փառտակ:

Եւ սիրտս է այրում մի վառ անձկութիւն—  
Համօրէն գրկել քեզ, մայր բնութիւն.  
Թողնելով բաղդը միայն մուրացողին  
Ես քեզ եմ գիմում, բընութիւն անգին.  
Կ'ուզէի որ քո շըշուկը պարզւէր,  
Լարւած ականջիս մեղեղի հնչէր,  
Ու ես, երգելով բարձր շաբական,  
Լինէի վըսեմ տարերքիդ թարգման:

# ՐՈԲԵՐՏ ԿՈԽԻ ԳԻՒՏԻ ՄԱՍԻՆ

ՊՐՈՒՍ. ՄԻՆԻՍՏՐ ԳՈՅԱՆԻ ՃԱՌԸ.

Մեր ընթերցողներից շատերը կարող էին կարծել, որ «Վուրճ»-ի անցեալ 1890 թ. № 12-ում տւած լիուլի տեղեկութիւնները կոխի գիւտի մասին կարող էին սպառած լինել հասարակութեան հետաքրքրութիւնը այդ խնդրի մասին։ Բայց «Վուրճ»-ի տւած զեկուցումներից պակաս էր մի շատ կարեոր ճառ, որ կարդացել էլ Պրուսիակի լուսաւորութեան մինիստր ֆոն Գուսլեր՝ կոխի գիւտի մասին։ Մենք գտնում ենք, որ այդ ճառի մէջ, կարդացած պրուսական պատգամաւորների ժողովում 29 նոյեմբերի (նոր տումար), շոշափուած են ալեքսան կարեոր խնդիրներ, որ անկարելի է լին կանգնել ցանկութիւնից՝ այն հազորդել այս ամսագրի ընթերցողներին, անդամ եթէ շատերը, առաջին անգամից, մեղադրելու լինեն մէզ, թէ մենք վերադառնում ենք արդէն գոցւած մի խնդրին։ Մենք սակայն ապահով ենք, որ ընթերցողները այլ հզրակացութեան կը զան, եթէ ուշադրութեամբ հետեւելու լինեն պրուսական մինիստրի այս ճառին, որից մենք կ'աշխատենք մեզ համար անկարեոր տեղերը ըստ կարելոյն կրծատել։

ԱՅս վիշեցնում եմ Ձեզ 4-ն օգոստոսի, երբ պրոֆ. Կոխը իւր դասախոսութիւնը նորանով վերջացրեց, որ նա միանգամայն կարելի և հաւանական է գտնում, որ տուբերկուլ-բացիլների դէմ կռւելու միջոցի գիւտից կարողանաչ օգտւել գործնական բժշկականութիւնը։ Նա ասաց, որ սխալ են գործել, երբ ցանկացել են տուբերկուլ-բացիլը դէմ ուղղակի միջոցներով կռւել, քանի որ տրամաբանութիւնը պէտք է թելադրէր մի այլ ճանապարհ, այն է՝ կռւել տուբերկուլ-բացիլների դէմ մարմնից գուրս, որոնք արհեստական հողի վերակ լինեն գուացրած, երկրորդ՝ փորձեր անել մարդու վերաբ կոխը լայտնել էր, որ նա միջոցներ էր գոնել տուբերկուլ-բացիլների դէմ կռւել մարմնից գուրս, բայց որ այդ միջոցները անզօր են նոցա սպանել անասունների և մարդու մարմինների մէջ։ Ցեսոց կոխը վերջացրեց իւր առ միշտ անմուանալի զեկուցումը նրանով, որ նրան

անուամենալիս. լաջողել է անասունների վերակ փորձեր անելիս՝ մի նիւթ գտնել, որը կենդանուն ազատ է պահում տուբերկուլ-բացիներից և թէ ընդունակ է հիւանդութեան զարգացման դէմն առնել:

Կոխի առաջ չալտարաբութինը ներզործեց ամբողջ լուսաւորեալ աշխարհում որպէս որսուման հարւած և ազդ բոպէից ի հարկէ ուշաղրութիւնը լարսեց զէպի կոխի անձնաւորութիւը. Տայց նա վիճաբանութիւն. ներից իսկոցն հեռացաւ, շտապելով ներլինից գուրս զալ ճանապարհորդութեան՝ մինչեւ բժշկական կոնցրեսի վերջանալը. Անմիջապէս զորանից մաս, նա լուրովին գաղտնի կերպով առաջին փորձը արաւ ոչ միայն մի անասունի, այլ և մի մարդու վերաբ. Ամենից առաջ նորա զեղը գործադրեց «Charité» հիւանդանոցում պլոֆ. Փրենցելի և շտաբի բժիշկ Կոհլերի օգնութեամբ. Յետոյ նա արաւ արդէն հոչակւած փորձը իւր անձի վերակ և ներզործութիւնը անձքան սաստիկ էր, որ միմիայն նորա նման համոզւածը և վճռւածը կարող էր անել, քանի որ այն փորձը կարող էր նորան անմիջապէս մեռցնել. Նա ընդունել էր 5 խորանաբդ գրամի չափ, ուրեմն ամենաշատը, ինչ նա տեղ էր նարիտէլ հիւանդներից որ և է մէկին Յետոյ նա զիմնից պլոֆ. Բրիգերին, որը չալտնի է որպէս մի նշանաւոր և լուսալի հետազոտղ և աշխատում է աւողջաբանական ինստիտուտում և իւր աշխատութիւններով տևողական փառք է ձեռք բերած. Յրիդերի միջոցով նա ծանօթացաւ զր. Լեի՛րի մասնաւոր կլինիկի հետ կոխը վկանել է զր. Լեի՛րի կատարեալ անշահախնդիր ծառայութիւնները. Ես պարաւոր եմ նաև լիշտապելու, որ այնտեղի հիւանդները վճարում են օրական 1 մարկ 75 ֆենիգ (մօտ 60 կոպ. ոսկի), ուրեմն նողնը, ինչ վճարում է «Շարիտէ» հիւանդանոցում. Մինչեւ անդամ զր. Կոխի ցանկութեան համաձայն՝ լաջողել է նաև մի նախկին ուսանողի ձրի ընդունել:

Որպէս Կոխի աշխատակից, բացի զոցանից, լրագրերում լիշտապակմել է նաև զր. Կոռնեատ Կորնեալ չալտնի եղաւ իւր զարագլւախ կաղմող հրատարակութիւնով թոփախորաբարակացաւի մասին, որ ես անցեալ տարի, ակրութեան հաշով տպագրել ե ցրւել տուի ամենահեռու տեղեր.

Յետոյ որպէս աշխատակից Կոխի լիշտել է զոքտ. Դենգեւ, որը մի ընդարձակ մասնաւոր պրաքսիս ունի և պլոֆ. Պֆունդը:

Ես պէտք է ընդունեմ, որ այս բոլոր շարդկանց անունների զիմաց հարցական նշաններ չեն կան:

Փորձերը չեր կարելի բոլորովին զաղանի պահել. լրագրերում մի-մի տեղեկութիւններ կարելի էր կարդալ, որոնք նաև արտասահմանն էին անցնում, և արտասահմանի մամուլից սատանում էինք մենք բազմաթիւ չարտման և աննպատ դատավութիւններ, որոնք՝ չարախնդրութեամբ պնդում էին, թէ այն, ինչ Կոխը օգտառախ 4-ին զաել էր այժմ իրը ապա-կու նման փշրւած է: Յու համբերութեամբ ոպասում էի, մինչեւ որ գործը ինձ կը հասնի:

Հոկտեմբերի 27 ին պրոֆ. Կոխը ինձ հազորդեց, թէ նա մի լուսուկ միջոց (սպիտակի փեղում) է դտել տուքերկուլ-բացիլի դէմ. թէ նա զանում է-որ նա այսուհետեւ, իւր ընդարձակւած գիտնական աշխատավայրի պատճառով, այլ ևս չի կարող առաջարանական ինստիտուտի նախագահի պաշտոնը շարունակել, և նա դրսեց այս խնդիրը, թէ նա արդեօք պէտք է դուրս գալ ինստիտուտից: Բոլոր աշապիսի գէպքերում, և բ բ մի նշանաւուր կի ինական ուսուուցիչ մտած է եղել մի հետազօտական առաջարկը, որը նորա ամբողջ ուժն էր պահանջում, ես միշտ պետութեան պարագն եմ համարել՝ նրան ազատութիւն և մի ջոցներ տալ (հաւանութիւն լսողների կողմից): Նշանաւոր հետազօտողների մի ամբողջ շարք, բարձրագուն հաւանութեամբ, ևս այդ նպատակով աղասիել եմ ծառապութիւնից մի-երկու տարով: Այդպիսով նաև Կոխին արձակուրդ արւեց և պր. Ֆոն Էսմարխին լանձնւեց նորա անդապահութիւնը,

Դէ արդէն դաշտնիքը բացւեց: Բոլոր ջանքերը քօղը գեռ պահպանել՝ ապարդիւն էին: Կարծես սրտոմունքի պալթիւն էր որ դուրս սրտաց այդ ինստիտուտից: Արձակուրդ տալու օրը իմ խօսակցութիւնը Կոխի հետ աւելի խորը շշատիկ ինպիրը: Նա հէնց առաջուց պատրաստ էր ինձ ասել վերջին խօսքը, որ նա գիտէր: Խայց ես նորան խնդրեցի՝ այդ ինձ չասել, սրտինակ չափ կարող էր պատահել, որ ես առանց իմ մեղի, տեղեկութիւն տալի, որը գործին տւելի կը վեամէր քան կ'օգնէր: Որ նա սկզբում յոկ միանգաման պատրաստ է իւր գործերը հրատարակել, սովորուցում է, որ երբեք նորա նորու միջով միավ չի անցել, որ գիտնականից և իդէալականից դուրս ուրիշ հիմունք ունինար (Հաւանութիւն): Մինք խօսակցեցինք այս թեմայի վերապէ ինչ կարգադրութիւններ պէտք է անել, որ կարելիսութիւն արւի, որ Կոխը այժմ և թէ ընդ միշտ իւր գիւտի դործագրութիւնը և նորա տարածւելը հարեան ձիւղերի վերապապանով է: Նա կարծում էր որ զորա համար նրան հարկաւոր կը լինի մի հիւանդանոց՝ մի ուրիշ մեծ հիմնարկութեան մէջ, ուր նա բազմաթիւ հիւանդներից կարողանաւ և այլ վարակիչ հիւանդութիւնները ուսումնասիրել: լետու նա ցանկանում է մի գիտական ինստիտուտ՝ հարկաւոր հետազօտավայրի հարկաւոր հարկաւոր հիւանդանութիւններից նա այնքան վստահ էր իւր վերապէ որ այդ առաջարկութիւններից նա չօգտուեց, և մենք հեռացանք իրարից՝ առանց վախճանի հանգելու:

Բայց ես գաղափարի լիունից ընկալ: Անկասկած է, որ երբ պրոֆ. Կոխը ինձ ասում էր թէ նա մի միջոց է դտել ազգ միշտ էր, բայց այս էլ

մի խնդիր է, որ բանը այն ձեռվ ներկացնելի աշխարհքի առաջ, որ գիւտի տիրոջ շահերին ևս համապատասխանէ: Մեր բոլոր բնագիտական աշխատութիւնները լինուում են զլաւորութէս համալսարանների վերալ, և մեր պրուսական կլինիկաները ներտում և թէ արտօնահմանում ակա համբաւն ունին, թէ այնտեղ ստերով չեն դրազած և որ այն տեղ միայն այն է հրատարակւում, ինչ իսկապէս լաւ ճանաչւած է: Ոչտք է հեռու կենալ այնպիսի հրատարակութիւններից, որ փաստերի զիտողութիւնը անցնում է սպեկուլացիալի: Սպեկուլացիալի (շահախնդրութեան) և հետազօտութեան խառնուրդը երբէք չը պիտի տեղ գտնի մեր կլինիկներում:

Յեսու ևս մատածեցի վիրաբուժական կլինիկի մասին. նորա զեկավար պրոֆ. Ֆան Բերգմանի շնորհիւ ինձ չաջողեց, այնտեղ մի մեծ փորձնական հիմնարկութիւն կարգի բերել: Նուեմրերի 6.-ին արդէն կարելի եղաւ մի շատ հարուստ նիւթ ունենալ, որը տուբերկուլոզի բոլոր ձևերն էր ներկացացւում: Այնտեղ է աշխարհքիս բժիշկների ժամադիրը. օրական ացելում են այնտեղ հիւանդներին 300 բժիշկ: Սպեկուլացիաները և ուսումը պէտք է լիւա քաշւէին:

Կոխի ցանկութիւնների մասին Բերլին քաղաքի զիմաց՝ նույնմբերի 1.-ին տեղի ունեցաւ մի կոնֆերենց, բայց գժւարութիւններ չառաջացան. Կոխի ցանկութիւնը հեշտ կատարելի չէր: Յամենայն դէպս ես բանակցեցի ֆինանսական մինիստրի և «Շարլոտ» հիւանդանոցի հետ: Ֆինանսական մինիստրի հետ համաձանութիւն կալացաւ, որ պրուսական պետութեան պատի պարտականութիւնն է պրոֆ. Կոխին, իսր աշխատանքների համար, պետական միջոցներով նպաստել (մեծ հաւանութիւն): Նույնիք. 6.-ին ծրագիրը վերջանականապէս սրուցեց, ֆինանսական մինիստրը միջոցները տվեց, և ահա մենք զործի սկզբումն ենք: Նոյնիք. 7.-ին բանակցեցի ես Կոխի հետ իսր գիւտի հրատարակութեան մասին: Կոխը զեռ ալդ ժամանակ զիւտառութիւն ունեէր՝ բոլորը, ինչ զիտէր՝ ալդատ և բացարձակ լալանել: Բայց շատ երկար խօսակցութիւնից, երկու վկաների առջև, զուրս եկաւ, որ Կոխը առ հասարակ այն չէր կարող առել, ինչ կարող էր երաշխաւորել գեղի վերաբարարութիւնը, (dass Koch überhaupt nicht dasjenige sagen konnte, was eine wirksame Nachbildung des Mittels garantirte): ԲԵԼ նա կարող էր առել թէ ինչ նիւթից է պատրաստում զեղը և մեթոդը նկարագրել, բայց մեթոդը ցոյց տալ անկարելի էր, և սակայն մեթոդը այնքան դժւար է և պատասխանատու, որ նա չի կարող երեսակալել, նա պէտք է աչքով տեսնելու տեսողութիւնը վեց ամիսէ նշան ակում, մի փորձւած հետազօտողի համար:

Միւս կողմից վտանգ կար որ զեղը նմանողաթեամբ, պատրաստում՝ առանց նորա ներզործութիւնը ստուգելու: Մարդկութիւնը կ'ընկնէր կեղծողների ձեռքը, ժամանակը անցկացրած կը լինէր և ոնկերջ թւով լրացր

և մարդկակին կեանքեր զոհւած կը լինէին, Մեր խօսակցութեան վերջում  
ևս կոխի գիմաց պատասխանատւութիւն վերցրի և աչժմ  
էլ աշխարհն քի տռաջ նոյն պատասխանատւութիւնը վերց-  
նում եմ, որ ես նորան խնդրեցի, իւր հրատարակութեան  
մէջ միան ակնքան հեռու գնալ, որ կեղծելու վտանգ չը  
ներկաւացնի (մեծ հաւանութիւն):

Հրատարակութիւնը<sup>1)</sup> տեղի ունեցաւ նոյեմբերի 13-ին. Սա մի  
կարեսոր զոկումինտ է և բոլոր ժամանակ անմոռանալի է մնալու:

Աւելի կարեորութիւն ստացաւ գեղը պատրաստելու խնդիրը՝ Գեռ-  
վաղօրօք, լամենան գէպս նուեմբ. 7-ին ես յախնեցի գաղտնի խորհրդա-  
կան կոխին, որ անկարելի է բանը թողնել աճնպէս Երաշխաւորութիւն  
չը կար, որ գեղը մեծ քանակութեամբ պատրաստէր: Թէ այն ժամանակ  
և թէ ալժմ գործը կաստարում է ընդպիմագործական շիշի մէջ (Reagensglas):  
Այն որ զլսաւորն է, այն է գործի բնագիտական-թէօրիական կողմը՝ մո-  
ռացութեան է տրւած բժշկական-զործնականի առջն: Որպէս սոսկ մարդ  
ես իմ իրաւունքից օգուտ եմ քաղած զատողութիւն կազմելու գործի բնա-  
գիտական կողմի մասին և մի երկառողով երեկ ես զաղտնի խորհրդական  
կոխին ներկայացրի այն, և նա հաւանութիւն աւեց: Ոչ մասնագէտի մոքերը  
միան համեմատական նշանակութիւն ունին, բայց նորա կարելոյն չափ  
պարզ են: (Ակսոնեղ մինիսար Գոուկը կարդում է կոխին զրած լուր աչդ  
երկառողը):

«Յս կարծում եմ որ կարաղ եմ ընդունել որ մի միջոց է գտնւած,  
որը, եթէ մի կենդանի մարդու մէջ ներս մտցնեի, մարդու մէջ գտնւած  
գործածքների վերաէ շատ մեծ ներգործութիւն է անում, եթէ նոցա մէջ  
կազմւած է տուբերկուլ-բացիլների մի որոշ ահսակը: Միջոցը (գեղը) ներ-  
գործում է, երբ կալ բացիլի այդ ահսակը: Ներգործութիւնը կատարւում  
է նաև, երբ միջոցը գործադրում է հիւանդացած անդից հեռու տեղերի  
վերաէ: Ներգործութիւնը միանդաման ահապին է և միջապէս ուղղած է  
տուբերկուլ-բացիլների դէմ: Ներգործութիւնը չի լինում և կամ կասար-  
ւում է թուզ կերպով այն անձերի վերաէ, որոնք տուբերկուլող չ'ունեն:  
և կամ երբ տուբերկուլների ուրիշ ահսակն ունեն: Ըստ երեսչթին  
աչդ գեղը չի իմացւում աչժմեաչ օրդան ական քիմիաչի  
միջոցով: թւում է թէ նա (գեղը) օրդանական քիմիաչի մի  
մութ ասպարէջի վերաէ լուս է սփռում: Այն մեթոդը, որով  
գեղը պատրաստւում է, որպէս նախատեսն ուում է, փոխա-  
կրելի է աչլ վարակիչ հիւանդութիւնների վերարաւ:

1) Այդ այն հրատարակութիւնն է, որ «Կոխի հրատարակութիւնը» խորագով  
հաղորդւեց «Մուլհայմ» ընթերցողներին ամսադրես 1890 թ. № 12:

Պրոֆեսոր Կովսը այս տաղերին հաւանութիւն տաեց և մասնաւորապէս համաձայնեց այն կէտին, որ վերաբերում է քիմիալին, նա կարծիք չականեց, որ այս բանը կարող է ուսումնասիրութեանը բոլորապին նոր ձեւեր տալ: Ով բնագիտական խնդիրներով զբազում է, իրօք այս տպաւորութիւնը կ'ունենաց, որ մենք շատ և շատ տասնեակ տարին եր աչս գիւտով իշխած ենք լինելու և այն՝ ինչով այս զիւտը, որ բնագիտական հողի վերակ է գտնել՝ բոլոր մեր զխոհցած զիւտերից վեր ի վեր է, այն է որ նա անմիջապէս կարող է զործադրուել պրաքսիսի բժշկականութիւնն համար: Դիագնոստիկան (Հիւանդութիւնը ճանաչելու) նշանակութիւնը արդէն աղժմ անկառիկած է:

Դեռ ևս չեղած բան է, որ մի զալանի գեղ ամբողջ աշխարհքից, մի միակ անունի (Կոփի) երաշխաւորութեամբ, ընդունելու Դիո ոչ մի մարդ ամբողջ աշխարհում չը գտնեց, որ ասէր՝ թէկուզ Առքերտ Կոփի անունն էլ մէջը լինի, բայց այլ բանը խարեբաւթիւն է: (Սկզ հաւանութիւն): Կոփը լինքը ամեն կերպ աշխատել է չափազանցութիւնների մէջ չընկնել և ես օրը 12 ժամ աղդ մոքով ջանքեր եմ անում:

Բժշկելու փորձերը սակայն պէտք է կլինիկներում և մասնաւոր հիմնարկութիւններում կատարւեն և ոչ պալիկլինիկներում և կամ աստանդական կերպով:

Կոփի առելով այս հաստատ է որ մասնբազիական մեթոդի հետ միասին աչս գեղը մի նշանակութիւն է սատանալու, որը մեր ամբողջ հասարակաց կետնքը մեծ չեղաշը ման է են թարկելու և Մեր ամբողջ կետնքը հիւանդանոցներում, ուստիմարաններում, իննամքի հիմնարկութիւններում և ազն բարերար աղղեցութիւն են սատանալու այս նոր գտնւած մեթոդից:

Վերադառնանք տուբերկուլոզին: Անառունների հիւանդութիւնները չեն կարող զատուել մարդկանին հիւանդութիւններից: Տաւարի բարակացաւք (Perlsucht) խնդիրը շատ զժւար խնդիր է: Տարիներով Հալլէում կատարւած փորձերը անհնառնութեան: Բայց բոլոր հիմունքներ կան մոռածերու, որ մարդս կարող է խոր խորիսով հիւանդացնել անսատնին, եթէ նա սուրբերկուլներ ունի, և որ ընդհակառակը՝ բարակացաւոս տաւարի կաթը վտանգաւոր է մաշըռու համար: Ոչ մի բանիմաց բժշկական և առողջարանական վարչութիւն չի կարող անտարբեր մնալ աչս բաներին, և անկառնելի չէ, որ այս զեղով գտնւած լինի մի դիագնոզական (հիւանդութիւնը ճանաչելու) միջոց, որը տաւարի տուբերկուլովը խոր ոլլընական շրջաններում ճանաչել կը տապ Արտիհետ երբ անստունները հազում են և խորի են դուրս զցում, զորանով սովորապէս կարելլութիւն է տրում մեծ ժիաւներ հասցնել (Յատ ճիշդ):

Ինչ է ենթադրւած անհերու, հացցնում են մեկ, Կոփի բժշկական եղանակը զարգացնելու և օդուակար դարձնելու համար: Դորա դրստա-

խանը տրւած է փաստերի վերակ հիմնած իմ ալս զեկուցմանս վերակ:  
Պէտք է երկու բանը ջոկել 1) միջոցը տուբերկուլոլի դէմ և 2) այն հաճ-  
զամանքները, որ հարկաւոր են ուրիշ վարակիչ հիւանդութիւնները Կոխի  
պլանով հետալուկու համար: Բայց անա դեռ մի հարց՝ ուժմն է իսկա-  
պէս պատկանում գեղը, ով է նորա ողեկան սեպհական ա-  
տերը, ինձ համար ոչ մի վարկեան կատկած չի եղել, որ զեղի ոգեկան  
սեպհականատէրը Կոխն է: (Հաւանութիւն ժողովի բոլոր նառարաններում):  
Իմ գիտցածով մենք երբեք պլանական կրթական վարչութեան մէջ կա-  
րելի չենք համարել, որ երբ մի ուսուցիչ իւր սեպհական հետալուական  
գործունէութեամբ մի միջոց է դատել լինի ալս անիլինի գոյների կամ եթե-  
րական իւզերի որ և է ուրիշ ճիւզի նկատմամբ, որ մենք այդ գիւտը պե-  
տական գանձարանի սեպհականութիւն համարած լինէինք: Դորանից բղխում  
է ալս հետևանքը, որ ինձ չի ուրականում պաշտօնական կերպով ներգործել  
Կոխի գեղի պատրաստելու գործի վերակ Բայց մենք շատ շւատով հասկա-  
ցանք, թէ ինչպէս, չը նաևած Կոխի սառնուրիւն հետազոտութիւններին,  
հոսանքը և շփոթութիւնը այնքան մեծ է լինելու, որ զորանից հասարա-  
կաց մի չարիք է գուանալու: Այդ պատճառով մենք Կոխի հետ հա-  
մաձաւնութիւն կաչացրինք, որ առաջ գեղից տրւի մեր  
(սրբուսական և դերանական) կլինիկներին և հիմնարկութիւններին,  
ուր թոքախտները խնամեամ են զիտնական սկզբունքներով, չետոչ  
տրւի օտարերկրեալ նախանման հիմնարկութիւններին, որ իսկապէս նա կա-  
րող էր սատիկանութեան պաշտպանութեան զիմել: (Ծիծաղ): Աս Ձեզ կա-  
րող կը լինէի պատմել ճնշումների մասին, անզամ կաշառքների մասին  
մեր կլինիկների սառին պաշտօնեաների զէմ: Վրդովեցուցիչ է ացղպիսի  
բանների մատին խօսելը: Այդ բոլորի զէմն առնելու համար Կոխը իսկապն  
զեղից ուղարկեց այն հալքենի և սատրերկրեաց հիմնարկութիւններին, որոնց  
մէջ թոքախտները մեծ թւոլք բժիշկում են, որպէս զի հոսանքը զէպի ներլին  
թոքախտների կողմնոց հեռու պահէ: Արտաքին գործերի մինիստրութիւնը  
ինձ օգնեց: Բոլոր պահանջ չները ուղղում է ին գորա: Նիրքեր-  
ցին Յետու ևս պարագս համարեցի, որ մեր թագաւորակարտն կլինիկնե-  
րում գեղը գործադրել զիտնականորէն և փարձեր անելով՝ աշխարհ-  
քիս գիտնական ընդհանուր սեպհական առաջ թիւ ութիւն զառնար  
Պրուսական թագաւորական կլինիկում այժմ արդէն 70 տուբերկուլ-հիւանդ-  
ներ կան և պր. Ֆոն Ռերգմանը մտազրութիւն ունի այդ թիւը մինչ 100-ի  
հասցնելու, որ խիբուրգիական տուբերկուլովի նկատմամբ կարելին չափ  
ամբողջ եղանակացութիւնների համարելու կարելի լինի:

Բայց ահոէք որ—բայտնի է որ ոչինչ չը կայ անքան աղջիւ և ան-

քան մաքուր, որ չը կարողանաէ կասկածից ազատ մնալ—չեն քաշւել հարց գնելու, թէ արդեօք ակտեղ խարութիւն չի դնւում ազատ և հարուստի մէջ: Ես կարող եմ հաւատացնել, որ թաղաւորական կլինիկներում գերադասութիւնը աղքատներին է տրում: (Հաւանութիւն), Ֆոն Բերգմանը բռլոր ազատ անկողինները տուքերկուլհիւանդներին է տւել և գները նշանակւած են օրական ամենաշատը 5 մարկ 50 պֆենիգ (ռուսաց փողով 1 րուբլի 80 կոպէկ ոսկի): Նոյն է բոլոր պրոսական կլինիկներում: Գերհարդի կլինիկում բռլորը բանւորներ և արհետաւորներ են (ընդհանուր հաւատութիւն): Ակտեղի կլինիկում ամեն օր փորձեր են կատարում և աչօր անգլիերէն, վաղը քրանսերէն գասախօսութիւն է կտարւելու:

Կոխի լիմֆը (հեղուկը) պատրաստում է օգնութեամբ զր. Լիբբերց'ի և դր. Պֆուձի: Իոցանից միան Լիբբերցն է բժշկական պրաքսիսով պարապում: Դոքտ. Պֆուձլին չը լուած առաջարկութիւններ են արւած եղել, բայց նա իւր ոչը ամենից առաջ խիրուրգիական կլինիկին է զոնել: Ես ակտեղ կը վիշտակիմ, դնի նկատմամբ, որ 5 խորանուրդ սանտիմետր (կամ 5 գրամ) դեղը առնելում է 25 մարկով (մօտ 8 րուբլի 30 կոպ. ոսկի): Այդ վոքրիկ սրւակը պարունակում է 500 ներմուծութիւն ամենամեծ չափսով: Մեծ մասամբ սական միան 1 միլիլիգրամ է արւում միանգամից: Ուրեմն, այդ չափսով, մի սրւակի մէջ 500 անգամւայ զեղ կատ և իւրաքանչիւրը ուրեմն արժէ կէս պֆերնիգ (ծիծաղ): (Աչս պֆենիգը ռուսաց փողով մի կոպէկի մօտ տասներորդ մասն է): Պուք տեսնում էք, որ գինը արդէն անքան փոքր է, որ այլ ես փողով չի լինում նորան որոշել: Դր. Կորնեալը ինձ խնդրել է հազարդել, որ նա լրադրերում պատճւած գները չի վերցրած հիւանդներից: Առաջին բժշկական խորհուրդի համար, երբ նա ամենաղժւար ներքին օրգաններն է հետազոտում, պահանջում է եղել մինչ աւժմ 10—30 մարկ (ռուսաց փողով մօտ 3—10 րոսկի): Այս գումարները արդէն անքան փոքր են, որ նա իրաւունք է համարում ապագայում թերես մի փոքր տւելացնել, բայց նա ինձ սաւաշ էլ ասել է, որ հարուստներից աւելին վերցրածը նա պարտականութիւն է համարում աղքատների վերաց գործադրել: Ես ես կարծել եմ որ ամեն մի լաւ բժշկի պարտքն է՝ որ հարուստից մի փոքր աւելի վերցնի, բայց որ այդ աւելին մարդկութեան օգտին ծառալեցնէ: (Հաւանութիւն), Դր. Կորնեալ օրական 50—60 աղքատներ է ընդունում ձրիապէս, և նա վարձատրութիւն չի պահանջում նորն իսկ ներմուծութիւնների (ինչեկցիա) և գործիքների համար, որ անքան կտրատող են: (Մեծ հաւանութիւն):

Երկրորդ կէտը, որի մասին պէտք է խօսենք, այն հիմնարկութեան մասին է, ուր պէտք է զեղը պատրաստի և սրտեղից նա պէտք է ուղարկի: Դժւարութիւնը աչսօր միան նորա մէջն է, որ գեռ ևս ոչ մի մեթոդ չը կատ, որով կարելի լինէր դեղը մեծ քանակու-

թեամբ պատրաստել։ Վեց շաբաթ է պահանջւում նորան պատրաստելու համար։ Դր. Նիբբերցը պատրաստում է, իսկ զր. Պֆուհլը նորանքնում է, Աչ մի երաշխաւորութիւն չը կալ դեղի ներգործութեան համար, որ նա պարզ ի պարզող պատրաստուի և զործադրվու։ Դեղը պատրաստելուց վետոյ, նորան երեք անդամ փորձում են անասունի վերակ. և երբ սպառաւած ընդդիմագործութիւնը, կոխի ցուց տաւծ ձեռվ, չի նկատում՝ դեղը որպէս անպէտք՝ զէն են ցցում։ Կոխը, ոչը ինձ ամեն ինչ չափունեց ասաց նաև, որ ան կարող է դեղը ձեռքից բաց թողնել մինչեւ ինքը կոնտրուլ չան։ Դորա մէջ ահազին դժւարութիւն կայ։

Իսկ միւս գժւարութիւնը գեղը բաժանելու մէջն է։ Արդ ես կարող եմ ձեղ արդէն չափունել ուրախութիւնս, որ երկար բանականութիւններից վետոյ կոխի հետ, ես արդէն մի հիմքի եմ հասել, որը տանում է զէպի դեղի պետականացումը (աճինքն որ դեղը դառնաչ պետութեան սեպհականութիւն, (Ընդհանուր հաւանութիւն)։ Մենք չենք հագատանալու մինչեւ որ պետութիւնը իւր ձեռքը շառնի ալդ դեղը։ Եթէ մինչև անգամ մեղ անկարելի լինի դեղը աճնքան շուտով մեծ բանակութեամբ պատրաստել, զոնէ կարծում եմ որ ամբողջ աշխարհ քում հանգստութիւնը իւր Փիրման աչդ բան ի ներքու զնէ։ (Ընդհանուր հաւանութիւն)։

Դործը աճնքան էլ հեշտ չէ։ Ֆարբիկացիալի մէջ դանազանութիւն չի լինի, բաց զանազանութիւն կը լինի ծախելու գործի մէջ։ Հարկաւոր կը լինի մի վարչական օրգան ստեղծել, որի գործը կը լինի դեղը ուղարկել և բաժանել, Ուղղութիւնը ի հարկէ կենտրոնից պէտք է տրվի։ Հասարակութեանը և ամբողջ աշխարհին պէտք է ապահովութիւն տրվի, որ ալդ վարչութիւնը ոչինչ ընդհանուր չունի Փինանսական և նման դիտաւորութիւնների հետ։ (Մեծ հաւանութիւն։) Ապագարում գուցէ գործը աղնպէս փոփոխվի որ մենք մի քանի ոժեր ևս ընդունենք, մտակ կը զայ ժամանակ, որի մատին ես կասկած չունիմ, որ կոխը նոր միջացներ (զեղեր) կը զանի ուրիշ վարակիչ հիւանդութիւնների համար և, փորձերից վետոյ, այս նորաստեղծ հիմնարկութեանը կը չանձնի նոյն ֆարբիկացիալի համար։

Կոխը ցանկանում է, որ իւր դեղի պատրաստումը ապակենտրոնանալ, բաց նա ուղում է որ դա կապւած մեալ գողութիւն ունեցող մեծ հիմնարկութիւնների հետ և որ ալդ հիմնարկութիւնների մէջ մի բաժանմունք լինի, որը կատարէ այն մեծ առողջաբանական գործը, որ նա իրան նպատակ է դրել Ալդ բաժանմունքներին պէտք է որքան կարելի է միանան պոլիկլոնիկները, որպէս նաև այն բժիշկները, որոնք ամբուլանտորական պրաքիսով են բժշկում իրանց հիւանդներին, և չամենաց դէպս կենտրոնական տեղերում պէտք է հիմնարկութիւններ լինեն ազքատներին ձրի ընդունելու համար։

Աչժմ ինդիբը սորանումն է, թէ ինչ պէտք է լինի վայր ակիչ հի-

ւանդութիւնների ի նստիտուտը։ Նա ունենալու է երկու բաժանմունք՝ մէկը հիւանդների համար, միւսը կը լինի գիտական բաժանմունք։ Հիւանդների բաժանմունքում պէտք է լինին ան բոլոր վարակիչ հիւանդութիւնները, որ կտիսի հետազօտութիւնների համար հարկաւոր ևն Գիտական բաժանմունքում նա ուղարկ է քննել իւր բոլոր նախատեսած դէպքերը։ Այս ինստիտուտը ուղարկ ենք շինել քաղաքավիճ երկաթուղու (Stadtbahն) և ազգական կոչւած նոր Շարիտէ՛ի մէջ տեղ, Ալստեղ պէտք է փոքրիկ տներ շինեն բնակութեան համար, ուր ընդունւին հիւանդները և կերակրւեն, և մի փոքրիկ լսարան կը շինւի ախտեղ մինչ 50 հոգու համար։ Նոցա երկու կողմերից կը շինւին երկու մեծ և երկու փոքրիկ բարակներ, մի կողմը՝ կանանց, միւս կողմը՝ տղամարդկանց համար։ Նաև բնակութեան տներ կը շինւին սպասաւորների և ինամողների համար և ալճն։ Գիտութեան բաժանմունքը մի շինութիւն կը լինի, որը զրեթէ միան պատուածներից կը լինի բազկացած, որ ամեն մի միկրոսկոպիստ իւր համար առանձին պարապել կարողանալ։ Գործի զլուս կանգնած կը լինի պրոֆ. Կոխը, նորա ներքու երկու բաժների զեկավարներ՝ հիւանդների և գիտութեան բաժանմունքների համար։ Շինութիւնները կը նոտին կէս միլիոն մարկ և կոնտրակտները արդէն կապւած են, Մինչ այս մինչ այն շինութիւնների ինսպեկտոր Քօտիսէր ուղարկւում է Պարիզ, Պաստորի ինստիտուտը ացցելելու համար, ուր նա ապահովագիր կը դանի գլուստոր հիմունքները՝ գիտական բաժանմունք օրգանիզացեալի համար։—

Մինխար Փոն Գոուլեր'ի ճառի շարունակութիւնից մենք կը հաղորդենք աշն, որ, պիտական գանձարանից դուրս, գործին աջակցելու առաջարկանութիւններ ևն արել թէ Բերլին քաղաքը և թէ մասնաւոր բարեգործները, Բերլինը պահպանելու է իւր հաշուով 150 անկազին ազգատների համար։ Մասնաւոր բարեգործներից մէկը արդէն Կոխին գրել է, թէ մի միլիոն մարկ է տալիս, որ կտիսի զեկավարութեան ներքու գտնելիք մի հիւանդանոց շինւի թոքախտների համար։ Այժմ բանակցութիւններ ևն անւում մինխութեան և Բերլին քաղաքի միջն, որ քաղաքը մի նոր հիւանդանոց շինի մի ահազին սանատորիտմալ։ Միւս քաղաքներն էլ ե բարեգործները, մինխատը լուս ունի, կը հևտեն այդ օրինակներին։

Ակրչացնենք—հաղորդելով այս շատ կարևոր իրազութիւնը, որ և մի նխար Պասլերը հարկաւոր համարեց իւր ճառի վերջում հաղորդել, որ Ալխոր հաւատացնում է թէ բոլոր մարդկանց հօթներորդ մասը Տուբերկուլոզից է մեռնում։—

# ԿԱՅԱՐ ՎԻԼԵԼՄ Ա-Ի ՃԱՌԸ ՄԻԶԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարոններ, ես ձեզ իմ բոլոր որոտվ բարեւում եմ և շնորհակալու թիւն եմ լայտոնում անձնաալէս պր. մինիստրին, որ նա, չը նայած ամեն աեսակ գործերով ծանրաբեռնւած լինելուն, լանձն է առել այս ժողովի նախագահութիւնը վարել, ևս համոզւած եմ որ ոչ ոք ալնքան չէ կոչւած և ալնքան ճարպիկ չէ՝ մի ապսալիսի խնդիր ճիշդ զեկավարել և նորա լուծմանը նորաստել, որքան լուսաւորութեան մեր մինիստրը, որի մասին ես միանդամակն և առանց չափազանցման կարած եմ ասել, որ գերմանական պետութիւնը և պրուսական թագաւորութիւնը շատ տարիներ չի ունեցած մի ալնքան քաջ, անձնուէր և նշանաւոր մինիստր լուսաւորութեան, որպիսին նա է. Ես չափ ունիմ որ կը բաջողւի ձեր օգնութեամբ գործը ոչ միայն առաջացնել, ալլ և մինչ վերջը առնել:

Նիստը սկսւելով, կամր Վիլելմ կրկին խօսք վերցրեց և մի երկար ճառում հետեւալն առաց.

Պարոններ, ես կատեցալ նախ ձեզ մի երկու խօսք ասել, որովհետեւ կարենոր եմ համարում որ պարոնները առաջուց խոկ իմանան, թէ ինչորէս եմ ևս մասածում խնդրի վերաբ. Հաստատ է որ շատ բան վիճարանութեան է ենթարկելու առանց վճռի համնելու, և ես կարծում եմ, որ մի քանի կէտեր մթութեան մէջ են մնալու. Այդ պատճառով ես լսու համարեցի՞ պարոններին կասկածի մէջ չը թողնելու, որ առանդ ամենից տուաջ ոչ թէ քաղաքական կարողական խնդրի մասին է գործը, ալլ լոկ աեխանի քական և մանկավարժ ական միջացներին, մեր հայրենիքի գիրքին աշխարհիս մէջ և մեր կեանքին. Եւ ապանեղ խոկ պէտք է մի բան նկատեմ, Ես շատ կ'ուրախանալի եմ մենք այս քննութիւնները, այս վիճարանութիւնները անւանենք ոչ թէ ֆրանսիական schulenquête (լուսարկութիւն դպրոցների մասին), ալլ զերմանական schulfrage (դպրոցական խնդիր) խօսքով. Ֆրանդէ (խնդիր) չին զերմանական խօսքն է սկզբնական հետազոտութեան (լուս-

զարկութեան) համար, և ես պէտք է առեմ, որ այս էլ զեռ աւել կամ պակաս մի նախնական հետաշղոտութիւն է: Ուրեմն ուղղակի ասենք «Դպրոցական խնդիր»: Ես կարդացի բոլոր 14 հարցերը և գտնում եմ որ նոքա շատ հեշտութեամբ կարող են զայթակղել դէպի հետականութիւնը: Ազդես շատ կը ցաւէի: Դլխաւարը այն է որ գործի ոգին ըմբռնէր և ոչ միայն նորա ձևը: Եւ ես իմ կողմից մի քանի հարցեր եմ դրել որ ես ձեր մէջ կը պարտեցնեմ և ես լուս ունիմ որ ձեր ուշաղը ութիւնը կը գրաւեն: Ամենից առաջ «Պարոցական առողջաբանութիւնը բացի մարմնամարդութիւնից», ահա մի բան, որը շատ ճշութեամբ պէտք է քննիւ: Յետոյ՝ «Պասաւանդելի նիւթի պակասացնումը» լետոյ՝ «Առանձին առարկաների դասաւանդութեան ծրագիրները», և լետոյ՝ «Պասաւանդութեան մեթոդը կազմակերպութեան համար (Lehrmetho, de für die Organisation), մի խօսք, որի իմաստը դժւար ըմբռնելի է թւում մեզ: ծանօթ: խմբ.):—ահա զլխաւոր կէտերը: Վեցերորդն է «Քննութիւններից գլխաւոր բեռը հնուցրած է արդիօք?», և եօթներորդ՝ «Ճանրաբեռնումը ապագալում թեթևացնել», ութերորդ՝ «Խնչպէս պէտք է կազմակերպել վերահսկողութիւնը, երբ գործը վլուխ բերած կը լինի»: Իններորդ՝ «Վանոնաւոր և արտակարդ բերիզիաները այլ և այլ բարձր վարչական իշխանութիւնների կողմից»:

«Ես զնում եմ այս հարցերը ժողովի սեղանի վերակ ով կամինում է կարող է գոցա մասին տեղեկանալ: Ամբողջ լինդիրը, պարոններ, կամաց կամաց լինքն իրան զարգացաւ: զուք կանգնած էք ալսուեղ մի բանի զիմաց, որի մասին ես հաստատ համողւած եմ, որ զուք այն կատարելութիւնով, որ կը տաք գործին, այն ձևով, որ զուք կը դրոշմէք նրան, արդէն որպէս հասուն պտուղ ազգին կը դարձնէք.

Գուցէ հարկաւորութիւն չը լինէր այն կաբիննետավին հրամանը տալ, որ պր. մինխատը բարի եղաւ քիչ առաջ վիշտառկել, եթէ ուսումնարանը այն տեսակէտի կանգնած լինի, որի վերաց նա պէտք է կանգնած լինէր: Ես պէտք է առաջուց խսկ նկատեմ, որ եթէ ես մի փոքր խիստ պէտք է լինեմ, այդ ոչ ոքին անձնապէս չը պէտք է վերաբերի, այլ միայն սիստեմին, ընդհանուր զրութեանը: Եթէ ուսումնարանը կատարած լինէր այն, ինչ նորանից պահանջելի է, —և ես կարող եմ իբրև գործին տեղեակ խօսել, որովհետև ես սս գիմնազիալում նստած եմ եղել և ես գիտեմ թէ ինչ է կատարում այնտեղ—նա հէնց մկզբից իւր կոխւը ոկսած կը լինէր սոցիալ-դեմոկրատիակի դէմ: Ուսուցչական խմբերը իրար հետ միասին գործին պինդ կպած կը լինէին և դեռահաս երիտասարդութիւնը այնպէս կը թած կը լինէին, որ այն երիտասարդները, որոնք մօտաւորապէս ինձ հասակալից են, ուրեմն չուրջ 30 տարեկան—լինքն ըստ լինքնան կաղմած կը լինէին այն դասակարգը, որի հետ ես սկսութեան մէջ կ'աշխատէի՝ վտանգաւոր շարժման դէմ առնելու համար: Բայց այդ այդպէս չի եղած: Ամենալիք ջին լուպէն, ուր մեր զարոցը մեր ամբողջ հայրենական կեանքի և մեր

գարդացման համար կարևոր է եղած, այդ բոպէն եղած է 1864, 1866 և 1870 թւականներին. Այն ժամանակ պրուսական ուսումնարանները, պրուսական ուսուցչական կողեգիաները կրողներն էին միութեան գաղափարի, որը ամեն տեղ քարոզում էր: Ամեն մի աւարտող, որ զպրոցից դուրս էր գալիս և իր զինւոր կամ կեանքի մէջ էր մանում, ամենը համաձան էր այս մէկ կէտում՝ գերմանական պետութիւնը կրկին կը վերականգնի և շլզաս-Լոթարինգեան կրկին ձեռք կը բերէի: 1871 թւականով գործը դադրից, պետութիւնը այժմ միացած է, մենք ունինք արդէն ինչ ձգուում էինք ձեռք բերել, իսկ գործը մնաց կանգնած: Այժմ պէտք է որ ուսումնարանը, նոր ձեռք բերւած հիմունքից դուրս գալով, երիտասարդութիւնը դեկա-վարէ և նրան պարզէ, որ այդ նոր պետութիւնը ստեղծւած է պահ-պահնւելու համար: Բայց բանը մոռացութեան էր տրւած. և այժմ, այս կարծ միջոցում, որ գերմանական պետութիւնը գոյութիւն ունի, կենտրոնախուս տենդենցիներ են զարգանում: Աս այդ մասին անկասկած դատել կարող եմ, որովհետեւ ես վերև եմ կանգնած և բոլոր այդ ինչ են համուռամ: Պատճառը պէտք է որոնել երիտասարդութեան կրթութեան մէջ: Ինչն է պակաս: Պակասութիւնները մի քանի տեղ են: Դվիսաւոր պատճառը նորա մէջն է, որ 1870-ից դէս լեզագէտները որպէս beati passidentes գիմնազում նստել են և գլխաւորապէս կշիռը դրել են ուսանելու նիւթի, ուսանելու և գլխաւորան վերայ բայց ոչ բնաւորութիւնը կրթելու և աչժմեալ է կեանք ի վերջու բանը այսպէս զնալ չի կարող: Մինչ այժմ աւելի քիչ է կշիռը դրւած կարողանալու քան զիտեն ալու վերայ Ազդ երիւում է նաև այն պահանջներից, որ անւում են քննութիւնների ժամանակը: Պահանջում են, որ աշակերտը որքան կարելի է շատ զիտենալ. թէ նա կեանքի համար հարկաւոր է թէ ոչ՝ զա երկրորդականն է: Եթք ասում են, որ երիտասարդը քիչ է նախապատրաստել գործնական կեանքի և նորա պահանջների համար, զորան միշտ պատասխանում են թէ այդ զպրոցից գործը չէ և որ գլխաւորը սպու կրթութեան մէջն է, որպէս նա կարող է կեանքի մէջ հարկաւորը կատարել: Աս կարծում եմ որ այս ուղղութեամբ այլ ես չի կարելի զնալ:

Պատճալով ալժմ զպրոցին և մասնաւորապէս գիմնադին, ես շատ լաւ հասկանում եմ, որ շատ շրջաններում ինձ ընդունում են որպէս մոլեսանդ հակառակորդ գիմնազին և որ ինձ ներկազարդել են որպէս միւս զպրոցների բարեկամ: Պարտներ, զա ճիշտ չէ: Ով ինքը գիմնազում եղել է և կուլիսների վետեր նայել է, նա զիտէ, թէ պակասութիւնը ինչումն է: Աւ պակասութիւնը ամենից առաջ նորանումն է, որ ուսուումնարանը զուրկ է ազդակ ին չի մունքից: Մենք պէտք է որպէս հիմք զիմ-

Հրաշալի ես զու, օ Լեման,  
Գեղեցիկութեամբ քո չքիւ,

Քո զմրուխտէ ջրով անհման  
Ափերովիդ պերճ ու գեղ.  
Ողջո՞ն վճիտ ալիքներիդ,  
Նրանց մնջմասա՞ն խաղերին  
Որ ցօղում են գեղափթիթ  
Եղբները հանդարախն:  
Լուսինն անդորր ջրիդ երեսին  
Ցողանում է գեղաբար:  
Աստղեր լողում են նրա միջին  
Ամպերն խմբով սիրահար  
Նրա մէջը մնջմ օրօրուում,  
Կապուտ երկինքը նրան ժամառում...  
Նկարագրութիւնը շարանակւում  
է: Խոկապէս հրաշալի է Լեմանը:  
Բայց բանաստեղծը իւր նկարագրու-  
թեան մէջ լանկարծ կանդ է առնում:  
Բայց այն ինչ է, չքնաղ Լեման,  
Որ զարերի լնթացցում  
Կերպարանքով չարանման  
Խոժու, համր ու տրոտում  
Անակեղ ունես քո զրկում:  
Ուն ինչ է, որ խանգարում է գե-  
ղեցիկ լձի ներդաշնակ լաւ տպաւո-  
րութիւնը, այն ինչ է, որ բանա-  
տուեղծի ուրախութիւնը փոխարկում  
է տիրութիւն:  
Նա է Շիլիոն տպաւանը,  
Վըկան մտլովկանց բոնութեան,  
Թշառութեան բնակարանը  
Զարչարանքի օրօրան:  
Օ Շիլիօն, քո ոլսուերում  
Որքան մարդիկ զո՞ս եղան  
Գոռ մեծերի բանութեան (եր. 40):  
Իբրև նկարագրական մի ոտա-  
նաւոր՝ լաւ է «Խւճգիրառն» (երես  
18—20), որտեղ նկատում են թարմ  
տպաւրութիւնների հետքեր: Քիչ էն  
ալլաբանական ձեռով գրւածքներ: Նո-  
ցա մէջ աչքի է ընկնում «Արմաւե-  
չին» (երես 132—133):

Բերած օրինակներիցս, որ մա-  
գրախօսական մի նկատողութեան  
համար աւելի քան բաւական պէտք  
է համարիլ, աեսնում է ընթերցողը,  
որ պ. Լեռենցի ոտանաւորները իրանց  
մէջ պարունակում են հետաքրքրա-  
կան դաշտալիկներ, մոքի ելեկ ջներու-  
Հարկաւոր եմ համարում աւելացնելը,  
որ, բայց այդ, զրքի մէջ կան ուրիշ  
հետաքրքրական ոտանաւորներ, որոն-  
ցով հեղինակը արտակալում է իւր  
հալիքնասիրական զգացմունքները: Չը  
նաևելով այդ բոլորին, որտի ցաւող  
պէտք է լավանեմ, որ պ. Լեռենցի  
ժողովածուն չի գտնիլ մեծ ընդու-  
նելութիւն մեր հասարակութեան ըն-  
թերցող շրջաններում, կը մնակ անու-  
շագիր, չը կարգացւած, չնորհիւ հե-  
ղինակի մի քանի առանձնարարկու-  
թիւններին, որոնցից մէկը նորա գոր-  
ծածած լիզուն է:

Կիթէ խնդիրը վերաբերելու այն  
բանին թէ ինչ ուղղագրութիւն է  
Ծնկունած՝ ու թէ և գ, և թէ օ.  
կամ ինչ ձևեր են պահպանւած՝ հարա  
թէ նրա, վրա թէ վերա և այն, եւ  
չէի վեշտակիլ մանգամ բանաստեղ-  
ծութեան մասին խօսելուց, բայց այն  
լիզուի խնդիրը, որ ես եմ չօշափում,  
վերաբերում է լիզուին, իբրև մոքի  
արտակալութեան միջոցի, նորա  
կազմութեան և ոճին: Բարեբազզա-  
բար իմ վերև բերած օրինակներում  
լիզուն դիու բաւական չաջող էր, ոճը  
ազնքան թեթե, որ ես կարողացած  
ընթերցողին ծանօթացնել առանաւ-  
որների բովանդակութեան և նոցա  
իմաստի հետ: Ոլնչգեռ զրքի հետ  
անմիջապէս գործ ունեցողը կարող

է ձանձրանալ մի քանի օրինակներ, բից և գիրքը թողնել անուշադիր:

Դիրքը սկսում է հետեւել սոսանաւորով:

Նախ քան աչքով դու հետեւես սըրտատրով

Զգացումներիս, մաքերիս՝

Կաց, կին սիրած դու սրտիս,

Կաց և թող ինձ ասել մի խօսք վերստին,

Դուցէ աղջ խօսքն սրտիս խորից՝ բազմավէր

Դարձեալ գաղանիք, դարձեալ մի ճիչ ցաւագին

Պոկէ լանգուզն, անհամբեր,

Գուցէ ձախով անխոնարհ

Խռուն ամրոխի աշքից թագյրած անդադար

Երջանկութիւնն մեր միտւթեան նա մասնէ

Եւ դժողո՞ն ինձ կշտամբէ:

Յոն, առ գաղանիք և այս ճիչը մողմոփիչ

Սիրուս գաղանիքն է ու ձիչ:

Երբ որ բռուն փախորիկում է իմ հողին՝

Կամ կը մեղմէ նբա տանջանք

Եւ երբ սուզն իմ սրտիս,

Որ օժիտ է ինձ մարդերից, չարչարնք

Տարակուսանք ինձ տալլա (?),

Նա կը վաճէ նրանց, նկրելով ինձ հեշտանք... (երես 3):

Տեսէք, որչափ ժամանակ և ջանք է հարկաւոր ապս գրածը հասկանալու: Եւ դեռ խնդիր է թէ երկու ընթերցող միակերպ կը հասկանան միտքը. զորօրինակ ինչ բանին է վերաբերում արտատրությունը խոռը— անոնեւս լառին, թէ ազգացմանք-

Ներխուս «Անդաղար» բառը, որ վերաբերում է երեխ «թագյրած»-ին, խանդարում է մաքի անմիջապէս ըմբռնելլու:

Ոլորածով բառահիւսութիւնից ցամախ կորսում է գրւածքի միտքը. մարդ ստիպւած է լինում մի քանի անգամ չետ կարդալ, խոկ այդ բանը արդէն նւազեցնում է բանասփեզութեան արժէքը. Բանաստեղծական գրւածքները ունեն իրանց պահանջները ձեփ վերաբերմամբ: Բանաստեղծական միտքը՝ պէտք է և բանաստեղծական արտադարձութիւն ստանալու որպէս զի նա խոր գերը կատարի: Ազդ պատճառամ անվարմար են այնպիսի հանգուցներ, որոնք կանգնեցնում են ընթերցողի մաքի և երեակարութեան գործողութիւնը և անպիսի բառեր, որոնք աններդաշնակ են հնչում մարդի ականջին: Զորօրինակ՝ վերև բերած օրինակում աններգանակ են «ճիչ մորմոքիչ» բառերը, «արտատրութ», «ամփոփ» վերջաւորութիւնները. միտք սիստեմնեղ է «հեշտանք» բառը...

Աւրիշ անգերից ես բերեմ մի քանի օրինակներ, պատեղ կամ միտքը լինի խառն, անհասկանալի, կամ նոյս արտադարձելու ձեզ անկարմար.

Որպէս մի զե խոռուսագէմ  
Ցուսահատւած աշխարհից,

Ալլոս ճնշւած ցաւալ զժինեմ (!)  
Հոգիս մըսալլ թոնալից —

Ես թափառում էի մինակ  
(երես 15)

Եւ վըսեմական (1) լուսութեամբ  
ալատած  
Նա անկնճիռ (1) է, անորսունջ,  
անլաց... (երես 17)

Սուլիր, թուշիր, սողուն, արագ  
Տար մեզ տեղիր հեռաւոր,  
Տար մեզ խոռոչ (!) և դէալ առուակ  
(երես 21)  
Ելնում է որոտը՝ երկիր շարժելով,  
Շանթեր արձակում նա՝ արցունք  
թափելով...  
(Վարդանը) նաքում է բոլորը  
քանդւած.—  
Այսուեղ շուտ թափնում է դարչ  
օձը վախցած... (եր. 26—27)  
Օձը անձրիի ժամանակ զեռ միթէ  
պէտք է սպասէր Վարդանի երես-  
լուն, որ լետու թագցէր։  
Այլ հողն է ողբում լոկ, որոսն է  
անկանգ (!)  
(երես 27)  
Հոգիս օրօրւում շքել ամպալին (!),  
Ալլիքների վրայ, նուրբ, մեղմ  
մրմինջում  
Ոէր, բազդ ու անուրջ և կամաց  
նիրհում  
(երես 57)  
Ինչու համար մկնաձգաիչ (!) ցըն-  
ցոմեր  
Նրան չարչարում, նրան տանջում  
են մահաբեր  
(երես 59)  
Իմ ոհնեակիս օդը թթւում է խեղ-  
գիչ (!)  
Չորս սպատերն էլ իրանց խլու-  
թեամբ են նեղիչ (!)  
(երես 85)  
Ալլ ես շեմ խօսում զանազան օ-  
տարօտութիւնների մասին այս տե-  
սակի՝ փոխանակ ամելու վատուրից  
թքւած» զործ է ածւոծ «վատուրով  
թքնւած» (երես 59), փոխանակ «գու-  
խանասո» զրւած է «քեզ իմանալ»  
(երես 43) «լայնածաւալ ծառեր»  
(երես 85), հեշտանք, թափառանք,  
կափարդանք և ալին։  
Քաւականակով օրինակների ակա-

չափով՝ չեշտում ենք դարձեալ, որ  
կթէ այս և սոցա նման սխալները և  
անկարմարութիւնները ցանկալի չեն  
մի հասարակ զրւածքում, նոքա բո-  
լորովին մնասակար են բանասակդ-  
ական հեղինակութիւնների մէջ։

Ասհասարակ ցաւալի է, որ մեր  
հեղինակը խոր մաքերի արտապատու-  
թեան ոճերում հեռուէ ժողովրդական  
բանաստեղծական սպուց. զրում է  
շատ բարձր ոճով, խօսում է արիս-  
տոկրատական ձեերով, գործ է ածում  
շատ խրթին, սակաւ լուած բառեր։

Բացի լեզուի, ոճի պակասութիւ-  
նից հեղինակը տալիս է և մաքի հա-  
կասութեան, անկատարութեան օրի-  
նակներ։ Հեղինակը մի քանի տեղ  
կարծես ստիպել է իրան, որ զզացւի  
և ընկել է կամ բոնի զզացմունք-  
ների և կամ սանալմենտալիզմի աշ-  
խարհքը, իսկ երբեմն ընկնում է ա-  
նառողջ մասածողութեան ուղին։ Իրին  
օրինակ այս վերջինի՝ ես պէտք է  
է մատնացոց լինեմ «Թաշուն» սոտա-  
նաւորի վերակ. Այդ ստոնաւորում  
հեղինակը մատորութիւն ունի զրւա-  
տել զաշոնքը, իդէալացնել նորան և  
համում է անհեթիթութիւնների։

(երես 23)

Վերջացնելով խօսքս պ. Լիուեն-  
ցի ստոնաւորների այս առաջին մեծ  
ժողովածուի մասին՝ կրկնում եմ, որ  
նա, իրին նոր ստեղծագործութեան  
նմուշ՝ շատ հետաքրքրական է և  
յանկալի, որ նա տալիս է մեզ մտած-  
ւած և զդացւած երեսներ, բոլորովին  
արժանի զրականութեան կողմից ող-  
ջունելու։ Բայց հեղինակը պէտք է  
մեծ ուշաղրութիւն գարձնի խոր լի-  
զուի, իւր զրելու ձեփ վերակ, և տպի  
տաճաւորները մեծ զգուշութեամբ,  
զոհելով այն բոլորը, ինչ լաւ մտած-  
ւած չէ, ինչ կարգին ձևակերպ: ած չէ:

Ք. Ը.

ՄէնէՎի՛նեսն, հայր ԳԱԲՐԻԵԼ. — «Ազգային մատենադարան»։ Ազգա-  
րանութիւն ազնւական զարմին Տիւզեանց Վիէննա, տպ. Մխիթա-  
րեան 1890 թ., տառ № 12, 50 երես ին 4<sup>o</sup>, 8 պատկերով, զինը 1 ֆր.։

Գիտական, դրական կամ հասա-  
րակական ասպարիզում հոչակւած  
մարդկանց կենսագրութիւնները հար-  
կաւոր են և ունին կրթիչ ազդեցու-  
թիւն։ Բայց մեծ մարդ անունը չի  
կարելի տալ մէկի պաշտօնի բարձ-  
րավիւան կամ շահաւէտութեան վրաչ  
հիմնելով։ Կարաղ է նուն իսկ մի  
ամբողջ տոհմ, եթէ կամնում էք և  
ազնուական», մի քանի դարերի ըն-  
թացքում «ի գոհութիւն վեհապետ-  
ների» ժամանակաբար վարել զանա-  
պան շահաւէտ պաշտօններ, զառնալ  
«արքունիաց ոսկերիչներ» կամ «փո-  
ղերանցի վարիչներ», ինչպէս հենց  
«ազնուական զարմն Տիւզեանց», սաս-  
նալ բաղմաթիւ շքանշաններ, զրա-  
ւել սուլթանների սէրը, որ, ի զէպ  
նկատենք, չի արդելում նրանցից մի  
քանինքին նուն վեհապետների հրա-  
մանով «հաշւոն անհաւասարութեան  
պատճառով» և զլուատել կամ կախ-  
ւել՝ բայց չը ճարած այդ բոլորին մնալ  
այդ տոհմը ընդհանուր տևատիեաց ամէնքան աննշան որ շատ զարմացնի  
ոչ նախապաշարւածներին ան ճիգը  
ու ջանքը որ թափամ է Մխիթա-  
րեան միաբանութեան արժանապա-  
տիւ հայր սուրբը, որպէս զի «ժաման-  
ակի ժամգահարիչ ակրաներից» ա-  
զատի «ազգային մատենադարանի» հա-  
մար ազնոպիսի թանկագին փաստեր,  
թէ այս ինչ Տիւզեան պէտ այս ինչ

ժամանակ ծնաւ, այս ինչ շահաւէտ  
պաշտօնը վարեց, որը այս ինչ  
«չարակամ և քսու» հրէան ուղում էր  
խլել, ապս ու այն շքանշանները  
ստացաւ, այս ինչ նշանաւոր մարդու  
դուստրը կնութեան տուաւ, աչսքան  
զաւակ ունեցաւ, որոնցից այս մէկը  
«չորեքամսիալ» վախճանուեց և ալճու  
ևթէ այդ շքեղ ու խնամքով  
տպւած 50 երմուներում փնտունք  
ընդհանուրի համար նշանակութիւն  
ունեցող մի օգտակար զործ, մենք  
կը գտնենք որ «Տիւզեանների երեք-  
դարեան պատմութեան մէջ» եղել է  
մի «գիւցաղն» որ «գրեթէ» միանի խւր  
հաշով երկու փոքրիկ զպրոց է հաս-  
տաել և մի ընկերութիւն, որի ծախո-  
րով հրատարակել է տեւել «Գիտակ  
Քիւզանդեան» անունով մի ամսա-  
թերթ։ Ահա այս ազնուազարմ տոհմի  
բայր առնչութիւնը հազ կեանքի և  
գրականութեան հետ։ Ի հարկէ ներկայ  
Տիւզեաններին շատ հետաքրքրում  
կը լինի իմանալ իրանց տոհմի ծա-  
գումը և իւրաքանչիւր «գիւցաղն»  
անդամի մեծապործութիւնները, բայց  
թէ ինչ կատ ունի այդ ընտանեկան  
դարձենկոտ փափազը «ազգային մա-  
տենադարանի» և հայ զբականութեան  
հետ, և թէ ինչ ուսանելի բան կա  
առհասարակ աղ աեսակ տոհմազրու-  
թիւնների մէջ՝ անհասկանալի է։

Հ. Ա.

## ՏԱՅԱԿԱ-ՀԱՅԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԵՐԵԲ ՆՈՐ ԴԱՍԱԳՐԲԵՐ

- 1) ԱԱՀԱԿԵԱՆ, ՍԱՀԾԿ քահանայ. — «Սրբազան պատմութիւն Նոր-  
Ուխտի», փոխադրւած կ. Պօլիս, 1890 թ. տպագր. ն. Պէրպէրեան:
- 2) ՊԱԼԱՊԱՆ, կ. — «Մանկական պարտէզ», ժողովրդական բանաստեղ-  
ծութիւնք և այբբենարան, կ. Պօլիս. 1890 թ. տպագր. Ուղուր-  
լեան և լնկ.:
- 3) ՊՈՅԱՀԵԱՆ, Ա. — «Բնաւոր և գրաւոր թւաբանու-  
թիւն», մանկավարժական գրութեամբ ա. տարի, կ. Պօլիս. 1889 թ.  
տպագրութիւն ն. Պէրպէրեան:

Վերջին երկու տարիներս մի ու-  
րախալի շարժում է երեան գալիս  
մեր Պոլսի աղքաղինների մանկավար-  
ժական զրականութեան մէջ: Մինչ-  
դեռ այս քանի տարիներ անտարբեր  
էին մնացած դէպի վերմանական ման-  
կավարժութիւնը, ամնենելին վասանու-  
թիւն և հաւատ չունէին նորա վե-  
րալ, այժմ ոչ միայն կարգում, փո-  
խադրում են Կովկասեան դասազըր-  
քերը իրանց լեզուի (օրինակ վերո-  
վիշեալ Սրբազան ուսամութիւն Հին  
և Նոր Ուկոտին) այլ Կենտրոնական  
Վարժարանի դասանուու պ. Պողաճեանը  
նաև մի թւաբանութիւն է զրում  
ձեական հին աստիճաններով: «Ներ-  
կայ դասազիրքս պատրաստած եմ,  
առում է աշխատասիրողը, գերմա-  
նացի երեւելի մանկավարժ պրոֆէսոր  
պ. Ռէնի և հայ մանկավարժ հան-  
գուցեալ Ա. Բահաթրեանցի մէթո-  
դիկանները աչքի առաջ ունենալով»:  
Վերջապէս այս ամառ հրատարակ-  
ւեց նաև երրորդ գրքակը՝ «Մանկա-  
կան պարտէզ», որ ժողովրդական բա-  
նաստեղծութիւններ և Հերբարիթ Ցիլ-

լերեան սկզբունքով ընտրւած աղ-  
բային հէքաթներ են: Վերջին զըր-  
քովկիս չօրինողը թէն տաճկահազ  
սակաէն ուսում է առել Պէորգեան  
ճեմարանում և աղժմ զասատու է  
Զմիւռնիալը աղքաղին վարժարան-  
ների և տեսուչ մանկական պարտի-  
զին, որի անունով և խորազրած է  
այս դասագիրքը:

1. Սբբազու պատմութիւն Նոր-Ռւեպէի:  
Հենց որ այս ընտիր դասազիրքը ԹիվՓ-  
լիսում հրատարակւեց, անմիջապէս  
Հին-Ռւեպէի պատմութեան պէս փո-  
խադրուեց Պլատում ու հրատարակւեց:  
Անգլէս պատահեց, որ ես թէ բնա-  
գիրը և թէ փոխադրութիւնը համա-  
րեա միաժամանակ ստացաւ «Դասա-  
զիրք կրօնի Ուղեցոց»-ի հետ, որ  
ուսուցիչների համար վնելով՝ փո-  
խադրելու հարկ չը կար: Նորերս  
Պոլսի ընթերցալներին ծանօթացնե-  
լով այս դասագրքերն՝ «Մուրճ» ի  
Կովկասեան ընթերցողների համար  
էլ այլ տեսակէտից ցանկացաւ զրել:  
Իւր ժամանակին սոյն ամսագրի 1889  
թ. № 7 ես բաւականին մանրամասն

քննեցի հայր Սահակի չորս աշխատութիւնները և այս առաջիւ կամենում եմ նոր ուխտի ուղեցողցի մասօնն նունպէս մի երկու խօսք ամել:

Նոր-Ռւխտի որբազան պատմութեան փոխադրութիւնը Պոլսում վասչեն արած, ուր սիրում են իրանց գրաբառ. ու խրթին ոճերով մինչեանպամ մանկական գասագրքերը լինել, ինչպէս օրինակ՝ Տէր-Ղեռդեանի «Մալրմնի լեզուներ»ը բաւականին սփորթ լեզուներ» են զառել Առանց այն էլ շատ նիւթեր այց ընթերցարանի մէջ ծանր են այն հասակի մանուկներին, որոնց համար նշանակւած են. Փոխադրւած որբազան պատմութեան լիկուն թիվեն, հակիրճ և զրաւիչ է, ուրեմն պէտք է ընդհանրապէս աջազւած համարել և ուրախանալ, որ այս զառազբքերն այնպէս լաւ ընդունելութիւն են զըսոնում. Աւրեմն այս կողմերն էլ գնահատում են, միան պէտք եր ցանկալ, որ այս ուսուցիչներն սկսեին նաև ուղեցողն ուսումնառութեալ, որ մշակում է ալդ հում նիւթերը, աշակերտներին մշակւածը ուսումնականութիւն զարձնելու համար.

«Հին-Ռւխտի ուղեցուցն, ինչպէս լիշեցի, ըստ ձեւական հինգ աստիճանների իւր ժամանուկին մանրամասն քննած լինելով՝ այժմ պէտք է բաւականամ ընդհանուր լիստութիւններ անելով, որովհետև ով որ այս բանալ մասնաւորապէս հնատաքրիւում է և պարապիլ է, երարոդ է և այս ուղեցողի արժանաւորութիւններն ութերութիւնները անենել, երբ մինք ընդհանրապէս մատնացոց անենք:

«Նոր-Ռւխտի ուղեցուցը տակաւին

չէ վերջացած, ուստի մենք պէտք է սպասենք խօսել ժամանակազրական, աշխարհագրական, կուլտուրական. պատմական նիւթերի և կրօնական բարուղական խմասների մասին, որոնք, ինչպէս «Նոր-Ռւխտի» ուղեցուցիլ մէջ, զրբի վերջը հաւանակարար պիտի հրատարակւին համախմբւած. Մենք այս վերջին մասերին ցանկացանք աւելի ընդարձակութիւն և համակարգութիւն (սիստէմ), որպէս զի հայ ուսուցիչները հարուստ աղբիւր ունենան աղջ կարեսը նիւթերի մասին, որ աղջ տեղ գտնելը նրանց շատ դժւար է. Մինէլ մինք կարեսը համարեցինք ձեւական աստիճանների բացատրութիւնը կրօնագիտութեան աւանդման տեսակէացից, որ նունպէս չտնինք և անհրաժեշտ է:

Ազգմ երկու խօսք միայն նիւթի մշակման մասին. Այս ուղեցուցն աւելի լաւ է մտածւած և հայր Ասակին աշխատել է հայ մանուկների հոգեկան աշխարհն սկսելի ի նկատի առենլի Հայկական սովորութիւններն, զգացմունքներն ու մտածմանքներն աւելի են լիշատակւած հրէականներն ըմբռնելի կացուցանելու համար. Մէր պատաւակն Շարականն ու ժամագիրքը նունպէս ընտիր գոհարներ են շարած այս զիղեցիլ զրբի մէջ:

Հանազան աստիճանների շիտութիւններ թէի այս ուղեցուցի մէջ ես կը պատահին, սակայն աւելի սակա են և լուսափ այնպիսի բնաւորութիւն ունին որ մասամբ կարաղ էին և իրանց խոկական տեղումը համարել. Երկրորդ աստիճանի կամ մտակարարութեան վերաբերեալ

մանաւանդ կրօնական բարուական բացատրութիւնները երբեմն շատ ընդգարձակ ու ճապաղ են, աչքան ընդգարձակ՝ որ իսկական պատմութիւնից մի քանի անգամ աւելի, նրբեմն նիւթի ընաւորութիւնը կը պահանջէ լաւ վսորասուզել նիւթի մէջո, սակայն ոլէտք է մինոն ժամանակի խոս տալ արդէն պատմական նիւթի երկար կրկնութիւններէն:

Այս գրքովիը իւր նախորդի հետ մենք կարող ենք մեր մանկավարժական զրականութեան ընտիր ներկազացուցիչներից մի զորդը համարել: Յանկանք ուրիշն, որ նրանք աւարտւեն իրանց լրացուցիչ մասերով, որպէս զի աւելի արդիւնաւոր լինին:

2. Մանկական պարբէջ: Այս ընթերցարանը ի հարկէ, ոչ թէ մանկական պարտէզ առւած ֆրէօբէլեան հիմնարկութեան համար է գրած, այլ ուսումնարանների, որովհետեւ կարդալ զրելը մանկական պարտէլների ծրագրից դռւուս է: Այս ընթերցարանի մէջ կան մողավորական բանաստեղծութիւններ ու հեքաթներ, որոնք կարող էին մանկական պարտէլի մանուկների համար զւարձացուցիչ լինել Զմիւռնիալի մանկական պարտէլի մէջ կան իրը բացառութիւններ և առաջնարանական երկու դասարաններ, ուր կ'աւանդի այլ առարկանների հետ նաև կարդալ զրել: անա այս դասարաններին է որ կը վերաբերի այս ընթերցարանը:

Քրքովի առաջին մասը կը պարունակէ, 16 օրինակելի բառեր, որոնց զրել կարդալով մանուկը կը նախապատրաստի համական բոլոր

տառերի, վանկերի ու բառերի կարդալուն և զբելուն: Այս բառերը բաւականին աջող են ընտրած, միայն լորինալը գեռ. չէ բացատրել թէ ինչ միջոցով ու ինչպէս ոլէտք է ուսուցանել. Որովհետեւ նաև մանկական պարտէզի մէջ շարժական տառերով կը սկսեն, ուստի ոլէտք է ենթադրել որ նաև այս ընթերցարանն ալզ միջոցն ի նկատի ունի Խւրաքանչիւր ընթերցարանը և ուր բառ սկսելիս՝ պ. Պալապանեանը շատերի սկզբները դրել է նաև անցեալ տառերը: Եթէ ձևական աստիճանների գաղափարով է այս, պէտք է միայն այն տառերը գնել, որոնք նոր ընթերցանելի բառի մէջ պիտի պատահեն, միւս տառերը կը վերաբերեն երրորդ աստիճանին կամ համեմատութեանը:

Բաղաձաններից լեռով և օժանդակ ձանը չ'արտասանել տալու համար՝ նախ ձախաւորներն ապա բազաձանները արտասանել է տալիս, որով լաճախ հարկադրւում է մանուկը վանկերը աջից ձախ կարդալու: Այս մեթոդն անի իւր այն առաւելութիւնը, որ խոլս տալով և շփոթեցուցիչ ձախնից, ընթերցումը կը հեշտացնէ, սակայն երբ բազմագանկ բառ է, աշակերտը հարկադրւած է լինելու մի քանի անգամ վետ ու լաւաջ երթալով՝ զժւարտնալ: Մենք այն մեթոդին ենք հետեւմ, որ կարդալ զրել առաջ առաջ նախադասութիւնները նախ բանաւոր կերպի վերլուծելով մինչեւ ձախներն է հատնում և նախ, իրքի նշան, զրերի փոխարէն երկար գծեր, կարծ զծեր, խաչեր ու կէտեր է առնում: Երբ աշակերտի ականջը լաւ կը բացւի,

կոկու շարժական տառերի միջոցաւ վերլուծութիւնը, ուրիմն բազաձանականից վատոց և տառը արտասանեն անխուսափելի պէտք է լինի և եթէ շատ կարճ արտասանւի, այլ ևս անքան չի շփթեցնի և միւս կողմից հնարաւոր կը լինի ձախից աջ կարդալ:

Մանկական պարտէպի երկրորդ մասը ժողովրդական շուտասելուկներ, հանելուկներ, բանաստեղծութիւններ են, որպիսիները մննք կը տեսնենք Մանդինեանցի և Ազագանցի առաջին ընթերցարանների մէջ, Կան նաև տեղականներ որոնց մէջ կան բաւականին վարժալիները: Լեզուն մանկական է, թէն իբրև բացառութիւն կալ նաև մի կտոր «Միծ պահք» մի քանի տաճկերէն բառերով:

Այս ընթերցարանի երրորդ մասը պարունակում է 11 հատ հայկական հեքաթներ զլիսաւրապէս Սրուտեանձաննի ժողովածուններից քաղած: Մի երկուսը, խկապէս աւելի կատակախսօսութիւններ են, որ նոնչպէս Զմիւռնիացի հայ ժողովրդի բերանում կան: Հետաքրքրական պէտք է լինի, ի դէպս առեւ, որ այս գործնական քաղաքի մանուկները հեքաթ առած բանը համարեաթէ չը գիտեն: Այս երրորդ մասի նիւթի ընտրութիւնն ընդհանրապէս լաւ է, հեքաթները զրաւիչ, բովանդակութիւն ու լեզու ունին, սակայն երբեմն շատ երկար են:

Մինչև հիմա այս կողմերը անտես էին առել մեր ժողովրդի մանկական

կեանքի այս արտազրութիւններով մանուկներին զբաղեցնելը, նորունց միջից բարուակրթիչ և կարգադրելու նիւթ քաղելը, ինչպէս այլ երկրներ, աշատեղ ևս հաւանականարար պէտք է նախ կասկածանօք վերաբերին այս նորութեանը անարգւած «մասսալներին»: Ես ոորանից առաջ մի քննադասութիւն «Արևելք» ին ուղարկելով ի միջի ալոց տեղեկացրի, թէ ինչ դիրք է բռնել Հերբարա Ցիլերի մանկավարժութիւնը այս ինզրի վերաբերմամբ և սորան հետեւելով նաև մեր կովկասիան հայ մանկավարժները: Տեսնենք:

Յ. Բանաւոր և Գրաւոր Աւագանութեան: Պ. Պոլածեանը իւր այս զրքովկի մէջ սկզբներն խակապէս աւելի Բահաթրեանցի «Աւղեցոցի» օրինակներին է հետեւել, վետոյ քանի զնացել, աւելի ազատ կամ լաւագոյն է առել՝ հին ճանապարհն է բռնել որով այս նոր թւաբանութիւնը հին և նոր մեթոդների խառնուրդն է առաջացրել: Կան բաներ, որ Բահաթրեանցի «Աւղեցոցի» մէջ նոնչպէս հնացած են, սակայն եթէ պ. Պոլածեանը այլ մեթոդին խստիւ հետեւած լինէր, նորա գասապիրքն աւելի շատ արժէք պէտք է ունենար: Յուս կալ որ երկրորդ մասն աւելի լաւ լինի մշակւած: Ես իւր ժամանակին շատ մանրամասն քննութեան են, թարիկեցի այս ձեռնարկը մեր տեսակէտները տաճկահայերին բոլորովին պարզաբանելու նպատակաւ:

Յ. Տ. Վ.

ԱԵՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏԱԿԵՍ Եպիսկոպոս.—«ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԽԵԴԻԲՆԵՐ»:  
Մոսկվա, տպ. Բարինուղարեանցի, փոքր քառածալ, 222 երես, տառ.  
№ 12, գինն է 1 ր. 50 կոմէկ:

Արիստակէս եպիսկոպոս Ակդրակեան ալս զրբով ոչ աճքան լուծում է հաս ու չը հասի և պսակի լուծման խնդիրները գիտնական տեսակետից, որքան ընթերցողի ուշադրությունն է զարձնում այն իրար հակասող վճիռների վիրաւ, որ կատարւել ին ցալժմ հոգեսր իշխանութեան կողմից վերաբերեալ հաս ու չը հասի և պսակի լուծման խնդիրների կամ պատահած դէպքերի առիթով: Այս կրթեար գրքին վերապառնալու իրաւունքը վերապահելալ, մեծք շտապում ենք միայն գրքի առաջին ընթերցումից մեր մի քանի տպաւոթիւնները հաջորդել «Մուրճանի ընթերցողներին», ի նկատի ունենալով այն բոլորին հաօկանալի հետաքրքրութիւնը, որ կապահած է հեղինակի առաջադրած խնդիրների հետ: Հաս ու չը հասի խնդրի նկատմամբ հեղինակը, տեսութիւն տալով այլ և այլ ազգերի և ցեղերի զանազան ժամանակներում զորութիւն ունեցած օրէնսդրութիւններին, անցնում է հակական եկեղեցական օրէնսդրութեանը և առաջ բերում մի կողմից եկեղեցական ժողովների վճիռները և միւս կողմուց՝ եկեղեցական հայրերի վարդապետութիւնը և հրահանգները: Արիստակէս սրբազնը ընդունում է պարտաւորիչ միմիայն եկեղեցական ժողովների վճիռները, մինչդեռ եկեղեցական հեղինակների վարդապե-

տութիւնները, օրինակ Գոշ Միհիթարի զատասատանազիրքը, և կամ նոյն իսկ կաթողիկոսների, որպէս օրինակ Ներսէս Շնորհալու՝ հրահանգները նուհամարում է ոչ պարտաւորիչ, Բացառութիւն նա թով է տալիս անպիտի մեծ հեղինակութիւնների համար, որպիսիք են «Թագէսս և Բարդուզի մէսս ստաքեալները, Սուրբ Գրիգոր Լոռաւորիչը և աւլն» (Մենք կը գերազանչինք և աւլն խօսքի տեղ (Երես 106) որոշ անուններ, եթէ կան): Այդ ամենից չեսու հեղինակը առաջ է բերում օրինակներ առնեական գործերից, «որպէս զի ցոյց տւած լինենք, թէ մեզ մօտիկ անցեալում և ներկայումս ամուսնական հաս ու չը հասի խնդիրներն որպիսի վճիռներ են առել և առնում»: Այդ օրինակներից ըզլսող եզրակացութիւնը այն է, որ այդ վճիռները իրար հաւկասում են և որ գլխաւորն է ազգ հակասութիւնների հիմքը ամեազիտութիւնը չէ», (Երես 130), այլ մամնապին երկրագելը: Հաս րելիք կերպով այդ արաւակացում է հեղինակը ալս առացւածով թէ՝ Յօթը Փլորին, սկզբակ չօրին, Մեսնի կինն, առնի քննին, որ և կազմում է Զ. զլիսի ախուր բնաբանը:

Հաս ու չը հասի խնդրի մատին եթէ հեղինակը նոր վարդապետութիւն չի քարազում, բայց և անպէս

Նորա կողմից երևում է հակումն՝ չը-  
հասութեան աստիճանները շատ հե-  
ռուն չը տանել, այլ բաւականա-  
նալ միան հարորդ աստիճանով,  
Գրքի երկրորդ մասը խորագրած  
է Լուծումն ամուսնութեան։ Դա՝  
մարդու և կնոջ իրարից ըստանելու  
և կրկին ամուսնանալու խնդիրն է։  
Այսիդ սրբազն հեղինակը հաստա-  
տում է, որ «Հայաստանեաց Եկե-  
ղեցին ամուսնութիւնը լուծանելի է  
համարում հայսնի պատճառների հա-  
մարո, որով հաստատում է մեր ար-  
դէն մօտ մի տարի առաջ լաւաճած  
հայեացքը թէ Հայաստանեաց Եկե-  
ղեցին ապահարզանը սկզբունքով  
ընդունում է («Մուրճ» 1890 թ.,  
№ 2, Ամուսն քրոնիկ Խուսինիի)։  
Այդ հայեացքը, մեծ կարուրութիւն  
է ստանում չնորհիւ Գէորգ Պ. Կո-  
թողիկոսի 1875 թ. լուսւարի հին  
Սինոդին տած կոնդակի, որի մէջ  
«պատին հրատարակւում է անլու-  
ծանելի» իրը թէ «Բառ կանո-  
նաց Հայաստանեաց Եկեղեցւու» Ակա-  
մէկ կետը հաստատելուց փառվ, հե-  
ղինակը ստենական գործներից օրի-  
նակներ է բերում ցայց տալու հա-  
մար ատենական վճիռների հակասու-  
թիւնները և վճիռների անհիմն պատ-  
ճառաբանութիւնները։

Գրքի ագդ երկրորդ մասը աւելի  
կարճ է քան առաջնը, խնդրի աւելի  
մեծ պարզութեան պատճառով։ Այդ  
իսկ երկրորդ մասում սրբազն հե-  
ղինակը անսքող կերպով լաւոնում  
է իրան պաշտպան ոչ միան հայկա-  
կան իրաւունքի՝ ամուսնութեան լու-  
ծանելի լինելուն, այլ և այն հայեացքի  
որ ամուսնութիւնը լուծելու մի խըն-

դիրք կարող է վճռել ոչ երբէք Ար-  
նողից, այլ միմիան Հայոց Կաթո-  
ղիկոսից։

Արխատակէս սրբազնը վերջադ-  
նում է իւր աշխատութիւնը առա-  
ջարկելով, որ մի աղքամին-եկեղեցա-  
կան ժողով գումարուի իւր շոշափած  
խնդիրների մասին պարզ, որու և գո-  
հացուցիչ օրէնսդրութիւն տալու հա-  
մար որ պատկառելի և ակնածելի  
լինէր ամենուրեք բնակած հայ ժո-  
ղովրդի համար։ Բաց մենք պէտք է  
խաստվանենք, որ սրբազն հեղին-  
ակը իւր աց զրքով վիճելի խնդիր-  
ները պարզորոց չի դնում։ Հաս ու  
ըս հասի խնդրի մասին նա չի լավոնում  
որ և է նոր հայեացք, կամ չի անում  
մի նոր առաջարկութիւն, այլ միան  
պաշտպան է հանդիսանում գուտ օրի-  
նականութեան որի աղքիւրը նա  
եկեղեցական ժողովների մէջն է ահա-  
նում։ Բաց թէ նոր եկեղեցական  
ժողովը աց խնդրի նկատմամբ ինչ  
նոր առաջարկի առջն պիտի կանգ-  
նած լինի—այդ գոնէ չի երեսում  
գրքից։ Ամուսնութեան լուծման մա-  
սին նմանապէս սրբազն հեղինակի  
գիրքը չի պարունակում նոր նիւթ  
մի ժողովի համար, որովհեան ինքը  
պաշտպանում է միան մի հայեացք,  
որը Հայաստանեաց Եկեղեցու դարա-  
ւոր օրէնքն է։ Գէորգ Պ. ի հակասակ  
կոնդակը աց մասին ի հարկէ չի  
կարող պարտաւորիչ լինել Հայաս-  
տանեաց եկեղեցու համար։ Մեղ թւում  
է թէ այս գրքում Արխատակէս սրբա-  
զնը մի խսկապէս շատ լուրջ խնդիր  
է շոշափում, այդ՝ եկեղեցական վար-  
չական մարմնի առողջացնելու խըն-  
դիրն է, որին ձևանամուխ լինելուն

մեծապէս կը նպաստէ նոյն խակ սար կերպով դիւրութեամբ չի կար-  
հալոց մի հոգիուկոպոսի աւտ հրատա- | զայւում, պարունակելով իւր մէջ  
րակութիւնը:

Քայց, որովէս ասացինք, մեզ բառ քաղւածքներ ոչ միշտ դիւրու-  
հարկաւոր կը լինի դեռ ևս վերա- | բոնելի ոճով զրւած:  
դառնալ այս հետաքրքրական զրքին,  
որ իւր բոլոր մասերում համահաւառ

Ա. Ա.

## ՆՈՐ ԱՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ

1) ԱԼԵՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԻՒՄԱՆՆԵՐ» (կեանքի զձեր): Արտասպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլ., Տպ. Ռուսինեանցի, 1890 թ., գինն է 3 կոպ. —

2) ՊԱՐԱԳԵԿԶԵԱՆՑ, ՑԱՐՈՒԹԵՎԻՆ. — «ՍԵԽ-ԼԵԹՆՑԻՔ» (մի տահմա-  
զրական պատկեր): արտասպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլ., Տպ. Ռուսի-  
նեանցի, 1890 թ. գինն է 10 կոպ. —

3) ՄԱԼԻԽԱՆՅԱՆ, Ստ. — «ԳՐԱԲԱՌՈՒ ՀՈԼՈՎՈՒՄԸ», ԽՈՆԱՐՀՈՒՄԸ և  
ՆԱԽԻՒԹԻՐՆԵՐԸ: Հրատարակութիւն Կինոլունական զրավաճառանոցի: Թիֆլ.  
Տպ. Մարտիրոսեանցի, 1891 թ., գինն է 25 կոպ. —

4) ՍԵՒՐԱԿԵԱՆ, ԱՐԻՍՏԱԿԵՍ Կպիսկոպոս. — ԱՄՈՒԽՆԱԿԱՆ ԽԵԳԻՔ.  
ՆԵՐ, Տուկա, տպ. Մ. Բարիսովարեանի, 1891 թ., գինն է 1 ր.:

5) ՆԱՄՈԼՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՄԻՆՅԱՆ ԵԶՔ» (զձեր կեանքից):  
Արտասպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, 1891 թ., տպ. Ռուսինեանցի,  
գինն է 3 կոպէկ:

6) ՓԱՓԱՂԵԱՆ, Վ. — «ԽՈՒԹ-ԱԽՈՒԹ» (հայ բոշաների կեանքից): Ար-  
տասպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլիս, տպ. Ռուսինեանցի, գինն է 15 կոպ.:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Տարին վերջացաւ, նա մոտաւ լաւիտենականութեան մէջ, անդառնալիր բայց մարդկացին լիշտակագրութեան մէջ նա մնալու է այն ինչ նա իսկապէս էր. կատարւած դորձերը չեն ջնջւելու, կատարւած դորձերը, որ անքաքտելի կերպով շղթալակապւած են նախորդ տարւաց հետ, մնալու են կապւած նաև չաջորդ տարւաց, այս նոր 1891 թւականի հետ. Ոչ մի տարի իւր համար առանձնակի չի կանգնած անցեալի մէջ, որպէս և ոչ մի ամիս իւր համար առանձին չի կանգնած, այլ կաև և մնում է որպէս անսահման ժամանակի մի մասը. Փամանակի դինը սակացն հաւասար չէ, և որպէս բոլոր ամիսները հաւասար դին չունին անցեալում, նոյնպէս և բոլոր անցած տարիները հաւասար դին չունին պատութեան մէջ: Խնդիրը նորանումն է թէ ինչ ներկալացրեց մեզ համար անցած 1890 թւականը:

Եւ ես ահա գտնում եմ, որ 1890 թւականը նախ որ չի դատւելու ապագայում մեր հայկական մամուլի տւածովը, և երկրորդ որ այց թւականը կարենոր աեղ է բռնելու մեր պատութեան մէջ: Ես, նախ քան անցնեմ իմ ամսական հաշվետութեանս, այս նոր-Ժարւակ առիթով ուղարկ եմ այս մի բաղձանքս արտալայտեմ, որ ցանկանում եմ հաստատամտութիւն և եռանդ ժողովրդական գործերին կպաճներին:

Դէ անցնենք ակժմ մեր հնացած տարւակ գեկտեմբեր ամսին: Ազգամտումն է զլխաւորապէս, որ մարդիկ աշխատում են իրանց կամաւոր պարագերը տալ թէ պարբերական մասուլին, թէ այն հիմնարկութիւններին, ուր նորա անդամ են և թէ բարեգործութեան: Դրեթէ միանգամփոյ մէկից պահանջում է անդամակցական վճարը մէկ, միւս և զուցէ երրորդ ու չորրորդ ընկերութեան համար, բաժանորդագրական վճարը ամսապրի համար, նոյնը լրագրի համար, նոյնը մի շաբաթաթերթի համար, անդամակցական վճարը կըուրի համար և էլ ինչ դիտեմ՝ ինչ ինչ հիմնարկութիւններին:

թիւների համար։ Եւ երեսկապեցէք, որ այս բոլորի վերակ միանում են նոր տարւակ համար ավ և ավ կարևոր ծախքերը, վարձարութիւնները և ավն և... գրեթէ պարտաւորիչ վճարները ավ և ավ բարենպատակ զործերի օգտին տրւող կոնցերտների և ներկալացումների համար։ Եւ երեսկապեցէք քաղաքակրթւած բայց «փոքր մարդու» դրութիւնը այս բոլոր պահանջների դիմաց։ Երեսկապեցէք, առում եմ, զրութիւնը մի մարդու, որը չուրջ 100 բուբլի եկամուռ ունի ամսական։ Այդ 100 բուբլուց, որ հազիւ բաւականանում են նորա սովորական առօրեակ ծախքերին, նա մի անգամից, մի ամսում պէտք է բաժին հանէ կլուբին աւելի քան 15 բուբլի, երկու որ և է ընկերութիւններին աւելի քան 10 բուբլի, բարեկործական նպատակներով տրւող կոնցերտներին ու ներկալացումներին հէնց զիցուք մինչ 10 բուբլի, իւր լրագրին մինչ 10 բուբլի, իւր ամսագրին 10 բուբլի, ու գումարեցէք միանի ազգանոր և կը տեսնէք, որ մեր պարոնի մօտ ամուակ համար մնաց 45 բուբլի, որից աչքով բաժիններ հանէք Նոր Տարւակ արտակարգ ծախքերի համար, մանաւանդ եթէ նա ընտանիքի և զուցէ երեխանների աէք է։

Բնական է, որ քաղաքակրթական այդ պահանջներից և պարտական նութիւններից չետ չը կենալու համար, ազգպիսի մի պարոնին հարկաւոր է սէր և համոզմունք, նրան հարկաւոր է գիտակցութիւն, բարուական ոչ զանարերութիւն աներաւ։ Պարզ է որ ան բոլորից ինչ ես վերը վիշտակեցի, ելին պարբերական մամուլն է որ ամենից շատ տուժում է «փոքր մարդու» Փինանսական նեղութիւններից։ Բաւական է որ մի ազգպիսի մարդու մօտ զիտակցութիւը մի փոքր թողլ լինի և նա արդէն համարեա սառնատարութեամբ զոհում է պարբերական մամուլի շահերը։

Իսկ մինչև որ միջակ կարողութեան և մինչև անգամ միջակից աւելի փոքր կարողութեան կամ եկամուտավ մարզիկ չը մասնակցեն հակական մամուլի բաժանորդապրութեանը՝ ոչ մամուլը կարող է իրան ապահովւած համարել և ոչ էլ կարող է նոյն ազդ մամուլը իւր նպատակներին լիակատար կերպով հասնել։ Մամուլը պէտք է խօսէ բազմութեան, ահազին բազմութեան հետ, և այդ պատճառով պէտք է ոչ մի զատակարգ չը կարողանակ մամուլի գոլութիւնը իրանից կախած համարել։ Իսկ զորա համար միանգաման անհարժեշտ է որ միջակ և սուորին խաւերը իրանց ուսերի վերակ պահեն ան ծանրութիւնները, որ միաժամանակ նոյցա մտաւոր և բարուական ոժերը բարձրացնողներն են և ուղղութիւն ցուց տւողները։

---

Իմ ընթերցողները արդէն զիտակ, թէ ես ինչ նշանակութիւն եմ տալիս մեր թատերառէրների ներկալացումներին։ Դեռ 1889 թւականին առաջն են հարկ համարեցի մի ամիս առաջ կրկնել և աչքմ, զեկտեմբերի ընթացքում տրւած ներկալացումները ինձ առիթ են տալիս վերադառնաւ այդ

խնդրին։ Հանգամանքը սա է, որ հարկական ներկապացումների համար մեզանում, կովկասիան հակերից, չը կան զերասանուհիներ։ Գա մի իրողութիւն է, որ ամեն մարդ խոստվանում է արդեն շատ տարիներից ի մեր բայց նունպէս իրողութիւն է, որ թիֆլիսի թատերասէրների մէջ կան թւով արդէն բաւականին շատ չնորբառ խաղացող կանաչք, որոնք ոչ մի գէպքում չեն կարող մի մշտական խումբ կալմիլ արհեստով գերասանների հետ՝ ամրին տաճներիու ամիս ներկապացումներ տալու համար։ Աթէ վերջին ամրիներում տաճ հաջոց ներկապացումների հիման վերակ դատելու լինինք—և ազդու էլ պէտք է—, կը տեսնենք որ ոչ թէ թատերասէրներն են լրացնում գերասանական խմբի ստականորդը, ալլ, ընդհակառակը, գերասաններն են որ լրացնում են թատերասէր խմբերի պակասորդը։ Ազ խօսքերով հայ հասարակութիւնը սիրով լաճախում է թատերասէրների ներկապացումները, այն ներկապացումները, որ գերակշատ դերը կատարում են այժմեալ թատերասէրները և ոչ այժմեալ գերասանները կամ գերասանուհիները։

Այս իրողութիւնները աչքիս առաջ ունինալով՝ ևս լավանեցի իմ կարծիքը որ թատերասէրները մեր թատրոնական գործի մէջ կատարում են մի պատմական զեր և որ նոցա ներկապացումների վերակ պէտք է վերաբերել բոլորովին ալլ կերպ, քան առ սավառաթիւն է, մեզանում։ Ճ պէտք է, ասում եմ ևս, նակել ալլ ներկապացումների վերակ որպէս պատահական և անցողական երեսովի վերակ, ալլ պէտք է նրան տալ նորա խոկական նշանակութիւնը և ուրիմի ուշք գարձնել նորա կազմակերպութեան վերակ։

Ահա նուն միտքն է, որ այս վերջին ամսում կարծես սկսեց պարզ մեր հասարակութեանը և որ լրագիրները աշխատեցին լավանել թէն ոչ լիակատար կերպով։ Ամենքը ցանկութիւն լայտնեցին, որ թատերասէրները խմբեն աւելի լաճախ ներկապացումներ տալու նպատակով, հայկա կան թատրոնին վերակենդանութիւն տալու համար։

Կազմակերպութեան գործը կարելի է սկսել ալսպէս, բոլոր այն անձերը, որոնք թատերասէր խմբերի գլխաւոր պմերն են կազմում, պէտք է միանան մի կոմիտետ կալմիլու համար։ Ազդ կոմիտետի ձեռքում միացած կը լինի մեր թատրոնական գործը, Կոմիտետը, որը կ'ունենալ իւր նախագահը կամ նախագահուհին, իւր հաշվապահ անդամը և զանձապահ անդամը, կը սկսի իւր գործը ցուցակագրելով մեր բոլոր տպւած թէ անտիպ պիեսները, կ'աշխատէ ձեռք բերել նոցա, կը վճռէ լրացնել եղածը նոր պիեսներով՝ եւրապական թատրոնների բեպերառարից ընտրութիւններ առելով և թարգմանել կամ վոխաղըել տալով նոցա։ Հարկաւոր եղած ծախքերը, ծածկելու համար նա կը սարքէ մի երկու ներկապացումներ։ Կոմիտետը, բոլոր հարկաւոր համարւած գէպքերում, կը դիմէ կոմիտետից դուրս անձերին՝ այս կամ այն տեղեկութիւնները ձեռք բերելու համար։

Կոմիտեալ կը ուսրէ ներկաւացումներ այն նպաստակներով, որոնց օգտին առհասարակլ սարբւում են թատերասէրների ներկաւացումները։ Ներկաւացման համար կոմիտեալ կը դժմէ նաև մեր գերասաններից մէկին կամ միւսին՝ համապատասխան գերը ստանձնելու համար, բայց այս պացմանով, որ ներկաւացման մասնակցող դեր առան երը անպատճառ վարձատրւեն, մինչդեռ թատերասէրները կը խաղան առանց վարձատրութեան։ Կոմիտեալ զլիաւոր նորուիրից մէկը կը լինի՝ նոր ոչ ժեր առաջ բերել։ Ե աղ նամանաւանդ հեշտութեամբ կը լաջողէ նրան, որ ներկաւ թատերասէրների հետ բնմ դուրս գալու դէմ այլ և այլ ընտանիքներ չեն ունենալ գուցէ բոլորովին հիմնաւոր նախապաշտրմունքը, որով լարգւած կանաց և օրիորդներ, նոցա ծնողներն եւ ամսամինները առհասարակ վերսրիւում են դէպի թատրոնական դործը, գերասաններին համարելով անպատկառ մարզիկ։

Այս կերպ, որպէս տեսնում էք, ոչ միայն թատրոնական գործը նորան սիրողների և հասկացողների ձեռքն ընկած կը լինի, այլ և նոյն խոկ գերասանները կ'ըստանան վարձատրութիւն և որ զլիաւորն է՝ հասարակութիւնը առաջ քշած կը լինի իւր մէջ թագնւած բոլոր չնորհքով, կամ բնմական ընդունակութիւն, գուցէ առաջնդ ունեցողներին, մի բան, որ եւ առաջմ չեմ կարող սպասել մի ուրիշ կաղմակերպութիւնից։

Ինական է որ այս նախապատով այն, ինչ կոչւում է «դրամատիկական ակումբ» առելի ևս կը խորասուզվի անդործութեան և անկանութեան անդունդը, քանի որ առաջարկածս թատերա ասիրական կոմիտետը իւր ձեռքն առած կը լինի բոլորը, ինչ վերաբերում է հայկական բեմին։

---

Այն առաջին ներկաւացմանը, որի մասին անցեալ տարւաչ վերջին քրոնիկում վիշտատակութիւն արեցի, չաջորդեցին գեկտեմբեր ամսին թատերասէրների երկու ուրիշ ներկաւացումներ, «Ծուղան», գրամա հինգ գործողութեամբ հեղ. Մուլացանի և «Փալլուն Բղէզու կեղծ կոմիտիան, փոխ սուած Սարգուից և թարգմանած ուսերէնից։ Այսպիսով այս ձմեռաւու սեղնում երեք ներկաւացումներ տրւեցին երեք ջոկ ջոկ ու իրար հետ կատ չունեցող խմբերից։ Եւ բոլոր ներկաւացումներն էլ թէ մուտքի և թէ խողի կողմից չաջորդեցին, եթէ միայն զլիաւոր գործող անձնաւորութիւնները ի նկատի առնելու լինինք. Իրեն նոր լավանւող բնմական ովտ, այս անգամներին մանաւանդ վիշտատակելու է տիկին Շահ. Մելիքեան, որը իւր խելօք և զգացւած խաղով արդարացի կերպով գրաւեց հասարակութեան ուշագրութիւնը, և անկատկած է, որ թատերասիրական ապագայ միացեալ խումբը նորանում կը գտնի մի կոչւած անդամ և յաւ գերակատար, առաւելադիւ զբանական պիեսներում։ Հասարակութեան մի մեծ մասի

համար նոր էր նաև պր. Տէր-Պետրոսիան (Օբգուբաթեան), որը հայկական բեմը թողել էր Աղամենանի ժամանակներից ի վեր և ակժմ նորից ասպարէղ է զուրս զալիս՝ ոսաց խմբերում ասրիներ շարունակ խաղալուց վեառն Ներկաւ լունարին նա երեալու է Ռւրիէլ-Ակոստապի զերում և հասարակութեանը առիթ տւած կը լինի նորա դերասանական ովքի մասին աւելի ճիշտ զաղափար կազմելու:

Բայց այն երեք պիեսներից, որոնք ցարժմ ներկաւացւեցին ներկաւ սեղոնում, «Ոտուզանը» միակն է, որ իւր բովանդակութիւնով զրական հետաքրքրութիւն է ներկաւացնում: Աս գնացի «Ոտուզանի» ներկաւացմանը մասամբ արդէն նախասպաշարւած ոչ ի մեաս, այլ լօգուա նորան: Զգիանմ ազ ևս «Արենելեան Մատուլի» որ տարւաւ համարներից մէկում, բայց 1880 թւականի մօտերքին, արտասահման եղածս ժամանակ կարգացած էր Թիֆլիսի նախկին թատրոնական կոմիտեալի անդամներից մէկի՝ պր. Դրիգ. Փրլունեանի մի գրւածքը «Ոտուզանի» առաջին ներկաւացման մասին: Դրւածքից ինձ մօտ միաէն ընդհանուր տպաւորութիւնն էր մեացլւ: Ես այդ տպաւորութիւնը սգեսորիչ էր: Իբր մի նոր և բացառիկ երեսով էր ներկաւացւած մուր թատերական գրականութեան մէջ այդ «Ոտուզանը»: Հետեւալ տարիներում լուածներս միմիան աւելի զրիցին իմ հնտաքրքրութիւնը «Ոտուզանի» համար և ևս միան զարմանում էր թէ ինչու չին կրկնում և մինչև անգամ ամեն տարի չեն տալիս «Ոտուզանի» ներկաւացում:

Բայց տեսաւ և հիասթափւեցաւ: Երեսականեցեք: Մեղնից մօտ 650 տարի առաջ Արցախի (Ղարաբաղ) իշխանութեան վերաւ չարձակւում ևն բարրարս թուրքերը, Զարմաղանի զօրքերը, առաջնորդութեամբ Զարմաղանի եղբօր և Զարմաղանի երիտասարդ որդու՝ Բողավի: Այդ չարձակւում կատարում է անսպասելի կերպով և մի անպիսի ժամանակ, երբ Արցախի իշխանը իւր աղջիկ Ոտուզանին ուզում է կնութեան տալ իւր քաջ զօրապիս Աւրեներսէչին, որի լաղթութիւնները տարիներով ապահովել էին Արցախի սահմանները թշնամիներից: Կաելով այդ րօմը, Արցախի իշխանը պատրսուտում է կռւել: Բայց նախ աշխատում է խաղաղ միջոցներով հեռ այնել թշնամուն և պատզամաւրութիւն է ուզարիւմ Թաթարների զօրապետի մօտ՝ ողառւելով հորան ազ և ազ պարզեներով: Բայց այդ ժամանակամիջոցում արդէն մասնիչի մասը խառնում է զործի մէջ: Անազա հապալն իշխանը, վիրաւորւած լինելով, որ Արցախի իշխանը իւր աղջիկ Ոտուզանին կնութեան է տալիս Աւրեներսէչին և ոչ թէ իւր աղջիկ Ոտուզանին կնութեան է տալիս Աւրեներսէչին և ոչ թէ իւրան, անցնում է Թաթարների բանակը և ամեն կերպ աշխատում Թաթարների ախտրժակը զրպուել՝ Արցախի և նորա իշխանի հարտութիւնների նկատմամբ: Անազաւի աղդպիսի հաւատարիմ ծառակութիւնների համար

Թաթարների զօրսովետը խոստանում է նորան նշանակել իշխան Արցախի։ Նոյն այդ զաւածանը Բողակի ուշագրութիւնն է զարձնում և Ռուզանի, իբր մի հաղւազիւտ զեղեցկութեան վերաբ։ Բուզան իրօք տաքանում է Ռուզանին կնութեան առնելու զաղափարով։ Դաւաճանը սովորեցնում է նաև ամենահեշտ ճանապարհը՝ Արցախի իշխանին հնազանդեցնելու համար՝ թաթարները կը բռնն հաղար հոգի Արցախի իշխանի հպատակներից՝ ծեր, կիծ, երեխար, չվթաղակապւած նոցա կը կանգնեցնեն ամբոցի առջե, ամեն մէկի մօտ կը կանգնեցնեն մի-մի դահիճ և կը չարտնեն Արցախի իշխանին, որ հէնց որ մերժում կ'ըստանան՝ այդ բոլոր գերիներին ակնդ ու տեղը կը կոստրեն։ Պատգամաւորութիւնը վերադառնում է և լաւանում Բողակի կամքը՝ Ռուզանին առնել և այդ պահմանով թողնել Արցախի իշխանի ձեռքում իւր իշխանութիւնը։ Իշխանը և սորա փեսացու զօրապետը, վիրաւորւած ազդպիսի առաջարկութիւնից, վճռում են պատերազմիւ Ռուզանը, սակաէն, որ ծածուկ լսում է եղիւ այդ բոլոր խօսակցութիւնները, զանկարծ ներս է մտնում և լաւտնում իւր հաստատ կամքը՝ իւր անձը մատնել թաթար Բողակին և այսպիսով ազատել հարենիքը։ Ցորդոր է կարդում, որ զէնքերը վայր դնեն, թալայնում թէ հօր և թէ Արցախի զօրապետի՝ իւր նշանածի սիրաը, ծաղրում անգամ նոցա, որ մտածել ամգառ կարստ են իրանց պարտականութիւնը կառարել—կռւի զուրս զարով իրանցից աւելի զօրիզների զէմ։ Եւ, իբր թէ իւր հօր ու իւր նշանածի կամքի հակառակ, Ռուզանին լաջողում է վախչել տանից, զալիս ու իրան լանձնում է Բողակին, որով պատառում է այն հաղար գերիներին, կատարել է տալիս իւր ցանկութիւնը՝ զաւաճան Ահազակին զըւ խատել։

«Ո՞հա պատղէս պէտք է ազատել հապենիքը»—հաւատացնում է մեզ հեղինակը և գորանով վերջայնում Ռուզանի զերը և ամբողջ պիեսը։ Կմ ընթերցողները հասկանում են արդէն թէ այդ ինչ տեսակ հերոսութիւն է ուզում ներշապացնել մեղ ողբ։ Մուրացանը իւր «Ռուզանով» ձմբարիտ, ես գանում եմ որ դժւար է աւելի վիրաւորական կերպով խօսել մի ազգի զղացմունքին քան այդ անում է պր։ Մուրացանը։ Աղատել հավենիք՝ վար զնելով զէնք ու հրացանը և թշնամու անասնական կիրքը գահացնելով—դա մի չառ տարօրինակ միջոց է և լամենան զէպս՝ ոչ պատուաբեր միջոց։ Որ Ռուզանը իւր անձնւիրութեամբ պատեց մահւան դատապարտւած հաղար գերիներին—այդ սպարզ է։ բայց թէ նա զորանով իւր հալզենիքը աղատեց, մանաւանդ երե նա, Ռուզանը, իւր խոստմոնքի համեմատ, պէտք է իրան սպանէր երկրի սահմանի վերապ—ահա թէ ինչը հստկանալի չէ, և որ բոլորսին արդէն անհամկանալին է, այդ հեղինակի՝ Ռուզանի բերանում դրած խօսքերին են՝ թէ—«ահա ինչպէս պէտք է հալզենիքը աղատելու ինչ հերոսութիւն, ինչ բարովախօսութիւն։ Պիեսի այդ անձոռնի բարտականութիւնը արդէն արդէլում է

ինձ մտնել նորա մանրամասնութիւնների մէջ և քննադատութիւնո շարունակել։ Ամօթ է, «Խուզանը» պէտք է հայկական բեպերառութից հանել դէն զցել և մենք միայն զարմանում ենք թէ այդ ինչպէս «Եղբ-Դար» և «Մշակ» և «Սրճագանք» և «Աղբիւր» և «Տարազն» էլ հնարք, պիհով բնիմականութիւնից շացած՝ այդքան կարող էին կուրանալ և պիհով հիմնական միտքը, նորա բարուականը աչքաթող անել։

Նորից մեզ մօտ հիւր եկաւ պ. Կարա-Մաւրզուն խր բազուեան երգեցիկ խմբով, «Մուրճուի բնթերցողները» նոր չը պիտի սպասեն այս ամսագրից զնահասութիւն կարա-Մաւրզուն մի զործիչի «Մուրճուր» այդ արել է իւր զուութեան առաջին իսկ տարում, նւիրելով նրան մի կենսազրական չօղւած (շտո «Մուրճ» 1889, № 5 Վարա-Մաւրզուն և քառաձայն երգեցութիւնը մեր մէջ, չօղւած Զլիցեանի)։ Աւելի քան տարի ու կէս առաջ Կարա-Մուրզան եկաւ Թիֆլիս իւր մեծ խմբով, այս անդամ, հարկաւ միջոցների սպութեան պատճառով, նա մեզ մօտ էր խր մեծ խմբի մի մասով մէտան, բազկացած մօտ 30 հոգուց, խմբի հնու էր այս անդամ պ. Ծալվակը, որը իւր ձախի տիգը ցոյց տեսց Կարա-Մուրզալի ոչ այնքան զեկանմբերի 30-ին, որքան բանւարի 1 ին տւած կանցերառում։ Աւմեղ է արդ ձախնը, և ուրախալի է խմանալ որ այդ զեռ ևս զպրոց չ'անցած ձախնի մշակումը ապահովուած է չնորհիւ պ. Կարա-Մուրզալի ջանքերին, որի միջնորդութեամբ երզչի եղբայրը և զլխաւորապէս բայցուարնակ պ. Արտէն Կրասինիկիւանը ապահովացրել են պ. Ծալվակին Ոիլսն զնալու և զպրոց անցնելու համար։ Ալմիմ նորա ձախնը զեռ մաքուր չէ, որպէս մաքուր է պր. Շահլամեանի տենուրը և պր. Ամիրջանեանցի բարիչառնը։ Պր. Շոյսակի ձախնը ալժմ մի տեսակ տենուրային բարիան է, որ ազատ վերցնում է Տօլ նոտան, բայց որը խոսանում է զառնալ տենուր ու Տօրցա։ Նորա ձախնի մէջ անհնադիահանուիլն՝ զանգն է (մետաղնակ հնչիւնը), որի համար նա բարձր կը զնահատուի նոյն իսկ խաւալապում։

Պր. Կարա-Մուրզան նորանոյլ մինչ ալմիմ երեք ձախն պարզեած կը լինի հաստրակութեան՝ հանդամեան, Վարզիկեան և Ծովակ, չը խոսած այն աւելի ևս մեծ զործի մասին, որ է քառաձայն երգեցութեան ձաււալումը հայ ազգի մէջ։ Անշուշտ ալդ քանքարաւոր երաժշտական ուսուցչի սոսպարէզը աւելի կ'ընդլաւնւի, երբ նա Բաղրամից աեզափախտած կը լինի Թիֆլիս, որ նա ձախների աւելի մեծ նիւթ կը զտնի, հնարք կը դտնի իւր «Շուշան» օպերան բնիմի վերատ զնելը և չոչողացնել, հայոց զըսդոցներում ուսուցիչ լինել և եկեղեցիներում երգեցիկ խմբերը կառավարել

# ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ՏԵՂՄԱՆ ՅՈՎՀԵՆՆԻՍԵՍՆԻ

III

Նոր սկզբող 1891 թւականին կը լրանայ Առուսաստանում նոր կայսրութեան առաջին տասնամեակը։ Տասը տարին աղղերի կեանքում շատ մեծ և միեւնոցն ժամանակը շատ փոքր շրջան է։ Փոքր է նա ընդհանուր պատմութեան բարձրութիւնից նայողի համար, մեծ է նա մասնաւոր անհատների, կենդանի մարդկանց տեսակէտից։

Աչքի առաջ ունենալով թէ որքան մեծ զեր է խաղում ոռուսների կեանքում օրէնսդրութիւնը, հարկաւոր եմ համարում այսուդ կարճաւոտ կերպով ցիշատակել վերջին տասնամեակի օրէնսդրութիւնները, որոնց մէջ մի առս շատ հեղինակաւոր իրաւարան<sup>1)</sup> երկու հոսանք է նկատում, առաջինը՝ նախկին կայսրութեան բեֆորմների սահմանափակումն ու փոփոխութիւնը, երկրորդը՝ պետութեան միջամտութիւնը գանագան դասակարգերի տնտեսական կեանքին։ Տիրասպուղ հոսանքը առաջինն է։

Աշխատաւոր դասակարգի օգտին հետեւալ օրէնքներն են հրատարակել 1881 թւի յունապի 1-ից բոլորովին գալարեցին, վերջացան գիւղացիների պարտադիր յարաբերութիւնները (օնձատելինա ունութեան) գէպի կալւածառերերը, նոյն օրէնքը թեթեւացրեց այն վճարները, որ զիւղացիները տալիս էին իրանց նախկին կարածա-

<sup>1)</sup> Хроника русского законодательства. М. К.—Юридический Вестник. 1889 г. Октябрь. Ազդ լուսածիցն եմ քաղաքամ ես շատ ուղեկութիւններ ալս նամակիս համար։

տէրերին իբրև փրկանք իրանց ստացած հողերի համար (взысканые платежи), 1882 մայիսի 18-ի օրէնքը ոչնչացրեց զլիսահարկը (подушная подать), միւնոյն ժամանակը հիմնեց զիւղական բանկը, — այդ օրէնքները բոլորը նախագծւած էին Լորիա-Մելիքովի մինհարութեան ժամանակի: 1882 յունիսի 1-ի օրէնքը վերաբերում է զործարաններում ու մանուֆակտուրաներում բանող երեխաններին: 1886 մարտի 10-ի օրէնքը զործարանական օրէնսդրութիւնը մի քիչ ընդարձակեց, իսկ յունիսի 3-ին հրատարակեցին զործարանական ու արդիւնագործական հիմնարկութիւնների բանողների վարձելուն վերաբերեալ կանոնները: Նոյն թւի յունիսի 9-ի օրէնքը վերաբերում է զիւղական մշտական չինշեների (Եվկանական շենքառութեան կազմակերպութեանը) և տարիի վների օրէնքը (1889 թ.) ձեռնուու են բոլոր դասակարգերի շահերին: Գիւղական աշխատանքների համար վարձելուն վերաբերող օրէնքը (1886 թ. յունիս 12) և ազնւականների բանկին վերաբերեալ շատ կարգագրութիւններ աչքի առաջ ունին կալւածատէրերի ու ազնւականների շահերը:

Տիրապետող հոսանքին վերաբերեալ օրէնդրութիւնը: 1881 թ. օգոստոս 14-ին հրատարակեց առերութեան կարգը և հասարակական խաղաղութիւնը պահպանելու միջոցներին վերաբերեալ կանոնագրութիւնը», որով վարչական իշխանութիւնը, ադմինիստրացիան վերջնականապէս իրաւունք ստացաւ ինքնուրովն կերպով (զատաստանական իշխանութիւնից անկախ) բանտարկելու և աքսորելու տէրութեան խաղաղութեան համար վտանգաւոր ճանաչւած մարդկանց: 1882 օգոստոս 27-ի օրէնքը վարչական բարձր իշխանութեանը մեծ լիազօրութիւն տւեց ցենզուրայից ազատ պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ: 1884 թ. օգոստոս 15-ի համալսարանական կանոնագրութիւնը փոխարինեց 1865 թւի կանոնագրութիւնը: 1887 թ. վետրւար 12-ի օրէնքը սահմանափակեց դատավարութեան հրապարակական ինաւորութիւնը (гласность суда): 1889 թւի յուլիսի 3-ի օրէնքը սահմանափակեց երգեեալ դատաւորների իրաւասութեանը ենթակայ գործերի շրջանը՝

Հանելով նորա իրաւասութիւնից մի շարք բրէական գործեր Այդ գործերի մեծ մասը այժմ դատում են պետական դատաւորները զանազան դասակարգերի ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Այժմ անցնենք նոր կայսրութեան ամենանշանաւոր օրէնքութիւններին՝ 1889 յուլիսի 12-ի օրէնքներին։

Յուլիսի 12-ի օրէնքը վերաբերում է գեմակից նահանգների դատաստանական մասին և տեղային վարչութեանը ու ինկատի ունի գլխաւորապէս գիւղական դասակարգը, որի վերաց նոր օրէնքը խնամակալութիւն է հաստատում զեմսկի նաչալնիկ կոչող պաշտօնեաների միջոցով։

Հաշտարար դատաւորների ինստիտուտը յուլիսի 12-ի օրէնքով համարեա բոլորովին ոչնչանում է։ Ըստրողական մասնաշրջանապին հաշտարար դատաւորները մնում են միայն երկու մայրաքաղաքներում ու Յդեսայում։ այդ արտօնութիւնը կարող են ստանալ և միքանի մեծ նահանգական քաղաքներ, եթէ այդ հնարաւոր գտնի իրաւադատութեան մինիստրը, որ իւր որոշումը այդ մասին պէտք է ներկայացնի պետական խորհրդարանին (Գոսудարствենի սովետ)։ Զեմսկից ժողովները այժմ ընտրում են միայն պատւաւոր հաշտարար դատաւորներ։ Հաշտարար դատաւորներին այժմ փոխարինում են քաղաքային դատաւորները քաղաքներում և զեմսկից նաչալնիկները քաղաքներից գուրա։

Քաղաքային դատաւորները մեր հաշտարար դատարանների պէս նշանակում են և ոչ թէ ընտրուում։ նշանակում է նորանց իրաւադատութեան մինիստրը, նրանց կարող է պաշտօնանկ անել նոյն մինիստրութեան կոնսուլտացիան իւր վճռով, եթէ այդ վճիռը հաստատի մինիստրը, ուրեմն նրանք անփոփոխելի (ԱԵԾԵԽԱՅԵՄՅ) չեն՝ ինչպէս էին առաջւայ հաշտարար դատաւորները, որոնց պաշտօնանկ կարելի էր անել միայն դատաստանի ենթարկելուց յետոյն Զեմսկից նաչալնիկներից քաղաքային դատաւորները տարբերուում են ի միջի այլոց և նորանով, որ համարւում են՝ ինչպէս առաջւայ հաշտարար դատաւորները՝ իրաւադատութեան մինիստրութեան օրդան, զուտ դատաւորներ են և ոչ թէ գեմակից նաչալնիկների նման միաժամանակ կամ դատաստանական կամ էլ վարչական պաշտօնեաներ։

Անցնենք զեմսկիյ նաշալնիկներին Զեմսկիյ նահանգների ամեն մի դաւառ բաժանուում է մի քանի մասնաշրջանի. ամեն մի մասնաշրջան ունի մի պետ, մի նաշալնիկ, որ կոչում է զեմսկիյ նաշալնիկ (թէև ոչ ընտրուում է զեմստվօից, ոչ իշխանութիւն ունի նորա վերայ, ոչ էլ ոռոճիկն է նրանից ստանում): Զեմսկիյ նաշալնիկը՝ ինչպէս ասացի՝ համ դատաւոր է, համ վարչական պաշտօնեալ. դատաւոր է բոլոր դատակարգերի համար, նաշալնիկ՝ գիւղացիների համար: Զեմսկիյ նաշալնիկը չի ընտրուում, այլ նշանակուում է. նրան նշանակուում է ոչ թէ իրաւադատութեան մինխարը (ինչպէս օրինակ Կովկասի հաշտարար դատաւորին): Աւելորդ է ասել, որ զեմսկիյ նաշալնիկներին արձակելու համար անհրաժեշտ չէ նրանց դատի ենթարկել: Իբրև դատաւոր՝ զեմսկիյ նաշալնիկները իրաւասութեան աւելի սահմանափակ շրջան ունեն քան առաջւայ հաշտարար դատաւորները: Նախկին հաշտարարական հիմնարկութիւններին (հաշտարար դատարաններին ու հաշտարար դատաւորների ժողովներին) ենթակայ գործերը այժմ բաժանւած են վարչական ու դատարանական չորս օրդանի մէջ, որոնք են՝ զեմսկիյ նաշալնիկ, քաղաքացին դատաւոր, նահանգական (օքրյանայ) դատարանի դատառական անդամ և վոլոստնոյ դատարան (առաջ էլ կար, բայց այժմ իրաւասութեան շրջանը ընդարձակւած է): Իբրև դատաւոր՝ զեմսկիյ նաշալնիկները աւելի նշանակութիւն ունին ուրիշ դասակարգերին պատկանողների համար, որովհետեւ նրանց իրաւասութիւնից դուրս են զիւղացիների մէջ տեղի ունեցող վէճերը և գիւղացիների այն յանցանքները, որոնք ենթարկուում են վոլոստնոյ դատարանին, թէև այն էլ պէտք է ասել, որ նրանք անսմիջական վերահսկողութիւն ունին իրանց շրջանների բոլոր վոլոստնոյ դատարանների վերայ: Իբրև զիւղացիների նաշալնիկ՝ նոր պաշտօնեաները շատ ընդարձակ իրաւասութիւն և շատ մեծ լիազօրութիւններ ունեն Զեմսկիյ նաշալնիկների իրաւասութեանը ենթարկուում են զիւղացիների հասարակական վարչութեան բոլոր շրջանները, որով սաստիկ սահմանափակւում է զիւղական դատակարգի ինքնավարութիւնը: Եացի դրանից, ոստիկանական զիւղաւոր պաշտօնեաների՝ իսպառ աւնիկի ու ստանովոյի (համազատասխանում են մեր դաւառապետներին ու ուշագույնին՝ ողբիստաւներին) բացակայութեան ժամանակ՝

